

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ  
ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-Ի 2010/75/ԵՄ ՀՐԱՀԱՆԳ**

**Արդյունաբերական արտանետումների մասին (աղտոտման միասնական  
կանխում և վերահսկում)**

**(ԵՏՀ տարածքին առնչվող տեքստ)**

**Պաշտոնական տեղեկագիր L 334, 17.12.2010թ., էջեր 0017 - 00019**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԸ,  
հաշվի առնելով «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագիրը,  
և, մասնավորապես, դրա 192 (1) հոդվածը,

հաշվի առնելով Եվրոպական հանձնաժողովից ստացված առաջարկը,

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի  
եզրակացությունը [1],

հաշվի առնելով Տարածաշրջանային հարցերով կոմիտեի եզրակացությունը (2),

գործելով սովորական օրենսդրական ընթացակարգին համապատասխան [3],

Քանի որ

1) մի շարք էական փոփոխություններ պետք է կատարվեն «Տիտանի երկօքսիդի  
արդյունաբերության թափոնների մասին» Խորհրդի 1978 թվականի փետրվարի  
20-ի 78/176/ԵՏՀ հրահանգում [4], «Տիտանի երկօքսիդի արդյունաբերության  
թափոններից ազդեցություն կրող շրջակա միջավայրի վերահսկողության և  
դիտանցման մասին» Խորհրդի 1982 թվականի դեկտեմբերի 3-ի 82/883/ԵՏՀ  
հրահանգում [5], «Տիտանի երկօքսիդի արդյունաբերության թափոններից  
առաջացած աղտոտումը կրճատելու և վերջնական վերացնելու մասին» Խորհրդի  
1992 թվականի դեկտեմբերի 15-ի 92/112/ԵՏՀ հրահանգում [6], «Որոշակի  
գործունեության ընթացքում կամ որոշ կառուցվածքներում օրգանական  
լուծիչների օգտագործման պատճառով ցնդող օրգանական միացությունների  
արտանետումները սահմանափակելու մասին» Խորհրդի 1999 թվականի մարտի  
11-ի 1999/13/ԵՀ հրահանգում [7], «Թափոնների այրման մասին» Եվրոպական  
պառլամենտի և Խորհրդի 2000 թվականի դեկտեմբերի 4-ի 2000/76/ԵՀ  
հրահանգում [8], «Խոշոր այրման կայաններից որոշ աղտոտող նյութերի  
արտանետումները սահմանափակելու մասին» Եվրոպական պառլամենտի և  
Խորհրդի 2001 թվականի հոկտեմբերի 23-ի 2001/80/ԵՀ հրահանգում [9] և  
«Աղտոտման միասնական կանխման և վերահսկման մասին» Եվրոպական  
պառլամենտի և Խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի 2008/1/ԵՀ  
հրահանգում [10]: Այդ հրահանգները պետք է հստակության նկատառումներով  
վերամշակվեն,

2) «աղտոտողը վճարում է» և աղտոտումը կանխելու սկզբունքների համաձայն՝  
արդյունաբերական գործունեության հետևանքով առաջացող աղտոտումը  
կանխելու, նվազեցնելու և հնարավորության սահմաններում վերացնելու  
նպատակով, անհրաժեշտ է ստեղծել հիմնական արդյունաբերական

գործունեության վերահսկման միասնական շրջանակ՝ առաջնահերթություն տալով աղտոտման աղբյուրների վերահսկմանը, ապահովելով բնական ռեսուրսների արդյունավետ տնօրինումը և, անհրաժեշտության դեպքում, հաշվի առնելով տնտեսական իրավիճակն ու այն վայրի առանձնահատկությունները, որտեղ իրականացվում է տվյալ արդյունաբերական գործունեությունը.

3) մթնոլորտ, ջրային կամ հողային ռեսուրսներ կատարվող արտանետումները վերահսկելու նկատմամբ տարբեր մոտեցումները կարող են նպաստել աղտոտման անցմանը մի բնական միջավայրից մյուսը՝ շրջակա միջավայրն ամբողջությամբ պաշտպանելու փոխարեն: Հետևաբար, անհրաժեշտ է միասնական մոտեցում նախատեսել մթնոլորտ, ջրային կամ հողային ռեսուրսներ կատարվող արտանետումների կանխման ու վերահսկման, թափոնների կառավարման, էներգախնայողության և վթարների կանխման նկատմամբ: Նման մոտեցումը նաև կնպաստի Եվրոպական միությունում հավասար մրցակցային պայմանների ապահովմանը՝ համապատասխանեցնելով արդյունաբերական կառուցվածքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության ցուցանիշները.

4) անհրաժեշտ է փոփոխել արդյունաբերական կառուցվածքների մասին օրենսդրությունը՝ գործող դրույթները պարզեցնելու ու հստակեցնելու, ավելորդ վարչական պատասխանատվությունը նվազեցնելու և «Օդի աղտոտվածությանը վերաբերող հիմնարար ռազմավարության մասին» Հանձնաժողովի 2005 թվականի սեպտեմբերի 21-ի հաղորդագրության (այսուհետ՝ Օդի աղտոտվածությանը վերաբերող հիմնարար ռազմավարություն), «Հողի պահպանմանը վերաբերող հիմնարար ռազմավարության մասին» Հանձնաժողովի 2006 թվականի սեպտեմբերի 22-ի հաղորդագրության և Համայնքի բնապահպանական գործողության վեցերորդ ծրագիրը սահմանող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2002 թվականի հուլիսի 22-ի թիվ 1600/2002/ԵՀ որոշման [11] համար որպես լրացում ընդունված՝ «Թափոնների կանխմանը և վերամշակմանը վերաբերող հիմնարար ռազմավարության մասին» Հանձնաժողովի 2005 թվականի դեկտեմբերի 21-ի հաղորդագրության եզրակացությունները ներառելու համար: Այդ հաղորդագրություններում մարդու առողջության և շրջակա միջավայրի պահպանման համար այնպիսի նպատակներ են սահմանվում, որոնք չեն կարող իրականացվել առանց արդյունաբերական գործունեության հետևանքով առաջացող արտանետումները նվազեցնելու,

5) աղտոտման կանխումն ու վերահսկումն ապահովելու նպատակով յուրաքանչյուր կառուցվածք պետք է շահագործվի, եթե միայն այն թույլտվություն ունի, իսկ այն կառուցվածքների և գործունեության դեպքում, որոնց համար օգտագործվում են օրգանական լուծիչներ, եթե միայն այն թույլտվություն ունի, կամ գրանցված է.

6) անդամ պետություններին վերապահված է որոշելու կառուցվածքների օպերատորներին պարտականություններ հանձնարարելու մոտեցումը՝ պայմանով, որ ապահովվում է սույն Հրահանգի դրույթների կատարումը: Անդամ պետությունները յուրաքանչյուր կառուցվածքի մասով կարող են որոշել թույլտվությունը տրամադրել մեկ պատասխանատու օպերատորին կամ

կառուցվածքի տարբեր մասերի համար պարտականությունները բաշխել մի քանի օպերատորների միջև: Եթե գործող իրավական համակարգով նախատեսվում է մեկ պատասխանատու օպերատոր՝ յուրաքանչյուր կառուցվածքի համար, ապա անդամ պետությունները կարող են որոշել պահպանել այդ համակարգը,

7) թույլտվությունների տրամադրումը հեշտացնելու նպատակով անդամ պետությունները պետք է ընդհանուր պարտադիր կանոններում հնարավորություն ունենան պահանջներ սահմանելու կառուցվածքների որոշ տեսակների համար,

8) կարևոր է կանխել վթարներն ու պատահարները և սահմանափակել դրանց հետևանքները: Վթարների և պատահարների բնապահպանական հետևանքների համար պատասխանատվությունը կարգավորվում է համապատասխան ազգային օրենսդրությամբ և, անհրաժեշտության դեպքում, Միության այլ համապատասխան օրենսդրությամբ,

9) կանոնակարգի կրկնօրինակումից խուսափելու նպատակով Համայնքի տարածքում ջերմոցային գազերի արտահանումների քվոտաների առևտրի համակարգ սահմանող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 թվականի հոկտեմբերի 13-ի 2003/87/ԵՀ հրահանգով [12] կարգավորվող կառուցվածքի համար թույլտվությունը չպետք է ներառի այդ հրահանգի 1-ին հավելվածում նշված ջերմոցային գազերի ուղղակի արտանետումների համար **սահմանային թույլատրելի նորմա**՝ բացառությամբ, եթե անհրաժեշտ է ապահովել, որ տվյալ վայրում շրջակա միջավայրի էական աղտոտում տեղի չի ունենում, կամ այն դեպքերում, երբ կառուցվածքը ներառված չէ այդ համակարգում,

10) «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագրի (ԵՄԳՊ) 193-րդ հոդվածի համաձայն՝ սույն Հրահանգը չի խոչընդոտում անդամ պետություններին պահպանել կամ ընդունել առավել խիստ պաշտպանիչ միջոցներ, ինչպիսիք ջերմոցային գազերի արտանետումների նկատմամբ պահանջներն են՝ պայմանով, որ նման միջոցները համատեղելի են պայմանագրերի հետ, իսկ Հանձնաժողովը դրա մասին տեղեկացվել է,

11) օպերատորները պետք է ներկայացնեն թույլտվություն ստանալու՝ այնպիսի տեղեկություններ պարունակող դիմումներ, որոնք անհրաժեշտ են իրավասու մարմնին՝ թույլտվության պայմանները սահմանելու համար: Օպերատորները թույլտվության մասին դիմումները ներկայացնելիս պետք է կարողանան օգտագործել «Շրջակա միջավայրի վրա որոշ պետական և մասնավոր նախագծերի ազդեցության գնահատման մասին» Խորհրդի 1985 թվականի հունիսի 27-ի 85/337/ԵՏՀ հրահանգի [13] և «Վտանգավոր նյութերի առկայության հետևանքով խոշոր վթարների վտանգների վերահսկման մասին» Խորհրդի 1996 թվականի դեկտեմբերի 9-ի 96/82/ԵՀ հրահանգի [14] կիրառությունից բխող տեղեկությունները,

12) թույլտվության մեջ պետք է նշվեն բոլոր այն միջոցները, որոնք անհրաժեշտ են՝ ամբողջ շրջակա միջավայրի պաշտպանության բարձր մակարդակ հաստատելու և ապահովելու համար, որ կառուցվածքը շահագործվում է՝ օպերատորի հիմնական պարտավորությունները կարգավորող ընդհանուր սկզբունքների համաձայն: Թույլտվության մեջ պետք է նաև նշվեն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի նորմաները կամ համարժեք պարամետրերը, կամ տեխնիկական միջոցները, հողի ու ստորերկրյա ջրերի պահպանման

համապատասխան պահանջները, ինչպես նաև դիտանցման պահանջները: Թույլտվության պայմանները պետք է սահմանվեն լավագույն հասանելի տեխնոլոգիաների հիման վրա,

13) լավագույն հասանելի տեխնոլոգիաները որոշելու և արդյունաբերական գործունեության հետևանքով առաջացող արտանետումների մակարդակի վերաբերյալ Միությունում անհամապատասխանությունները սահմանափակելու նպատակով՝ լավագույն հասանելի տեխնոլոգիաների համար ելակետային փաստաթղթերը (այսուհետ՝ ԼՀՏ ելակետային փաստաթղթեր) պետք է կազմվեն, վերանայվեն և, անհրաժեշտության դեպքում, թարմացվեն շահագրգիռ կողմերի հետ տեղեկությունների փոխանակման և կոմիտեի ընթացակարգով ընդունված՝ ԼՀՏ ելակետային փաստաթղթերի առանցքային տարրերի միջոցով (այսուհետ՝ ԼՀՏ եզրակացություններ): Այս առումով Հանձնաժողովը պետք է կոմիտեի ընթացակարգով սահմանի տվյալների հավաքագրման, ԼՀՏ ելակետային փաստաթղթերի մշակման և դրանց որակի ապահովման ուղեցույց: ԼՀՏ եզրակացությունները պետք է օգտագործվեն որպես հղում՝ թույլտվության պայմանները սահմանելու համար: Դրանք կարող են հավելվել այլ աղբյուրներով: Հանձնաժողովը պետք է փորձի թարմացնել ԼՀՏ ելակետային փաստաթղթերը ոչ ուշ, քան նախորդ տարբերակի հրապարակումից 8 տարի հետո,

14) բարձրորակ ԼՀՏ ելակետային փաստաթղթերից բխող տեղեկությունների արդյունավետ և ակտիվ փոխանակում ապահովելու նպատակով Հանձնաժողովը պետք է ստեղծի համաժողով, որը թափանցիկ է գործում: Պետք է սահմանվեն տեղեկությունների փոխանակման և ԼՀՏ ելակետային փաստաթղթերի հասանելիության գործնական միջոցառումներ՝ մասնավորապես ապահովելու համար, որ անդամ պետությունները և շահագրգիռ կողմերը տրամադրեն բավարար որակի և քանակությամբ տվյալներ՝ հիմնվելով սահմանված ուղեցույցի վրա՝ լավագույն հասանելի տեխնոլոգիաների և նոր տեխնոլոգիաների որոշումն ապահովելու համար,

15) կարևոր է իրավասու մարմիններին տրամադրել բավարար ազատություն՝ այնպիսի թույլատրելի սահմանային քանակություններ սահմանելու համար, որոնք ապահովում են, որ շահագործման նորմալ պայմաններում արտանետումները չեն գերազանցում այն մակարդակները, որոնք հատուկ են լավագույն հասանելի տեխնոլոգիաներին: Այս նպատակով իրավասու մարմինը կարող է սահմանել արտանետումների այնպիսի սահմանային թույլատրելի քանակություններ, որոնք տարբերվում են լավագույն հասանելի տեխնոլոգիաներին հատուկ արտանետումների մակարդակներից՝ կապված կիրառվող արժեքների, ժամկետների և ելակետային պայմանների հետ, եթե արտանետումների դիտանցման արդյունքների միջոցով կհաստատվի, որ արտանետումները չեն գերազանցել լավագույն հասանելի տեխնոլոգիաներին հատուկ արտանետումների մակարդակները: Թույլտվություններով սահմանված թույլատրելի սահմանային քանակություններին համապատասխանության արդյունքում արտանետումներն այդ սահմանային թույլատրելի քանակություններից պակաս են լինում:

16) հաշվի առնելու համար այն որոշ առանձնահատուկ հանգամանքները, որոնց դեպքում լավագույն հասանելի տեխնոլոգիաներին հատուկ արտանետումների

մակարդակների կիրառումը կհանգեցնի անհամաչափորեն մեծ ծախսերի՝ շրջակա միջավայրի համար առկա օգուտների հետ համեմատած, իրավասու մարմինները պետք է կարողանան սահմանել արտանետումների այնպիսի թույլատրելի սահմանային քանակություններ, որոնք շեղվում են այդ մակարդակներից: Նման շեղումները պետք է հիմնված լինեն գնահատման վրա՝ հաշվի առնելով հստակ սահմանված չափորոշիչները: Սույն Հրահանգով սահմանված թույլատրելի սահմանային քանակությունները չպետք է գերազանցվեն: Շրջակա միջավայրն ամեն դեպքում չպետք է զգալիորեն աղտոտվի, և ամբողջ շրջակա միջավայրի պաշտպանության բարձր մակարդակ պետք է ապահովվի,

17) որպեսզի օպերատորները կարողանան փորձարկել այն նոր տեխնոլոգիաները, որոնք կարող են ապահովել շրջակա միջավայրի պաշտպանության ավելի բարձր մակարդակ, կամ առնվազն շրջակա միջավայրի պաշտպանության նույն մակարդակը և ծախսերի ավելի մեծ տնտեսում, քան շահագործվող լավագույն հասանելի տեխնոլոգիաները, իրավասու մարմինը պետք է կարողանա թույլ տալ ժամանակավոր շեղումներ լավագույն հասանելի տեխնոլոգիաներին հատուկ արտանետումների մակարդակներից,

Կառուցվածքի փոփոխությունները կարող են աղտոտման ավելի բարձր մակարդակների հանգեցնել: Օպերատորները պետք է տեղեկացնեն իրավասու մարմինն նախատեսված ցանկացած այն փոփոխության մասին, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա: Կառուցվածքի էական փոփոխությունները, որոնք կարող են զգալի բացասական ազդեցություններ ունենալ մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա, չպետք է կատարվեն առանց սույն Հրահանգի համաձայն տրամադրված թույլտվության,

19) գոմաղբի տարածումը նպաստում է օդը և ջրային ռեսուրսներն աղտոտող նյութերի զգալի արտանետումներին: Նպատակ ունենալով իրականացնելու «Օդի աղտոտման մասին» հիմնարար ռազմավարությամբ և ջրի պահպանման մասին Միության օրենսդրությամբ սահմանված նպատակները՝ Հանձնաժողովը պետք է վերանայի այս արտանետումների ամենահամապատասխան վերահսկողության միջոցներ սահմանելու անհրաժեշտությունը լավագույն հասանելի տեխնոլոգիաների կիրառման միջոցով,

20) թռչունների և խոշոր եղջերավոր կենդանիների ինտենսիվ բուծումը զգալիորեն նպաստում է օդը և ջրային ռեսուրսներն աղտոտող նյութերի արտանետումներին: Նպատակ ունենալով իրականացնելու Օդի աղտոտման մասին հիմնարար ռազմավարությամբ և ջրի պահպանման մասին Միության օրենսդրությամբ սահմանված նպատակները՝ Հանձնաժողովը պետք է վերանայի թռչնի տարբեր տեսակների արտադրության տարբերակված շեմեր՝ սույն Հրահանգի շրջանակը սահմանելու և խոշոր եղջերավոր կենդանիների բուծման կառուցվածքներից կատարվող արտանետումների ամենահամապատասխան վերահսկողության միջոցները սահմանելու անհրաժեշտությունը վերանայելու համար,

21) լավագույն հասանելի տեխնոլոգիաների կատարելագործումը կամ կառուցվածքի մյուս փոփոխությունները հաշվի առնելու համար՝ թույլտվության պայմանները պետք է կանոնավորապես վերանայվեն և, անհրաժեշտության

դեպքում, թարմացվեն՝ մասնավորապես, եթե ընդունվում են նոր կամ թարմացված ՀՀՏ եզրակացություններ,

22) մասնավոր դեպքերում, երբ թույլտվության վերանայման և թարմացման արդյունքում պարզվում է, որ կարող է անհրաժեշտ լինել ավելի քան չորս տարի՝ ՀՀՏ եզրակացությունների մասին որոշման հրապարակումից հետո լավագույն հասանելի տեխնոլոգիաները ներդնելու համար, իրավասու մարմինները կարող են թույլտվության պայմաններում սահմանել ավելի երկար ժամկետ, եթե դա արդարացված է՝ հիմնվելով սույն Հրահանգով սահմանված չափորոշիչների վրա,

23) անհրաժեշտ է ապահովել, որ կառուցվածքի շահագործումը չհանգեցնի հողի և ստորերկրյա ջրերի որակի վատթարացմանը: Թույլտվության պայմանները, հետևաբար, պետք է ներառեն բոլոր անհրաժեշտ միջոցները՝ հողային ռեսուրսներ և ստորերկրյա ջրեր կատարվող արտանետումները կանխելու համար, ինչպես նաև այդ միջոցների կանոնավոր վերահսկողություն՝ սարքավորման օգտագործման և պահեստավորման ժամանակ տեղի ունեցող արտահոսքից, վթարներից կամ պատահարներից խուսափելու համար: Հողի և ստորերկրյա ջրերի աղտոտումը վաղ փուլում հայտնաբերելու և, անհրաժեշտության դեպքում, աղտոտման տարածումից առաջ համապատասխան վերականգնողական միջոցներ ձեռնարկելու համար անհրաժեշտ է նաև վտանգավոր նյութերի հայտնաբերման նպատակով հողի և ստորերկրյա ջրերի դիտանցում: Դիտանցման հաճախականությունը որոշելիս հնարավոր է հաշվի առնել կանխարգելիչ միջոցառումների տեսակը և դրանց վերահսկողության ծավալն ու հաճախությունը:

24) ապահովելու համար, որ կառուցվածքի շահագործումը չի վատթարացնում հողի և ստորերկրյա ջրերի որակը, անհրաժեշտ է նախնական զեկույցի միջոցով որոշել հողի և ստորերկրյա ջրերի աղտոտման աստիճանը: Նախնական զեկույցը պետք է գործնական մի միջոց լինի, որը հնարավորության սահմաններում թույլ է տալիս կատարել քանակական համեմատություն տեղանքի՝ այդ զեկույցում նկարագրված վիճակի և գործունեության վերջնական դադարեցման ժամանակ տեղանքում տիրող վիճակի միջև՝ պարզելու համար, թե արդյոք հողի կամ ստորերկրյա ջրերի աղտոտումը զգալիորեն ավելացել է: Նախնական զեկույցը պետք է, հետևաբար, տեղեկություններ պարունակի հողի և ստորերկրյա ջրերի չափումների վերաբերյալ առկա տվյալների ու այդ վայրի նախկին օգտագործման վերաբերյալ պատմական տվյալների մասին:

25) «աղտոտողը վճարում է» սկզբունքի համաձայն՝ օպերատորի կողմից հողը և ստորերկրյա ջրերն աղտոտելու մակարդակը որոշելիս, որի հետևանքով օպերատորը կպարտավորվեր վերականգնել վայրի՝ նախնական զեկույցում նկարագրված վիճակը, անդամ պետությունները պետք է հաշվի առնեն թույլտվության այն պայմանները, որոնք կիրառվել են համապատասխան գործունեության իրականացման ամբողջ ընթացքում, ինչպես նաև կառուցվածքի համար ընդունված աղտոտման կանխման միջոցները և աղտոտման հարաբերական ավելացումը՝ համեմատած նախնական զեկույցում նշված աղտոտման մակարդակի հետ: Ոչ օպերատորի գործունեության հետևանքով առաջացած աղտոտման համար պատասխանատվությունը կարգավորվում է

համապատասխան ազգային օրենսդրությամբ և, անհրաժեշտության դեպքում, Միության այլ համապատասխան օրենսդրությամբ,

26) սույն Հրահանգի արդյունավետ իրականացումն ու կիրարկումն ապահովելու համար օպերատորները թույլտվության պայմանները բավարարելու մասին պետք է կանոնավորապես զեկուցեն իրավասու մարմնին: Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ օպերատորը և իրավասու մարմինը ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ՝ սույն Հրահանգի դրույթները չկատարելու դեպքում, ինչպես նաև նախատեսում են բնապահպանական տեսչական ստուգումների համակարգ: Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ կա բավարար թվով անձնակազմ, որն ունի այդ ստուգումներն արդյունավետորեն իրականացնելու համար անհրաժեշտ հմտություններն ու որակավորումները,

27) «Շրջակա միջավայրի հետ կապված հարցերում տեղեկությունների մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» Օրիուսի կոնվենցիայի [15] համաձայն՝ որոշումների ընդունման գործընթացին հասարակության ակտիվ մասնակցությունն անհրաժեշտ է, որպեսզի հասարակությունը կարողանա արտահայտել, իսկ որոշում կայացնողները՝ ընդունել կարծիքներ և դիտողություններ, որոնք կարող են կարևոր լինել այդ որոշումների համար, դրանով իսկ մեծացնելով որոշումների ընդունման գործընթացի հաշվետվողականությունն ու թափանցիկությունը և նպաստելով բնապահպանական խնդիրների մասին հանրության իրազեկմանն ու ընդունված որոշումների աջակցությանը: Շահագրգիռ հասարակության անդամներին պետք է հասանելի լինի արդարադատությունը՝ մարդու առողջության և բարեկեցության համար նպաստավոր շրջակա միջավայրում ապրելու իրավունքի պաշտպանությանը նպաստելու համար,

28) վառելիքի այրումն այնպիսի կառուցվածքներում, որոնց ընդհանուր նոմինալ քերմային հզորությունը 50 ՄվՏ-ից պակաս է, էականորեն նպաստում է օդն աղտոտող նյութերի արտանետմանը: Նպատակ ունենալով իրականացնելու Օդի աղտոտման մասին հիմնարար ռազմավարությամբ սահմանված նպատակները՝ Հանձնաժողովը պետք է վերանայի նման կառուցվածքներից կատարվող արտանետումների ամենահամապատասխան վերահսկողության միջոցները սահմանելու անհրաժեշտությունը: Այդ վերանայման համար պետք է հաշվի առնվեն առողջապահական օբյեկտներում օգտագործվող այրման սարքավորումների առանձնահատկությունները՝ մասնավորապես հաշվի առնելով դրանց բացառիկ կիրառումն արտակարգ իրավիճակների դեպքում:

29) այրման խոշոր կայանները մեծապես նպաստում են օդն աղտոտող նյութերի արտանետմանը՝ էական ազդեցություն ունենալով մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա: Այդ ազդեցությունը նվազեցնելու և «Որոշ մթնոլորտային աղտոտիչների արտանետումների ազգային սահմանաքանակների մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2001 թվականի հոկտեմբերի 23-ի 2001/81/ԵՀ հրահանգի [16] պահանջները բավարարելու ուղղությամբ աշխատելու և Օդի աղտոտման մասին հիմնարար ռազմավարությամբ սահմանված նպատակներն իրականացնելու նպատակով անհրաժեշտ է այրման կայանների ու աղտոտիչների որոշ տեսակների համար

Միության մակարդակով սահմանել առավել խիստ սահմանային թույլատրելի քանակություններ,

30) Հանձնաժողովը պետք է վերանայի ամբողջ Միության համար արտանետումների սահմանային թույլատրելի քանակություններ սահմանելու և որոշ այրման խոշոր կայանների համար 5-րդ հավելվածով նշված արտանետումների սահմանային թույլատրելի քանակությունները փոփոխելու անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով համապատասխան L<S ելակետային փաստաթղթերի վերանայումն ու թարմացումը: Այս համատեքստում Հանձնաժողովը պետք է հաշվի առնի վերամշակման գործարանների էներգետիկ համակարգերի առանձնահատկությունը,

31) հաշվի առնելով որոշ բնական պինդ վառելիքների առանձնահատկությունները՝ առավել նպատակահարմար է նման վառելիքներ արտանետող այրման գործարանների համար ծծմբի երկօքսիդի արտանետումների սահմանային թույլատրելի քանակությունների փոխարեն կիրառել նվազագույն ծծմբազերծման գործակիցներ: Ավելին, քանի որ այրվող թերթաքարի որոշ առանձնահատկություններ կարող են անհնար դարձնել ծծմբի նվազեցման նույն տեխնոլոգիաների կիրառումը կամ ծծմբազերծման նույն արդյունավետության ապահովումը, ապա այս վառելիքն օգտագործող գործարանների համար նպատակահարմար է սահմանել նվազագույն ծծմբազերծման փոքր-ինչ ավելի ցածր գործակից,

32) լուրջ պակասության հետևանքով ծծմբի ցածր պարունակությամբ վառելիքի կամ գազի մատակարարման հանկարծակի ընդհատման դեպքում իրավասու մարմինը պետք է կարողանա ժամանակավոր շեղումներ թույլատրել՝ հնարավորություն տալով, որ համապատասխան այրման գործարաններից կատարվող արտանետումները գերազանցեն սույն Հրահանգով սահմանված՝ սահմանային թույլատրելի քանակությունները,

33) համապատասխան օպերատորը չպետք է շահագործի այրման գործարանն ավելի քան 24 ժամ արտանետումների նվազեցման սարքավորման անսարքության կամ փչանալու դեպքում, և առանց արտանետումների նվազեցման շահագործումը չպետք է գերազանցի 120 ժամը 12 ամսվա ժամանակահատվածում՝ շրջակա միջավայրի վրա աղտոտման բացասական ազդեցությունները սահմանափակելու նպատակով: Այնուամենայնիվ, եթե էլեկտրաէներգիայի մատակարարման սուղ կարիք կա կամ անհրաժեշտ է խուսափել մեկ այլ այրման գործարանի շահագործման հետևանքով առաջացող արտանետումների ընդհանուր աճից, ապա իրավասու մարմինները կարող են շեղումներ թույլատրել այդ ժամկետներից,

34) շրջակա միջավայրի և մարդու առողջության պահպանման բարձր մակարդակ ապահովելու և թափոնների՝ դեպի առավել մեղմ բնապահպանական չափանիշներով շահագործվող գործարաններ անդրսահմանային տեղաշարժից խուսափելու համար անհրաժեշտ է սահմանել և կիրառել շահագործման խիստ պայմաններ, տեխնիկական պահանջներ և արտանետումների սահմանային թույլատրելի քանակություններ այն գործարանների համար, որոնք Միության տարածքում թափոններ են այրում կամ թափոններն օգտագործում են որպես հումք,



35) որոշ գործունեության ընթացքում կամ կառուցվածքներում օրգանական լուծիչների օգտագործումը հանգեցնում է օրգանական միացությունները օդ արտանետելուն, որը նպաստում է ֆոտոքիմիական օքսիդիչների տեղական և անդրսահմանային գոյացմանը, ինչը վնաս է հասցնում ազգային պաշարներին ու վնասակար ազդեցություն ունի մարդու առողջության վրա: Հետևաբար, անհրաժեշտ է օրգանական լուծիչների օգտագործման դեմ ձեռնարկել կանխարգելիչ գործողություններ և օրգանական միացությունների արտանետումների սահմանային թույլատրելի քանակություններ ու շահագործման որոշակի պայմաններ կիրառելու պահանջ սահմանել: Օպերատորներին պետք է թույլատրվի կիրառել արտանետումների նվազեցման սխեման՝ սույն Հրահանգով սահմանված սահմանային թույլատրելի քանակությունների փոխարեն, եթե այլ միջոցառումներ, ինչպիսիք են լուծիչների ցածր պարունակությամբ կամ առանց լուծիչների արտադրանքների կամ տեխնոլոգիաների օգտագործումը, ապահովում են այլընտրանքային միջոցներ՝ արտանետումների համարժեք նվազեցում ապահովելու համար,

36) տիտանի երկօքսիդ արտանետող կառուցվածքները կարող են էականորեն ավելացնել օդ և ջուր կատարվող արտանետումները: Այս ազդեցությունները նվազեցնելու նպատակով անհրաժեշտ է Միության մակարդակով որոշ աղտոտող նյութերի համար սահմանել առավել խիստ սահմանային թույլատրելի քանակություններ,

37) հաշվի առնելով սույն Հրահանգի դրույթները կատարելու համար ընդունված ազգային օրենսդրության, կանոնակարգերի և վարչական դրույթների շրջանակ այրման միջոցով կերամիկական ապրանքների արտադրության կառուցվածքների ներառումը, հիմնվելով ազգային արտադրական սեկտորի առանձնահատկությունների վրա և շրջանակի հստակ մեկնաբանում տալու նպատակով՝ անդամ պետությունները պետք է որոշեն, թե արդյոք պետք է կիրառվի երկու չափորոշիչ՝ արտադրողականությունը և վառարանի ծավալը միասին, թե այդ երկու չափորոշիչից միայն մեկը,

38) Հանձնաժողովը հաշվետվությունները ներկայացնելը պարզեցնելու և անհարկի վարչական պատասխանատվությունը նվազեցնելու նպատակով պետք է մեթոդներ սահմանի՝ դյուրացնելու համար սույն Հրահանգի համաձայն, Միության օրենսդրության, մասնավորապես՝ «Աղտոտիչների արտանետումների ու տեղափոխման գրանցամատյանի մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2006 թվականի հունվարի 18-ի թիվ 166/2006 Կանոնակարգի (ԵՀ) համաձայն տվյալները տրամադրելու եղանակը,

39) կիրարկման միասնական պահանջներ ապահովելու նպատակով պետք է Հանձնաժողովին շնորհվեն կիրարկող լիազորություններ՝ տվյալների հավաքագրման, ԼՀՏ ելակետային փաստաթղթերի կազմման ու դրանց որակի ապահովման, այդ թվում՝ դրանց բովանդակությունն ու ձևաչափի նպատակահարմարության համար ուղեցույց ընդունելու, ԼՀՏ եզրակացությունների վերաբերյալ որոշումներ ընդունելու և այրման խոշոր կայանների համար գործարկման կամ պարապորդի ժամկետներն ու անցումային ազգային պլանները որոշելու մանրամասն կանոններ ընդունելու համար, ինչպես նաև սահմանելու այն տեղեկությունների տեսակը, ձևաչափը և

հաճախականությունը, որոնք անդամ պետությունները պետք է տրամադրեն Հանձնաժողովին: 39) ԵՄԳՊ 291-րդ հոդվածի համաձայն՝ անդամ պետությունների կողմից Հանձնաժողովի կիրարկող լիազորությունների վերահսկման մեխանիզմների կանոններն ու ընդհանուր սկզբունքները պետք է սահմանվեն նախօրոք՝ սովորական օրենսդրական ընթացակարգի համաձայն ընդունված կանոնակարգի միջոցով: Մինչև այդ նոր կանոնակարգի ընդունումը՝ շարունակում է կիրառվել Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգերը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի 1999/468/ԵՀ որոշումը՝ բացառությամբ ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգի, որը չի կիրառվում,

40) Հանձնաժողովը պետք է լիազորված լինի ԵՄԳՊ 290-րդ հոդվածի համաձայն ընդունել պատվիրակված ակտեր՝ կապված ծանր մետաղների և դիօքսինի ու ֆուրանի՝ մթնոլորտ արտանետումների շարունակական չափումների իրականացման մեկնարկի ժամկետները սահմանելու և 5-րդ, 6-րդ ու 7-րդ հավելվածները գիտական ու տեխնիկական առաջընթացին համապատասխանեցնելու մասին: Այդպիսի գործարանների և աղբը որպես հումք օգտագործող գործարանների դեպքում դա կարող է ընդգրկել, մասնավորապես, չափորոշիչների սահմանում՝ նախատեսելով շեղումներ փոշու ընդհանուր արտանետումների շարունակական դիտանցումից: Հատկապես կարևոր է, որ Հանձնաժողովը նախապատրաստական աշխատանքների ընթացքում անցկացնի համապատասխան խորհրդակցություններ, այդ թվում՝ փորձագիտական մակարդակով,

41) շրջակա միջավայրի զգալի աղտոտման խնդիրը լուծելու նպատակով Հանձնաժողովը, հիմնվելով որոշ գործունեության ընթացքում լավագույն հասանելի տեխնոլոգիաների կիրառման կամ ամբողջ շրջակա միջավայրի վրա այդ գործունեության ազդեցության գնահատման վրա, պետք է առաջարկներ ներկայացնի ամբողջ Միության համար արտանետումների սահմանային թույլատրելի քանակությունների և դիտանցման ու համապատասխանության կանոնների համար նվազագույն պահանջների վերաբերյալ,

42) անդամ պետությունները պետք է կանոններ սահմանեն այն պատժամիջոցների վերաբերյալ, որոնք կիրառելի են սույն Հրահանգի համաձայն ընդունված ազգային դրույթների խախտումների նկատմամբ, և ապահովեն այդ պատժամիջոցների իրականացումը: Այդ պատժամիջոցները պետք է լինեն արդյունավետ, համարժեք և տարհամոզիչ,

43) գործող կառուցվածքներին՝ սույն Հրահանգով սահմանված նոր պահանջներին տեխնիկապես համապատասխանելու բավարար ժամանակ տրամադրելու նպատակով՝ որոշ նոր պահանջներ պետք է կիրառվեն այդ կառուցվածքների նկատմամբ սույն Հրահանգի կիրառման պահից որոշակի ամրագրված ժամանակահատվածից հետո: Այդպիսի գործարաններին անհրաժեշտ է բավարար ժամանակ՝ 5-րդ հավելվածով սահմանված սահմանային թույլատրելի քանակություններն ապահովելու նպատակով արտանետումների նվազեցման միջոցները ներդնելու համար,

44) քանի որ սույն Հրահանգով սահմանված նպատակները, մասնավորապես՝ շրջակա միջավայրի պահպանման բարձր մակարդակի ապահովումը և շրջակա

միջավայրի որակի բարելավումը, չեն կարող բավարար չափով իրագործվել անդամ պետությունների կողմից, և գործողության մասշտաբի պատճառով կարող են առավել արդյունավետորեն իրագործվել Համայնքի մակարդակով, ապա Համայնքը կարող է միջոցներ ընդունել՝ Համաձայնագրի 5-րդ հոդվածով նախատեսված սուբսիդիարության սկզբունքի համաձայն: Այդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքին համապատասխան՝ սույն Հրահանգը չի գերազանցում այդ նպատակների իրականացման համար անհրաժեշտ շրջանակը,

45) Սույն Հրահանգով հարգվում են Եվրոպական միության հիմնարար իրավունքների մասին խարտիայով ճանաչված հիմնարար իրավունքները և սկզբունքները: Սույն Հրահանգը, մասնավորապես, նպատակ ունի նպաստելու այդ խարտիայի 37-րդ հոդվածի կիրառմանը,

46) ազգային իրավունքում սույն Հրահանգը փոխատեղելու պարտավորությունը տարածվում է դրա այն դրույթների վրա, որոնք նախորդ հրահանգների համեմատությամբ էապես տարբեր նորմեր են սահմանում: Չփոփոխված դրույթները փոխատեղելու պարտավորությունը սահմանված է ավելի վաղ ընդունված հրահանգներով,

47) «Բարելավված օրինաստեղծ գործունեության մասին» միջինստիտուցիոնալ համաձայնագրի [19] 34-րդ պարբերության համաձայն խրախուսվում է, որ անդամ պետությունները, իրենց և Համայնքի շահերից ելնելով, կազմեն սույն Հրահանգի ու փոխատեղման միջոցների համեմատական աղյուսակներ և հրապարակեն դրանք,

48) սույն Հրահանգը չպետք է հակասի 9-րդ հավելվածի Բ մասով սահմանված՝ հրահանգները ազգային իրավունքում փոխատեղելու և դրանք կիրառելու ժամկետների վերաբերյալ անդամ պետությունների պարտավորություններին,  
**ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.**

**ԳԼՈՒԽ I**

## **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

**Հոդված 1**

### **Կարգավորման առարկան**

Սույն Հրահանգով սահմանվում է արդյունաբերական գործունեության հետևանքով առաջացող աղտոտման միասնական կանխման և վերահսկման սկզբունքները:

Այն նաև սահմանում է այնպիսի կանոններ, որոնք նախատեսված են օդ, ջրային և հողային ռեսուրսներ կատարվող արտանետումների կանխման, իսկ եթե դա հնարավոր չէ, նվազեցման համար՝ ամբողջ շրջակա միջավայրի պաշտպանության բարձր մակարդակ ապահովելու նպատակով:

## Հոդված 2

### Շրջանակը

1. Սույն Հրահանգը կիրառվում է այն արդյունաբերական գործունեության նկատմամբ, որի հետևանքով առաջանում է 2-6-րդ գլուխներում նշված աղտոտումը:

2. Սույն Հրահանգը չի կիրառվում հետազոտական գործունեության, զարգացմանն ուղղված գործունեության կամ նոր արտադրանքների կամ գործընթացների փորձարկման նկատմամբ:

## Հոդված 3

### Սահմանումները

Սույն Հրահանգի նպատակներով կիրառվում են հետևյալ հասկացությունները՝

1) «նյութ» նշանակում է ցանկացած քիմիական տարր և դրա միացությունները՝ բացառությամբ հետևյալ նյութերի՝

ա) «Իոնացնող ճառագայթումից առաջացող վտանգների դեմ աշխատողների և հասարակության առողջության պաշտպանության համար անվտանգության հիմնական ստանդարտներ սահմանելու մասին» Խորհրդի 1996 թվականի մայիսի 13-ի 96/29/Եվրատոմ հրահանգով [20] կարգավորվող ռադիոակտիվ նյութերի.

բ) Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 թվականի մայիսի 6-ի «Գենետիկորեն փոփոխված օրգանիզմների սահմանափակ օգտագործման մասին» 2009/41/ԵՀ հրահանգի [21] 2(բ) հոդվածով սահմանված՝ գենետիկորեն փոփոխված միկրոօրգանիզմների

գ) «Գենետիկորեն փոփոխված օրգանիզմները շրջակա միջավայր կանխամտածված արտանետելու մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2001 թվականի մարտի 12-ի 2001/18/ԵՀ հրահանգի [22] 2-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված՝ գենետիկորեն փոփոխված օրգանիզմների.

2) «աղտոտում» նշանակում է մարդու գործունեության հետևանքով նյութերի, տատանումների, տաքության կամ աղմուկի ուղղակի կամ անուղղակի ներմուծում մթնոլորտ, ջրային կամ հողային ռեսուրսներ, որը կարող է վնասակար լինել մարդու առողջության կամ շրջակա միջավայրի որակի համար, վնաս հասցնել նյութական գույքին կամ որոշակի ազդեցություն ունենալ գեղագիտական արժեքների և շրջակա միջավայրի այլ օրինական կիրառությունների վրա.

3) «կառուցվածք» նշանակում է արտանետումների, արտահոսքերի, թափոնների և այլ բացասական ներգործությունների միջոցով շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող անշարժ տեխնիկական օբյեկտ, որտեղ իրականացվում են 1-ին հավելվածում նշված գործունեությունների մեկ կամ մի քանի տեսակներ և ցանկացած այլ դրանց հետ կապված գործունեության տեսակներ, որոնք տեխնիկապես միացված են տվյալ օբյեկտում իրականացվող

գործունեությանը, և որոնք կարող են ազդեցություն ունենալ արտանետումների ու աղտոտման վրա.

4) «արտանետում» նշանակում է կառուցվածքի կետային կամ ցրված աղբյուրներից նյութերի, տատանումների, տաքության կամ աղմուկի ուղղակի կամ ոչ անուղղակի ներմուծում մթնոլորտ, ջրային կամ հողային ռեսուրսներ.

5) «արտանետումների սահմանային թույլատրելի քանակություններ» նշանակում է որոշակի պարամետրերով արտահայտված զանգված, արտանետումների կոնցենտրացիա և (կամ) մակարդակ, որոնք չի թույլատրվում գերազանցել մեկ կամ մի քանի ժամկետների ընթացքում.

6) «շրջակա միջավայրի որակի չափանիշ» նշանակում է այնպիսի պահանջներ, որոնց պետք է որոշակի ժամանակ համապատասխանի տվյալ շրջակա միջավայրը կամ դրա մի մասը՝ Միության օրենսդրության համաձայն.

7) «թույլտվություն» նշանակում է կառուցվածքը կամ այրման կայանը, աղբի այրման գործարանը կամ աղբը որպես հումք օգտագործող կայանն ամբողջությամբ կամ մասամբ շահագործելու գրավոր թույլտվություն.

8) «ընդհանուր պարտադիր կանոններ» նշանակում է արտանետումների սահմանային թույլատրելի քանակություններ կամ այլ պայմաններ, նվազագույնը՝ ոլորտի մակարդակով, որոնք ընդունվում են՝ ուղղակիորեն թույլտվության պայմանները սահմանելու համար օգտագործման նպատակով.

9) «էական փոփոխություն» նշանակում է կառուցվածքի կամ այրման կայանի, աղբի այրման գործարանի կամ աղբը որպես հումք օգտագործող գործարանի բնույթի կամ շահագործման փոփոխություն կամ ընդարձակում, որը կարող է զգալի բացասական ազդեցություններ ունենալ մարդու առողջության կամ շրջակա միջավայրի վրա.

10) «լավագույն հասանելի տեխնոլոգիաներ» նշանակում է որոշակի գործունեության և այդ գործունեության իրականացման մեթոդների զարգացման ամենաարդյունավետ և ամենակատարելագործված փուլը, որով նշվում է որևէ տեխնոլոգիայի գործնական համապատասխանությունը արտանետումների սահմանային թույլատրելի քանակություններին և թույլտվության մյուս այն պայմաններին հիմք ծառայելու համար, որոնք նախատեսված են կանխելու, իսկ այն դեպքերում, երբ դա հնարավոր չէ, նվազեցնելու արտանետումներն ու դրանց ազդեցությունն ամբողջ շրջակա միջավայրի վրա.

ա) «տեխնոլոգիաները» ներառում են և՛ օգտագործվող տեխնոլոգիան, և՛ ձեռնարկության նախագծման, պատրաստման, պահպանման, շահագործման ու շահագործման դադարեցման եղանակը.

բ) «հասանելի տեխնոլոգիաներ» նշանակում է այն տեխնոլոգիան, որն արտադրված է այնպիսի ծավալներով, որի դեպքում հնարավոր է դրա շահագործումը համապատասխան արդյունաբերական սեկտորում տնտեսապես և տեխնիկապես իրագործելի պայմաններում՝ հաշվի առնելով ծախսերը և եկամուտները, և անկախ այն հանգամանքից՝ տեխնոլոգիան օգտագործվում է, թե արտադրվում տվյալ անդամ պետության տարածքում, քանի դեռ այն համապատասխան պայմաններով հասանելի է օպերատորին:

գ) «լավագույն» նշանակում է ամենարդյունավետը՝ շրջակա միջավայրի ամբողջական պաշտպանության բարձր մակարդակ ապահովելու համար:

11) «ԼՀՏ ելակետային փաստաթուղթ» նշանակում է 13-րդ հոդվածի համաձայն կազմակերպված՝ տեղեկությունների փոխանակումից բխող փաստաթուղթ, որը կազմվում է որոշակի գործունեության համար և, մասնավորապես, նկարագրում է կիրառվող տեխնոլոգիաները, արտանետումների և սպառման ներկա մակարդակները, այն մեթոդները, որոնք օգտագործվում են՝ լավագույն հասանելի տեխնոլոգիաները սահմանելու համար, ինչպես նաև ԼՀՏ եզրակացություններն ու ցանկացած նոր տեխնոլոգիա՝ մասնավորապես հաշվի առնելով 3-րդ հավելվածում նշված չափորոշիչները:

12) «ԼՀՏ եզրակացություններ» նշանակում է այնպիսի փաստաթուղթ, որը պարունակում է ԼՀՏ ելակետային փաստաթղթի այն մասերը, որոնցում սահմանվում են լավագույն հասանելի տեխնոլոգիաների մասին եզրակացությունները, դրանց նկարագրությունը, դրանց կիրառումը գնահատելու համար տեղեկությունները, լավագույն հասանելի տեխնոլոգիաների օգտագործման ժամանակ կատարվող արտանետումների մակարդակները, դրանց դիտանցումը, սպառման մակարդակները և, անհրաժեշտության դեպքում, տեղանքի վերականգնման համապատասխան միջոցները:

13) «լավագույն հասանելի տեխնոլոգիաներին հատուկ արտանետումների մակարդակներ» նշանակում է արտանետումների այն մակարդակներ, որոնք ԼՀՏ եզրակացությունների նկարագրության համաձայն օգտագործման դեպքում ապահովվում են շահագործման բնականոն պայմաններում լավագույն հասանելի որևէ տեխնոլոգիա կամ լավագույն հասանելի մի քանի տեխնոլոգիաներ, որն արտահայտում է տվյալ ժամանակահատվածի միջին արտանետումները՝ սահմանված ելակետային պայմանների համաձայն:

14) «նոր տեխնոլոգիա» նշանակում է արդյունաբերական գործունեության համար նախատեսված որևէ նոր տեխնոլոգիա, որը կոմերցիոն զարգացման դեպքում կարող է ապահովել կա՛մ շրջակա միջավայրի պահպանման ավելի բարձր մակարդակ, կա՛մ առնվազն շրջակա միջավայրի պահպանման նույն մակարդակը, բայց ծախսերի ավելի մեծ խնայողությամբ, քան օգտագործվող լավագույն հասանելի տեխնոլոգիաները:

15) «օպերատոր» նշանակում է ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ով ամբողջությամբ կամ մասամբ շահագործում, կամ վերահսկում է որևէ կառուցվածք կամ այրման կայան, աղբի այրման գործարան, կամ աղբը որպես վառելիք, կամ հումք օգտագործող այրման գործարան, կամ ազգային օրենսդրությամբ նախատեսված լինելու դեպքում՝ ում տրվել է կառուցվածքի կամ գործարանի տեխնիկական շահագործման բացառիկ տնտեսական լիազորություն.

16) «հասարակություն» նշանակում է մեկ կամ ավելի ֆիզիկական կամ իրավաբանական անձինք և, ազգային օրենսդրության կամ պրակտիկայի համաձայն, նրանց խմբավորումները, կազմակերպությունները կամ խմբերը.

17) «շահագրգիռ հասարակություն» նշանակում է այն հասարակությունը, որի վրա ազդել է կամ կարող է ազդել թույլտվություն տրամադրելու կամ այն թարմացնելու կամ թույլտվության պայմանները սահմանելու կամ թարմացնելու մասին որոշումների ընդունումը, կամ որը հետաքրքրված է դրանով. սույն սահմանման նպատակներով՝ շրջակա միջավայրի պաշտպանությունը խթանող և ազգային օրենսդրության պահանջները բավարարող կազմակերպությունները համարվում են շահագրգիռ

18) «վտանգավոր նյութեր» նշանակում է նյութեր կամ խառնուրդներ՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի «Նյութերի և խառնուրդների դասակարգման, պիտակավորման ու փաթեթավորման մասին» թիվ 1272/2008 կանոնակարգի (ԵՀ) 3-րդ հոդվածի համաձայն (18).

19) «նախնական զեկույց» նշանակում է համապատասխան վտանգավոր նյութերով հողի և ստորերկրյա ջրերի աղտոտման վիճակի մասին տեղեկություններ.

20) «ստորերկրյա ջրեր» նշանակում է Ջրային քաղաքականության ոլորտում Համայնքի գործողությունների շրջանակ սահմանող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2000 թվականի հոկտեմբերի 23-ի 2000/60/ԵՀ հրահանգի 2-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված ստորերկրյա ջրեր.

21) «հող» նշանակում է երկրակեղևի վերին շերտ, որը գտնվում է հիմնաձայրի և մակերևույթի միջև: Հողը կազմված է հանքանյութերից, օրգանական նյութից, ջրից, օդից և կենդանի օրգանիզմներից.

22) «շրջակա միջավայրի տեսչական ստուգումներ» նշանակում է բոլոր այն գործողությունները՝ ներառյալ կառուցվածքի գտնվելու վայր այցելությունները, արտանետումները և ներքին զեկույցների ու լրացուցիչ փաստաթղթերի դիտանցումը, օգտագործվող տեխնոլոգիաների, ինչպես նաև կառուցվածքի՝

շրջակա միջավայրի համար բարենպաստ լինելու համարժեքության ստուգումը, որն իրականացվում է իրավասու մարմնի կողմից կամ նրա անունից՝ ստուգելու և խթանելու նպատակով կառուցվածքների՝ թույլտվության պայմանների բավարարումը և, անհրաժեշտության դեպքում, շրջակա միջավայրի վրա դրանց ազդեցությունը դիտանցելու համար.

23) «ընտանի թռչուններ» նշանակում է «Ընտանի կենդանիների և ինկուբացիայի համար ձվերի՝ Համայնքի ներսում առևտուրը և երրորդ երկրներից ներմուծումը կարգավորող՝ կենդանիների առողջական վիճակի մասին» Էսորիդի 1990 թվականի հոկտեմբերի 15-ի 90/539/ԵՏՀ հրահանգի 2-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված ընտանի թռչուններ

24) «վառելիք» նշանակում է պինդ, հեղուկ կամ գազային դյուրավառ նյութ.

25) «այրման կայան» նշանակում է ցանկացած տեխնիկական սարքավորում, որի մեջ վառելիքն օքսիդացվում է՝ ստացված ջերմությունն օգտագործելու նպատակով:

«26) ծխատար» նշանակում է կառույց, որն ունի մեկ կամ ավելի խողովակ, որոնք ապահովում են արտանետվող գազերի արտահոսքը մթնոլորտ.

«27) շահագործման ժամեր» նշանակում է այն ժամանակը՝ արտահայտված ժամերով, որոնց ընթացքում այրման կայանն ամբողջությամբ կամ մասամբ շահագործվում է, և մթնոլորտ արտանետումներ են կատարվում՝ բացառությամբ գործարկման և պարապուրդի ժամանակահատվածների.

28) «ծծմբազերծման գործակից» նշանակում է տվյալ ժամանակահատվածում այրման կայանից մթնոլորտային օդ չարտանետվող ծծմբի քանակության հարաբերակցությունը այրման կայանի սարքավորանքներում լցվող և միևնույն ժամանակահատվածի ընթացքում օգտագործվող վառելիքում պարունակվող ծծմբի քանակության նկատմամբ,

29) «տեղական ծագման պինդ վառելիք» նշանակում է պինդ վառելիք, որը բնական ճանապարհով կարելի է ստանալ այդ վառելիքի համար նախատեսված այրման կայանում, և որը կարելի է ստանալ այդ տարածքում.

30) «որոշիչ վառելիք» նշանակում է այն վառելիքը, որն օգտագործելու համար առանձին կամ այլ վառելիքների հետ միասին նավթամշակումից ստացված թորման և կերպափոխման մնացորդներն օգտագործող բազմավառելիքային այրման գործարաններում օգտագործվող վառելիքների շարքում ունի ամենաբարձր սահմանային թույլատրելի քանակությունը՝ 5-րդ հավելվածի 1-ին մասի համաձայն, իսկ եթե տարբեր վառելիքներ ունեն միևնույն սահմանային



թայլատրելի քանակությունները, ապա այդ վառելիքներից ամենամեծ ջերմային հզորությունն ունեցող վառելիքը.

31) «Կենսազանգված» նշանակում է ստորև նշվածից որևէ մեկը՝

ա) գյուղատնտեսությունից կամ անտառատնտեսությունից գոյացած բուսանյութից բաղկացած արտադրանք, որը կարող է օգտագործվել որպես վառելիք՝ դրանց էներգատարության վերականգնման նպատակով.

բ) հետևյալ թափոնները՝

i) գյուղատնտեսությունից և անտառատնտեսությունից գոյացող բուսական թափոններ,

ii) սննդի մշակման արդյունաբերությունից գոյացող բուսական թափոններ, եթե արտադրվող ջերմությունը վերաօգտագործվում է,

iii) սկզբնային հումքից ստացվող ցելյուլոզայի և ցելյուլոզայից ստացվող թղթի արտադրությունից գոյացող թելքային բուսանյութի թափոններ, եթե դրանք այրվում են արտադրության վայրում, իսկ ստացվող ջերմությունը վերաօգտագործվում է,

iv) խցանի թափոններ,

v) փայտի թափոններ՝ բացառությամբ այն փայտի թափոնների, որոնք փայտի համար նախատեսված կոնսերվանտներով կամ պատվածքով մշակելու արդյունքում կարող են պարունակել հալոգենացված օրգանական միացություններ կամ ծանր մետաղներ, և որոնք մասնավորապես պարունակում են շինարարությունից և քանդումից գոյացած թափոններից առաջացած փայտի թափոններ,

32) «բազմավառելիքային այրման կայան» նշանակում է ցանկացած այրման կայան, որը կարող է համաժամանակյա կամ այլընտրանքային կարգով շահագործվել երկու կամ ավելի տեսակի վառելիքով,

33) «գազատուրբին» նշանակում է ջերմային էներգիան մեխանիկական աշխատանքի վերածող ցանկացած պտտվող մեքենա, որը բաղկացած է գլխավորապես կոմպրեսորից, այրման ագրեգատից, որում վառելիքն օքսիդացվում է՝ բանվորական հեղուկը տաքացնելու նպատակով, և տուրբինից:

34) «գազային շարժիչ» նշանակում է ներքին այրման շարժիչ, որը գործում է Օտտո ցիկլի համաձայն և կայծ է օգտագործում, իսկ երկու տեսակի վառելիքով աշխատող շարժիչների դեպքում՝ սեղմում՝ վառելիքն այրելու համար.

35) «դիզելային շարժիչ» նշանակում է ներքին այրման շարժիչ, որը գործում է դիզելային ցիկլի համաձայն և օգտագործում է սեղմում՝ վառելիքն այրելու համար.

36) «փոքր մեկուսացված համակարգ» նշանակում է փոքր մեկուսացված համակարգ՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 թվականի հունիսի 26-ի «Էլեկտրաէներգիայի ներքին շուկայի ընդհանուր կանոնների վերաբերյալ» 2003/54/ԵՀ հրահանգի 2-րդ հոդվածի 26-րդ կետի համաձայն

37) «թափոն» նշանակում է Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2008 թվականի նոյեմբերի 19-ի «Թափոնների մասին» 2008/98/ԵՀ հրահանգի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն սահմանված թափոններ

38) «վտանգավոր թափոններ» նշանակում է 2008/98/ԵՀ հրահանգի 2(3)(ա) հոդվածով սահմանված թափոններ

39) «խառը քաղաքային թափոններ» նշանակում է կենցաղային, ինչպես նաև առևտրային, արդյունաբերական և հասարակական կառույցներից արտանետվող թափոններ, որոնք բնույթով և կազմով նման են կենցաղային թափոններին՝ բացառությամբ այն մասնիկների, որոնք նշված են 2000/532/ԵՀ որոշման 20 01 գլխում, և որոնք առանձին են կուտակվում աղտոտման աղբյուրում, ինչպես նաև բացառությամբ այդ հավելվածի 20 02 գլխում նշված այլ թափոնների

40) «աղբի այրման գործարան» նշանակում է ցանկացած անշարժ կամ շարժական տեխնիկական կառույց և սարքավորում, որը նախատեսված է այրման միջոցով գոյացող ջերմության վերականգնմամբ կամ առանց դրա թափոնների ջերմային մշակման համար՝ թափոնների օքսիդացմամբ, ինչպես նաև այլ ջերմային մշակման գործընթացներով, ինչպիսիք են հրաքայքայումը, գազացումը կամ պլազմային մշակումը, եթե մշակումից գոյացող նյութերը նույնպես այրվում են,

41) «աղբը որպես հումք օգտագործող գործարան» նշանակում է ցանկացած անշարժ կամ շարժական տեխնիկական կառույց, որի հիմնական նպատակը էներգիա ստանալը կամ նյութական ապրանքներ արտադրելն է, և որն օգտագործում է աղբը որպես հիմնական կամ լրացուցիչ վառելիք, կամ որի մեջ թափոնները ենթարկվում են ջերմային մշակման՝ թափոնների օքսիդացմամբ, ինչպես նաև ջերմային մշակման այլ գործընթացներով, ինչպիսիք հրաքայքայումը, գազացումը կամ պլազմային մշակումն են, եթե գոյացող թափոնները նույնպես այրվում են՝ այրման միջոցով թափոնները հեռացնելու նպատակով

42) «նոմինալ հզորություն» նշանակում է այն վառարանների այրման հզորության գումարը, որոնցից կազմված է աղբի այրման գործարանը կամ աղբը որպես հումք օգտագործող գործարանը, ինչպես նշված է շինարարական կազմակերպության կողմից և հաստատված օպերատորի կողմից՝ համապատասխան կերպով հաշվի առնելով թափոնների ջերմատվությունը, որն արտահայտվում է ժամում թափոնների այրման քանակությամբ.

43) «դիօքսին և ֆուրան» նշանակում են պոլիքլորինացված դիբենզոդիօքսին և դիբենզոֆուրան, որոնք նշված են 6-րդ հավելվածի 2-րդ մասում.

44) «օրգանական միացություն» նշանակում է ցանկացած միացություն, որը պարունակում է ածխածնի առնվազն մեկ տարր կամ ջրածնի, հալոգենի, թթվածնի, ծծմբի, ֆոսֆորի, սիլիկոնի կամ ազոտի մեկ կամ մի քանի տարրեր՝ բացառությամբ ածխածնի օքսիդների, անօրգանական կարբոնատների և բիկարբոնատների.

45) «ցնդող օրգանական միացություն» նշանակում է ցանկացած օրգանական միացություն, ինչպես նաև կրեոզոտի մասնիկ, որն ունի 0,01 կիլոպասկալին հավասար գոլորշու ճնշում կամ ավելին, կամ օգտագործման որոշակի պայմաններում նման անկայունություն ունի

46) «օրգանական լուծիչ» նշանակում է ցանկացած ցնդող օրգանական միացություն, որն օգտագործվում է հետևյալ նպատակներից յուրաքանչյուրի համար՝

ա) առանձին կամ այլ նյութերի հետ համադրությամբ և առանց քիմիական փոփոխության ենթարկվելու՝ հումքը, արտադրանքը կամ թափոնները լուծելու համար.

բ) որպես մաքրող նյութ՝ աղտոտիչներ լուծելու համար.

գ) որպես լուծող նյութ.

դ) որպես մաքրող նյութ.

ե) որպես մածուցիկության կարգավորիչ.

զ) որպես մակերևութային լարվածության կարգավորիչ.

է) որպես պլաստիկարար.

ը) որպես պահպանիչ պատվածք.

47) «երեսապատում» նշանակում է Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2004 թվականի ապրիլի 21-ի «Որոշ ներկերում, լաքերում և փոխադրամիջոցների երեսամշակման արտադրանքում օրգանական լուծույթների օգտագործման հետևանքով ցնդող օրգանական միացությունների արտանետումները սահմանափակելու մասին» 2004/42/ԵՀ հրահանգի 2-րդ հոդվածի 8-րդ կետով սահմանված երեսապատում:

#### Հոդված 4

### **Թույլտվություն ունենալու պարտավորությունը**

1. Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ ոչ մի կառուցվածք կամ այրման կայան, աղբի այրման գործարան կամ աղբը որպես հումք օգտագործող գործարան չի շահագործվում առանց թույլտվության:

Շեղում կատարելով 1-ին ենթապարբերությունից՝ անդամ պետությունները միայն 5-րդ գլխով կարգավորվող կառուցվածքների գրանցման համար կարող են ընթացակարգ սահմանել:

Գրանցման ընթացակարգը նշվում է պարտադիր ակտում և ընդգրկում առնվազն օպերատորի կողմից իրավասու մարմին ներկայացված ծանուցում՝ կառուցվածքը շահագործելու մասին:

2. Անդամ պետությունները կարող են նախատեսել, որ թույլտվության մեջ ընդգրկվեն նույն օպերատորի կողմից նույն վայրում մեկ կամ ավելի կառուցվածքներ կամ կառուցվածքների մասեր:

Եթե թույլտվությունն ընդգրկում է մեկ կամ ավելի կառուցվածքներ, դրանում պետք է ներառվեն պայմաններ՝ ապահովելու համար, որ յուրաքանչյուր կառուցվածք համապատասխանի սույն Հրահանգի պահանջներին:

3. Անդամ պետությունները կարող են նախատեսել, որ թույլտվությունն ընդգրկի կառուցվածքի մի քանի մասեր, որոնք շահագործվում են տարբեր օպերատորների կողմից: Նման դեպքերում թույլտվության մեջ նշվում են յուրաքանչյուր օպերատորի պարտականությունները:

## Հոդված 5

### **Թույլտվության տրամադրումը**

1. Չհակասելով ազգային կամ Միության օրենսդրությամբ սահմանված մյուս պահանջներին՝ իրավասու մարմինը թույլտվությունը տրամադրում է, եթե կառուցվածքը համապատասխանում է սույն Հրահանգի պահանջներին:

2. Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ թույլտվության տրամադրման պայմանները և ընթացակարգերը ամբողջովին համաձայնեցվում են, եթե տվյալ ընթացակարգում ընդգրկված է մեկից ավելի իրավասու մարմին կամ մեկից ավելի օպերատոր, կամ եթե տրամադրվում է մեկից ավելի թույլտվություն՝ այս ընթացակարգի նկատմամբ բոլոր իրավասու մարմինների կողմից արդյունավետ միասնական մոտեցում ապահովելու նպատակով:

3. Նոր կառուցվածքի շահագործման կամ կառուցվածքի էական փոփոխության ժամանակ, որի դեպքում կիրառվում է 85/337/ԵՏՀ հրահանգի 4-րդ հոդվածը, ցանկացած համապատասխան տեղեկություն, որը ձեռք է բերվել, կամ եզրակացություն, որին հանգել են, այդ հրահանգի 5-րդ, 6-րդ և 7-րդ

հողվածների համաձայն, ուսումնասիրվում կամ օգտագործվում է թույլտվության տրամադրման նպատակներով:

#### Հոդված 6

### **Ընդհանուր պարտադիր կանոնները**

Չհակասելով թույլտվություն ունենալու պահանջին՝ անդամ պետությունները կարող են ընդհանուր պարտադիր կանոններում պահանջներ ընդգրկել՝ կառուցվածքների, այրման կայանների, աղբի այրման գործարանների կամ աղբը որպես հումք օգտագործող գործարանների որոշ տեսակների համար:

Եթե ընդունվում են ընդհանուր պարտադիր կանոններ, ապա թույլտվությունը կարող է պարզապես հղում ունենալ նման կանոններին:

#### Հոդված 7

### **Վթարները և պատահարները**

Չհակասելով «Շրջակա միջավայրին հասցված վնասի կանխարգելման և վերացնելու մասով բնապահպանական պատասխանատվության մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2004 թվականի ապրիլի 21-ի 2004/35/ԵՀ հրահանգին՝ ցանկացած պատահարի կամ վթարի դեպքում, որն էական ազդեցություն է ունենում շրջակա միջավայրի վրա, անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ՝

ա) օպերատորն անմիջապես տեղեկացնում է իրավասու մարմնին.

բ) օպերատորն անմիջապես ձեռնարկում է միջոցներ՝ բնապահպանական հետևանքները սահմանափակելու և հնարավոր հետագա վթարները կամ պատահարները կանխելու համար.

գ) իրավասու մարմինը պարտադրում է օպերատորին՝ ձեռնարկելու ցանկացած համապատասխան լրացուցիչ միջոցներ, որոնք իրավասու մարմինը համարում անհրաժեշտ է համարում՝ բնապահպանական հետևանքները սահմանափակելու և հնարավոր հետագա վթարներն ու պատահարները կանխելու համար:

#### Հոդված 8

### **Թույլտվության պայմանները չբավարարելը**

1. Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ թույլտվության պայմանները բավարարված են:

2. Թույլտվության պայմանների խախտման դեպքում անդամ պետություններն ապահովում են, որ՝

ա) օպերատորն անմիջապես տեղեկացնում է իրավասու մարմնին:

բ) օպերատորն անմիջապես ձեռնարկում է այն միջոցները, որոնք անհրաժեշտ են՝ ապահովելու համար, որ պայմանների բավարարումը վերականգնվում է ամենակարճ հնարավոր ժամկետում:

գ) իրավասու մարմինը օպերատորից պահանջում է ձեռնարկել ցանկացած համապատասխան լրացուցիչ միջոց, որն իրավասու մարմնին անհրաժեշտ է համարում՝ պայմանների բավարարումն ապահովելու համար:

Եթե թույլտվության պայմանների խախտումն անմիջական վնաս է պատճառում մարդու առողջությանը կամ սպառնում է անմիջական էական բացասական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա,և, մինչև պայմանները կրկին բավարարելը, առաջին ենթապարբերության (բ) և (գ) կետերի համաձայն, կառուցվածքի, այրման կայանի, աղբի այրման գործարանի, աղբը որպես հումք օգտագործող գործարանի կամ դրանց մի մասի շահագործումը կասեցվում է:

## Հոդված 9

### **Ջերմոցային գազերի արտանետումը**

1. Եթե որևէ կառուցվածքից ջերմոցային գազերի արտանետումները նշված են Համայնքի տարածքում ջերմոցային գազերի արտանետումների արտոնագրերի վաճառքի համակարգ սահմանող՝ 2003/87/ԵՀ հրահանգի 1-ին հավելվածում՝ կապված այդ կառուցվածքում իրականացվող գործունեության հետ, թույլտվությունը չպետք է ներառի այդ գազի արտանետումների համար նախատեսված արտանետումների սահմանային թույլատրելի քանակություն՝ բացառությամբ այն դեպքերի, երբ անհրաժեշտ է ապահովել, որ տեղի շրջակա միջավայրը զգալիորեն չի աղտոտվի:

2. 2003/87/ԵՀ I հրահանգի հավելվածում նշված գործունեության համար անդամ պետությունները կարող են պահանջներ չսահմանել՝ այրման կայանների կամ շրջակա միջավայր ածխաթթու գազ արտանետող այլ կայանների համար էներգետիկ արդյունավետության մասով:

3. Իրավասու մարմիններն անհրաժեշտության դեպքում համապատասխանաբար փոփոխում են թույլտվությունը:

4. 1–3-րդ ենթապարբերությունները չեն կիրառվում 2003/87/ԵՀ հրահանգի 27-րդ հոդվածի Միության շրջանակներում վաճառվող՝ ջերմոցային գազերի արտանետումների թույլտվության համակարգից ժամանակավորապես բացառված կառուցվածքների նկատմամբ:

## ԳԼՈՒԽ II

### ԴՐՈՒՅԹՆԵՐ՝ 1-ԻՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՆՇՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

#### Հոդված 10

##### **Շրջանակը**

Սույն գլուխը կիրառվում է 1-ին հավելվածում նշված գործունեության նկատմամբ և, անհրաժեշտության դեպքում, հասնելով այդ հավելվածով սահմանված հզորության շեմերին:

#### Հոդված 11

##### **Օպերատորի հիմնական պարտավորությունները կարգավորող ընդհանուր սկզբունքները**

Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ նախատեսելու համար, որ կառուցվածքները շահագործվում են՝ հետևյալ սկզբունքների համաձայն՝

ա) աղտոտման դեմ ձեռնարկվում են բոլոր համապատասխան կանխարգելիչ միջոցները.

բ) կիրառվում են լավագույն հասանելի տեխնոլոգիաները.

գ) շրջակա միջավայրն էականորեն չի աղտոտվում.

դ) թափոնների գոյացումը կանխարգելվում է՝ 2008/98/ԵՀ հրահանգի համաձայն.

ե) եթե գոյանում են թափոններ, ապա դրանք, ըստ վտանգավորության աստիճանի և 2008/98/ԵՀ հրահանգի համաձայն, պատրաստվում են վերաօգտագործման համար, վերամշակվում են, վերականգնվում կամ այն դեպքերում, երբ դա տեխնիկապես և տնտեսապես հնարավոր է, հեռացվում են՝ խուսափելով շրջակա միջավայրի վրա դրա ազդեցությունից կամ նվազեցնելով այն.

զ) էներգիան արդյունավետորեն է օգտագործվում.

է) ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցներ՝ վթարներից խուսափելու և դրանց հետևանքները նվազեցնելու համար

ը) գործունեության վերջնական դադարեցումից հետո ձեռնարկվում են բոլոր անհրաժեշտ միջոցները՝ աղտոտման վտանգներն ամբողջությամբ բացառելու և շահագործման վայրի՝ 22-րդ հոդվածով սահմանված բավարար վիճակը վերադարձնելու համար:

## Հոդված 12

### Թույլտվություն ստանալու դիմումները

1. Անդամ պետությունները ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ապահովելու համար, որ իրավասու մարմին ներկայացված՝ թույլտվություն ստանալու մասին դիմումի մեջ նշված են՝

ա) կառուցվածքի և դրանում իրականացվող գործունեության նկարագրությունը.

բ) այն հումքի, օժանդակ նյութերի, այլ նյութերի և էներգիայի նկարագրությունը, որոնք օգտագործվում են կառուցվածքում կամ առաջանում դրա շահագործման հետևանքով.

գ) կառուցվածքներից կատարվող արտանետումների աղբյուրների նկարագրությունը.

դ) կառուցվածքի գտնվելու վայրի պայմանների նկարագրությունը.

ե) անհրաժեշտության դեպքում նախնական զեկույց՝ 22 (2) հոդվածի համաձայն.

զ) ձեռնարկություններից շրջակա միջավայր կանխատեսելի արտանետումների բնույթի և քանակի, ինչպես նաև շրջակա միջավայրի վրա արտանետումների էական ազդեցությունների բնույթի նկարագրությունը.

է) կառուցվածքներից կատարվող արտանետումների կանխման, իսկ այն դեպքերում, երբ դա հնարավոր չէ, նվազեցման համար առաջարկվող տեխնոլոգիաների և այլ տեխնիկայի նկարագրությունը.

ը) անհրաժեշտության դեպքում՝ կառուցվածքի շահագործման հետևանքով առաջացած թափոնների կանխման, վերաօգտագործման համար նախապատրաստման, վերամշակման և վերանականգնման միջոցների նկարագրությունը.

թ) հետագա այն միջոցների նկարագրությունը, որոնք նախատեսված են օպերատորի՝ 11-րդ հոդվածով սահմանված հիմնական պարտավորությունների ընդհանուր սկզբունքներին համապատասխանությունն ապահովելու համար.

ժ) շրջակա միջավայր կատարվող արտանետումների վերահսկման համար նախատեսված միջոցառումների նկարագրությունը.

ժա) առաջարկվող տեխնիկայի, տեխնոլոգիայի և միջոցների համար հիմնական այլընտրանքային տարբերակների նկարագրությունը, որոնք ընդհանուր առմամբ ուսումնասիրվել են դիմում ներկայացնողի կողմից:

Թույլտվություն ստանալու դիմումը նաև պետք է ներառի 1-ին ենթապարբերությամբ նշված մանրամասների ոչ տեխնիկական բնույթի ամփոփ նկարագրություն:

2. Եթե 85/337/ԵՏՀ հրահանգի պահանջների համաձայն ներկայացված տեղեկությունները կամ 96/82/ԵՀ հրահանգի համաձայն կազմված անվտանգության մասին զեկույցը կամ այլ օրենսդրության համաձայն տրամադրված այլ տեղեկություններ համապատասխանում են 1-ին պարբերության պահանջներին, ապա այդ տեղեկությունները կարող են ներառվել դիմումի մեջ կամ կցվել դրան:



## Հոդված 13

### ԼՀՏ ելակետային փաստաթղթերը և տեղեկությունների փոխանակումը

1. ԼՀՏ ելակետային փաստաթղթեր կազմելու, վերանայելու և, անհրաժեշտության դեպքում, թարմացնելու համար Հանձնաժողովը կազմակերպում է տեղեկությունների փոխանակում անդամ պետությունների, համապատասխան արդյունաբերության ճյուղերի, շրջակա միջավայրի պահպանությունը խթանող հասարակական կազմակերպությունների և Հանձնաժողովի միջև:

2. Տեղեկությունների փոխանակումը, մասնավորապես, վերաբերում է հետևյալին՝  
ա) կառուցվածքների և տեխնոլոգիաների արդյունավետությանը՝ կապված արտանետումների հետ, որն ընդգրկում է, անհրաժեշտության դեպքում, կարճաժամկետ ու երկարաժամկետ միջին արտանետումները և համապատասխան ելակետային պայմանները, հումքի սպառումը և բնույթը, ջրի սպառումը, էներգաօգտագործումն ու թափոնների գոյացումը.

բ) օգտագործվող տեխնոլոգիաներին, դիտանցմանը, բնական միջավայրերի միջև ազդեցություններին, տնտեսական և տեխնիկական կենսունակությանն ու դրա զարգացմանը.

գ) լավագույն հասանելի տեխնոլոգիաներին և նոր տեխնոլոգիաներին, որոնք հաստատվում են (ա) և (բ) կետերում նշված խնդիրները քննարկելուց հետո:

3. Հանձնաժողովը ստեղծում և կանոնավորապես համաժողով է հրավիրում, որին մասնակցում են անդամ պետությունների, համապատասխան արդյունաբերական ճյուղերի և շրջակա միջավայրի պահպանումը խթանող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները:

Հանձնաժողովը ստանում է համաժողովի մասնակիցների կարծիքը տեղեկությունների փոխանակման գործնական միջոցառումների և, մասնավորապես, հետևյալի մասին՝

ա) համաժողովի ընթացակարգային կանոնների.

բ) տեղեկություններ փոխանակման աշխատանքային ծրագրի.

գ) տեղեկությունների հավաքագրման ուղեցույցի.

դ) ԼՀՏ ելակետային փաստաթղթերը կազմելու ուղեցույցի և դրանց որակի ապահովման, այդ թվում՝ դրանց բովանդակության ու ձևաչափի նպատակահարմարության մասին:

Երկրորդ ենթապարբերության (գ) և (դ) կետերում նշված ուղեցույցի համար հաշվի է առնվում համաժողովի եզրակացությունը, և այն ընդունվում է՝ 75(2) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգի համաձայն:

4. Հանձնաժողովն ստանում և հանրությանը հասանելի է դարձնում ԼՀՏ ելակետային փաստաթղթերի բովանդակության մասին համաժողովի

եզրակացությունն ու 5-րդ պարբերությամբ սահմանված ընթացակարգերի համար հաշվի է առնում այս եզրակացությունը:

5.. ԼՀՏ եզրակացությունների վերաբերյալ որոշումներն ընդունվում են՝ 75(2) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգի համաձայն:

6.5-րդ պարբերության համաձայն որոշում ընդունելուց հետո Հանձնաժողովն առանց հետաձգելու, ԼՀՏ ելակետային փաստաթղթերը մատչելի է դարձնում հանրությանը և ապահովում, որ ԼՀՏ եզրակացությունները հրապարակվեն Միության բոլոր պաշտոնական լեզուներով:

7. Մինչև 5-րդ պարբերության համաձայն որոշման ընդունումը՝ Հանձնաժողովի կողմից 83-րդ հոդվածով նշված ժամկետից շուտ ընդունված ԼՀՏ ելակետային փաստաթղթերի լավագույն հասանելի տեխնոլոգիաների մասին եզրակացությունները սույն գլխի նպատակներով կիրառվում են որպես ԼՀՏ եզրակացություններ՝ բացառությամբ 15(3) ու (4) հոդվածի:

#### Հոդված 14

### **Թույլտվության պայմանները**

1..Անդամ պետություններն ապահովում են, որ թույլտվության պայմաններն ընդգրկեն բոլոր միջոցները, որոնք անհրաժեշտ են՝ 11-րդ և 18-րդ հոդվածներին համապատասխանությունն ապահովելու համար:

Այդ միջոցները ներառում են առնվազն հետևյալը՝

ա) այն սահմանային թույլատրելի քանակությունները, որոնք նախատեսված են II հավելվածում նշված աղտոտող նյութերի համար և մյուս այն աղտոտող նյութերի համար, որոնք տվյալ կառուցվածքից կարող են արտանետվել մեծ քանակներով՝ հաշվի առնելով դրանց բնույթը և մի բնական միջավայրից մյուսն անցնելու հավանականությունը.

բ) հողի և ստորգետնյա ջրերի պահպանումն ապահովող համապատասխան պահանջներ, ինչպես նաև օբյեկտից արտանետվող թափոնների դիտանցմանն ու կառավարմանն ուղղված միջոցներ.

գ) արտանետումների դիտանցման համապատասխան պահանջներ, որոնք նշում են՝

i) չափման մեթոդաբանությունը, պարբերականությունն ու գնահատման ընթացակարգը, և

ii) եթե կիրառվում է 15(3)(բ) հոդվածը, որ արտանետումների դիտանցման արդյունքները հասանելի են նույն ժամկետներով և ելակետային պայմաններով, որոնք սահմանված են լավագույն հասանելի տեխնոլոգիաներին հատուկ արտանետումների մակարդակներին.

դ) իրավասու մարմնին կանոնավոր և առնվազն տարին մեկ անգամ հետևյալը տրամադրելու պարտավորություն՝

i) (գ) կետում նշված արտանետումների դիտանցման արդյունքների մասին տեղեկություններ և այլ պահանջվող տվյալներ, որոնք իրավասու մարմնին

հնարավորություն են տալիս ստուգելու թույլտվության պայմանների բավարարումը և

ii) եթե կիրառվում է 15(3)(բ) հոդվածը, արտանետումների դիտանցման արդյունքների ամփոփագիրը, որը հնարավոր է դարձնում համեմատությունը լավագույն հասանելի տեխնոլոգիաներին հատուկ արտանետումներին

ե) համապատասխան պահանջներ (բ) կետի համաձայն հող և ստորգետնյա ջրեր արտանետումները կանխելու համար ձեռնարկված միջոցառումների կանոնավոր պահպանման և վերահսկման համար և համապատասխան պահանջներ կառուցվածքի գտնվելու վայրում համապատասխան վտանգավոր նյութերի պարբերական դիտանցման վերաբերյալ՝ հաշվի առնելով կառուցվածքի գտնվելու վայրի հողի և ստորգետնյա ջրերի աղտոտումը.

զ) միջոցներ, որոնք վերաբերում են շահագործման բնականոն պայմաններից բացի այլ պայմանների, ինչպիսիք գործարկման և պարապուրդի աշխատանքները, արտահոսքը, անսարքությունները, աշխատանքների ժամանակավոր խափանումը կամ վերջնական դադարեցումն են.

է) դրույթներ աղտոտիչների՝ հեռու տարածությունների և անդրսահմանային տեղափոխման մասին.

ը) պայմաններ արտանետումների թույլատրելի սահմանային քանակություններին համապատասխանությունը գնահատելու համար կամ հղում այլ ակտերով սահմանված կիրառվող դրույթներին:

2. 1(ա) պարբերության նպատակով՝ սահմանային թույլատրելի քանակությունները կարող են լրացվել կամ փոխարինվել համարժեք պարամետրերով կամ տեխնիկական միջոցներով, որոնք շրջակա միջավայրի պահպանման համարժեք մակարդակ են ապահովում:

3. Լ<S եզրակացություններն օգտագործվում են որպես հղում՝ թույլտվության պայմանները սահմանելու համար:

4. Չհակասելով 18-րդ հոդվածին՝ իրավասու մարմինը կարող է սահմանել թույլտվության առավել խիստ պայմաններ, քան այն պայմանները, որոնք կարող են կատարվել Լ<S եզրակացություններում նկարագրված լավագույն հասանելի տեխնոլոգիաների կիրառմամբ: Անդամ պետությունները կարող են սահմանել այնպիսի կանոններ, որոնց համաձայն իրավասու մարմինը կարող է սահմանել նման առավել խիստ պայմաններ:

5. Եթե իրավասու մարմինը սահմանում է թույլտվության պայմաններ՝ հիմնվելով այնպիսի լավագույն հասանելի տեխնոլոգիայի վրա, որը չի ընդգրկվել ոչ մի Լ<S եզրակացության մեջ, ապա այն պետք է ապահովի, որ՝

ա) այդ տեխնոլոգիան սահմանվում է՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով III հավելվածում նշված չափորոշիչներին և

բ) բավարարված են 15-րդ հոդվածի պահանջները:

Եթե 1-ին ենթապարբերության մեջ նշված ԼՀՏ եզրակացությունների մեջ նշված չեն լավագույն հասանելի տեխնոլոգիաներին հատուկ արտանետումների մակարդակները, ապա իրավասու մարմինն երաշխավորում է, որ 1-ին ենթապարբերությամբ նշված տեխնոլոգիան կապահովի շրջակա միջավայրի պահպանման այնպիսի մակարդակ, որը համարժեք է ԼՀՏ եզրակացությունների մեջ նկարագրված լավագույն հասանելի տեխնոլոգիաներին:

6. Եթե որևէ գործունեություն կամ արտադրության մի տեսակ, որն իրականացվում է կառուցվածքում, չի ընդգրկվում որևէ ԼՀՏ եզրակացության մեջ, կամ եթե այդ եզրակացությունների մեջ նկարագրված չեն այդ գործունեության կամ գործընթացի հնարավոր բնապահպանական ազդեցությունները, իրավասու մարմինը, օպերատորի հետ նախնական խորհրդակցություններից հետո, սահմանում է թույլտվության պայմաններ՝ հիմնվելով այն լավագույն հասանելի տեխնոլոգիաների վրա, որոնք իրավասու մարմինը սահմանել է տվյալ գործունեության կամ գործընթացների համար՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով III հավելվածում նշված չափորոշիչներին:

7. I հավելվածի 6.6 կետում նշված կառուցվածքների համար՝ սույն հոդվածի 1-6 – ռդ պարբերությունները կիրառվում են՝ չհակասելով կենդանիների բարեկեցությանը վերաբերող օրենսդրությանը:

#### Հոդված 15

### **Արտանետումների սահմանային թույլատրելի քանակությունները, համարժեք պարամետրերը և տեխնիկական միջոցները**

1. Աղտոտող նյութերի արտանետումների սահմանային թույլատրելի քանակությունները սովորաբար կիրառվում են այն կետում, որտեղ արտանետումները դուրս են գալիս կառուցվածքից, ընդ որում դրանց սահմանման ժամանակ հաշվի չի առնվում նոսրացման ազդեցությունը:

Հաշվի առնելով ջրային ռեսուրսներ աղտոտող նյութերի ոչ անմիջական արտանետումները՝ կառուցվածքի համար արտանետումների սահմանաքանակներ սահմանելիս հնարավոր է հաշվի առնել ջրերի մշակման սարքավորումների ազդեցությունը՝ պայմանով, եթե ապահովվում է շրջակա միջավայրի ամբողջական պաշտպանության համարժեք մակարդակը, և եթե սա չի հանգեցնում շրջակա միջավայրի աղտոտման ավելի բարձր մակարդակների՝ չհակասելով 2006/11/ԵՀ հրահանգին կամ այն իրականացնող հրահանգներին:

2. Չհակասելով 18-րդ հոդվածին՝ արտանետումների սահմանային թույլատրելի քանակությունները և 14(1) և (2) հոդվածում նշված համարժեք պարամետրերն ու տեխնիկական միջոցները հիմնվում են լավագույն հասանելի տեխնոլոգիաների վրա՝ չնախատեսելով որևէ տեխնիկայի կամ տեխնոլոգիայի կիրառումը:

3. Իրավասու մարմինը սահմանում է սահմանային թույլատրելի այնպիսի նորմաներ, որոնք ապահովում են, որ շահագործման բնականոն պայմաններում արտանետումները չգերազանցեն լավագույն հասանելի տեխնոլոգիաներին հատուկ արտանետումների այն մակարդակները, որոնք հետևյալ ձևերից որևէ մեկով 13(5) հոդվածում նշված ՀՀՏ եզրակացությունների մասին որոշումներում՝

ա) սահմանում են արտանետումների սահմանային թույլատրելի նորմաներ, որոնք չեն գերազանցում լավագույն հասանելի տեխնոլոգիաների համար սահմանված արտանետումների մակարդակները: Այդ սահմանային թույլատրելի քանակությունները սահմանվում են միևնույն կամ ավելի կարճ ժամկետներով և միևնույն ելակետային պայմաններով, որոնք սահմանված են լավագույն հասանելի տեխնոլոգիաներին հատուկ արտանետումների մակարդակների համար.

բ) սահմանում են սահմանային թույլատրելի քանակություններ, որոնք, կապված արժեքների, ժամկետների և ելակետային պայմանների հետ, տարբերվում են (ա) կետում նշված քանակություններից:

Եթե կիրառվում է (բ) կետը, իրավասու մարմինը, առնվազն տարվա կտրվածքով, գնահատում է արտանետումների դիտանցման արդյունքները՝ ապահովելու համար, որ շահագործման բնականոն պայմաններում արտանետումները չեն գերազանցում լավագույն հասանելի տեխնոլոգիաներին հատուկ արտանետումների մակարդակները:

4. Շեղում կատարելով 3-րդ պարբերությունից և չհակասելով 18-րդ հոդվածին՝ իրավասու մարմինը կարող է որոշակի դեպքերում սահմանել արտանետումների ավելի ցածր սահմանային թույլատրելի քանակություններ: Նման շեղումը կարող է կիրառվել, եթե գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ լավագույն հասանելի տեխնոլոգիաների հատուկ արտանետումների մակարդակները, որոնք նկարագրված են ՀՀՏ եզրակացություններում, կհանգեցնեն անհամաչափորեն ավելի մեծ ծախսերի՝ համեմատած բնապահպանական օգուտների հետ՝ հետևյալ պատճառներով՝

ա) տվյալ կառուցվածքի աշխարհագրական դիրքի կամ տեղի բնապահպանական պայմանների.

բ) տվյալ կառուցվածքի տեխնիկական առանձնահատկությունների

Իրավասու մարմինը թույլտվության պայմանների հավելվածում գրանցում է 1-ին ենթապարբերության դիմումի պատճառները՝ ներառյալ գնահատման արդյունքներն ու սահմանված պայմանների հիմնավորումը:

1-ին ենթապարբերության համաձայն սահմանված սահմանային թույլատրելի քանակությունները, անհրաժեշտության դեպքում, այնուամենայնիվ, չեն գերազանցում սույն Հրահանգի հավելվածներով սահմանված սահմանային թույլատրելի քանակությունները:

Իրավասու մարմինն ամեն դեպքում ապահովում է, որ շրջակա միջավայրը զգալիորեն չի աղտոտվում, և ապահովվում է ամբողջ շրջակա միջավայրի պահպանման բարձր մակարդակ:

Անդամ պետությունների 72(1) հոդվածի համաձայն՝ մասնավորապես այս պարբերության կիրառմանը վերաբերող տրամադրած տեղեկությունների հիման վրա, Հանձնաժողովը կարող է, անհրաժեշտության դեպքում, գնահատել և ավելի ևս պարզեցնել այն չափորոշիչները, որոնք պետք է այս պարբերության կիրառման համար հաշվի առնվեն:

Իրավասու մարմինը վերագնահատում է առաջին ենթապարբերության կիրառումը՝ որպես 21-րդ հոդվածի համաձայն թույլտվության պայմանների յուրաքանչյուր վերանայման մի մաս:

5. Իրավասու մարմինը կարող է ժամանակավոր շեղումներ թույլատրել սույն հոդվածի 2-րդ և 3-րդ պարբերությունների պահանջներից և 11(ա) ու (բ) հոդվածից՝ նոր տեխնոլոգիաների փորձարկման և օգտագործման համար 9 ամիսը չգերազանցող ընդհանուր ժամկետով՝ պայմանով, որ նշված ժամկետից հետո տեխնոլոգիայի օգտագործումը դադարեցվում է, կամ գործունեությունը հասնում է այն արտանետումների մակարդակներին, որոնք հատուկ են լավագույն հասանելի տեխնոլոգիաներին:

#### Հոդված 16

### **Դիտանցման պահանջները**

1. 14(1)(գ) հոդվածում նշված դիտանցման պահանջները, անհրաժեշտության դեպքում, հիմնվում են ՀՏ եզրակացություններում նկարագրված դիտանցման մասին եզրակացությունների վրա:

2. 14(1)(ե) հոդվածում նշված պարբերական դիտանցման հաճախությունը որոշվում է իրավասու մարմնի կողմից յուրաքանչյուր առանձին կառուցվածքի համար թույլտվությամբ կամ ընդհանուր պարտադիր կանոններով:

Չհակասելով առաջին ենթապարբերությանը՝ պարբերական դիտանցումն իրականացվում է առնվազն յուրաքանչյուր 5 տարին մեկ անգամ՝ ստորգետնյա ջրերի համար և առնվազն 10 տարին մեկ անգամ՝ հողի համար, եթե նման դիտանցումը հիմնված է աղտոտման ռիսկի համակարգված գնահատման վրա:

#### Հոդված 17

### **Ընդհանուր պարտադիր կանոններ՝ I հավելվածում թվարկված գործունեության տեսակների համար**

1. Ընդհանուր պարտադիր կանոններն ընդունելիս անդամ պետություններն ապահովում են միասնական մոտեցում և շրջակա միջավայրի պահպանման

բարձր մակարդակ, որը համարժեք է այն մակարդակին, որը կապահովվի թույլտվության առանձին պայմաններով:

2. Ընդհանուր պարտադիր կանոնները հիմնվում են լավագույն հասանելի տեխնոլոգիաների վրա՝ չնախատեսելով որևէ տեխնիկայի կամ տեխնոլոգիայի օգտագործումը՝ 14-րդ և 15-րդ հոդվածներին համապատասխանությունն ապահովելու համար:

3. Անդամ պետություններն ապահովում են, որ ընդհանուր պարտադիր կանոնները թարմացվում են՝ լավագույն հասանելի տեխնոլոգիաների կատարելագործումը հաշվի առնելու և 21-րդ հոդվածին համապատասխանությունն ապահովելու համար:

4. Ընդհանուր պարտադիր կանոնները, որոնք ընդունվում են 1-3-րդ պարբերությունների համաձայն, պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին կամ դրանց պաշտոնական հրապարակման պահին պետք է ուղեկցվեն նման հղումով:

#### Հոդված 18

### **Շրջակա միջավայրի որակի ստանդարտները**

Եթե շրջակա միջավայրի որակի ստանդարտը ներառում է առավել խիստ պայմաններ, քան նրանք, որոնք կարող են կատարվել առկա լավագույն տեխնոլոգիաների կիրառմամբ, թույլտվությամբ պետք է նախատեսվեն լրացուցիչ միջոցներ՝ չհակասելով այն միջոցներին, որոնք կարող են ձեռնարկվել շրջակա միջավայրի որակի ստանդարտներին համապատասխանությունն ապահովելու նպատակով:

#### Հոդված 19

### **Լավագույն հասանելի տեխնոլոգիաների կատարելագործումը**

Անդամ պետություններն ապահովում են, որ իրավասու մարմինը հետևի կամ տեղեկացվի լավագույն հասանելի տեխնոլոգիաների կատարելագործման և ցանկացած նոր կամ թարմացված L<S եզրակացության հրապարակման մասին, և այդ տեղեկությունները տրամադրում է համապատասխան հասարակությանը:

#### Հոդված 20

### **Օպերատորների կողմից կառուցվածքների փոփոխությունները**

1. Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ օպերատորը կառուցվածքի բնույթի կամ շահագործման ցանկացած

նախատեսված փոփոխման կամ ընդարձակման մասին տեղեկացնում է իրավասու մարմինն: Իրավասու մարմինն անհրաժեշտության դեպքում պետք է թարմացնի թույլտվությունը:

2..Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ օպերատորի կողմից նախատեսված ոչ մի էական փոփոխություն չի իրականացվում առանց սույն Հրահանգի համաձայն տրամադրված թույլտվության:

Թույլտվություն ստանալու դիմումի և իրավասու մարմնի որոշման մեջ պետք է նշվեն կառուցվածքի այն մասերը և 12-րդ հոդվածում նշված այն մանրամասները, որոնց վրա փոփոխությունը կարող է ազդեցություն ունենալ:

3..Կառուցվածքի բնույթի կամ շահագործման ցանկացած փոփոխություն կամ ընդլայնում դիտվում է որպես էական, եթե նման փոփոխությունը կամ ընդլայնումն ինքնին հասնում է 1 հավելվածով սահմանված հզորության շեմերին:

#### Հոդված 21

### **Իրավասու մարմնի կողմից թույլտվության պայմանների վերանայումը և թարմացումը**

1. Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ իրավասու մարմինը, 2-5-րդ պարբերությունների համաձայն, պարբերաբար վերանայում է թույլտվության բոլոր պայմանները, իսկ եթե անհրաժեշտ է ապահովել համապատասխանությունը սույն Հրահանգին, ապա թարմացնում է այդ պայմանները:

2. Իրավասու մարմնի պահանջի դեպքում օպերատորը ներկայացնում է բոլոր տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են՝ թույլտվության պայմանները վերանայելու համար՝ ներառյալ, մասնավորապես, արտանետումների դիտանցման արդյունքները և այլ տվյալներ, որոնք հնարավոր են դարձնում համեմատելու կառուցվածքի շահագործումը կիրառվող ԼՀՏ եզրակացություններում լավագույն հասանելի տեխնոլոգիաների և լավագույն հասանելի տեխնոլոգիաներին հատուկ արտանետումների մակարդակների հետ:

Թույլտվության պայմանները վերանայելիս իրավասու մարմինն օգտագործում է դիտանցման կամ ստուգումների արդյունքում ձեռք բերված ցանկացած տեղեկություն:

3. ԼՀՏ եզրակացությունների մասին որոշումների հրապարակումից հետո 4 տարվա ընթացքում կառուցվածքի հիմնական գործունեությանը վերաբերող 13(5) հոդվածի համաձայն, իրավասու մարմինն ապահովում է, որ՝



ա) տվյալ կառուցվածքի համար թույլտվության բոլոր պայմանները վերանայվում են և, անհրաժեշտության դեպքում, թարմացվում՝ սույն Հրահանգին և, մասնավորապես, 15(3) ու (4) հոդվածներին համապատասխանությունն ապահովելու համար.

բ) կառուցվածքը բավարարում է այդ թույլտվության պայմանները.

Վերանայման համար հաշվի են առնվում բոլոր նոր կամ թարմացված ԼՀՏ եզրակացությունները, որոնք կիրառելի են կառուցվածքի համար և ընդունվել են 13(5) հոդվածի համաձայն թույլտվության տրամադրումից կամ վերջին վերանայումից հետո:

4. Եթե կառուցվածքը չի ընդգրկվել ԼՀՏ ոչ մի եզրակացության մեջ, ապա թույլտվության պայմանները վերանայվում են և, անհրաժեշտության դեպքում, թարմացվում, եթե լավագույն հասանելի տեխնոլոգիաների կատարելագործումը հնարավոր է դարձնում արտանետումների զգալի նվազեցումը:

5. Թույլտվության պայմանները վերանայվում են և, անհրաժեշտության դեպքում, թարմացվում առնվազն հետևյալ դեպքերում՝

ա) կառուցվածքի շահագործումից առաջացած աղտոտումն այնքան լայնածավալ է, որ արտանետումների գործող սահմանային թույլատրելի քանակությունները պետք է վերանայվեն կամ թույլտվության մեջ պետք է ընդգրկվեն նման նոր սահմանային թույլատրելի քանակություններ.

բ) շահագործման անվտանգության համար պահանջվում է կիրառել այլ տեխնոլոգիաներ.

գ) եթե անհրաժեշտ է համապատասխանել շրջակա միջավայրի նոր կամ վերանայված ստանդարտին՝ 18-րդ հոդվածի համաձայն:

## Հոդված 22

### **Կառուցվածքի գտնվելու վայրում գործունեության դադարեցումը**

1. Չհակասելով 2000/60/ԵՀ հրահանգին, 2004/35/ԵՀ հրահանգին՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի «Աղտոտման ու որակի վատթարացման դեմ ստորգետնյա ջրերի պահպանման մասին» 2006/118/ԵՀ հրահանգին [31] և հողերի պահպանման մասին Միության համապատասխան օրենսդրությանը՝ իրավասու մարմինը թույլ է տալիս սահմանել թույլտվության պայմաններ՝ գործունեության վերջնական դադարեցումից հետո սույն հոդվածի 3-րդ և 4-րդ պարբերությունների կատարումն ապահովելու համար:

2. Եթե գործունեությունը ներառում է համապատասխան վտանգավոր նյութերի օգտագործում, արտադրում կամ արտանետում և հաշվի առնելով կառուցվածքի գտնվելու վայրում հողերի ու ստորգետնյա ջրերի աղտոտման հնարավորությունը, ապա օպերատորը պատրաստում և իրավասու մարմին նախնական զեկույց է

ներկայացնում կառուցվածքի շահագործումն սկսելուց առաջ կամ կառուցվածքի թույլտվությունն առաջին անգամ թարմացնելուց առաջ՝ մինչև 2013 թվականի հունվարի 7-ը:

Նախնական զեկույցը ներառում է այնպիսի տեղեկություններ, որոնք հողերի և ստորգետնյա ջրերի աղտոտման վիճակը որոշելու համար անհրաժեշտ են՝ 3-րդ պարբերությամբ սահմանված գործունեության վերջնական դադարեցումից հետո վիճակի հետ քանակական համեմատություն անելու նպատակով:

Նախնական զեկույցը ներառում է առնվազն հետևյալը՝

ա) տեղեկություններ վայրի ներկա և նախկին օգտագործման մասին.

բ) հնարավորության դեպքում առկա տեղեկությունները հողերի և ստորգետնյա ջրերի չափումների մասին, որոնք արտացոլում են զեկույցը կազմելու ժամանակ դրանց վիճակը կամ հողերի և ստորգետնյա ջրերի նոր չափումներ՝ հաշվի առնելով հողերի և ստորգետնյա ջրերի աղտոտման հնարավորությունն այն վտանգավոր նյութերով, որոնք պետք է օգտագործվեն, արտադրվեն կամ արտանետվեն տվյալ կառուցվածքից:

Եթե այլ ազգային կամ Միության օրենսդրության համաձայն տրամադրվող տեղեկությունները համապատասխանում են սույն պարբերության պահանջներին, ապա այդ տեղեկությունները կարող են ընդգրկվել նախնական զեկույցում կամ կցվել դրան:

Հանձնաժողովը նախնական զեկույցի բովանդակության վերաբերյալ ուղեցույց է սահմանում:

3. Գործունեության վերջնական դադարեցումից հետո օպերատորը գնահատում է այդ կառուցվածքում օգտագործվող, արտադրվող կամ կառուցվածքից արտանետվող վտանգավոր նյութերով հողերի և ստորգետնյա ջրերի աղտոտման վիճակը: Եթե կառուցվածքն առաջացրել է հողերի և ստորգետնյա ջրերի համապատասխան վտանգավոր նյութերով էական աղտոտում՝ համեմատած 2-րդ պարբերությամբ սահմանված նախնական զեկույցում նկարագրված վիճակի հետ, ապա օպերատորը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ՝ վայրի նախնական վիճակը վերականգնելու նպատակով այդ աղտոտման խնդիրը լուծելու համար: Այդ նպատակով կարող է հաշվի առնվել այդ միջոցների տեխնիկական իրագործելիությունը:

Չհակասելով առաջին ենթապարբերությանը՝ գործունեության վերջնական դադարեցումից հետո, եթե հողերի և ստորգետնյա ջրերի աղտոտումը զգալի վտանգ է ներկայացնում մարդու առողջությանը կամ շրջակա միջավայրին՝ որպես օպերատորի կողմից առաջին անգամ մինչև 2013 թվականը հունվարի 7-ը կառուցվածքի թույլտվության թարմացումը թույլատրված գործունեության արդյունք և հաշվի առնելով կառուցվածքի գտնվելու վայրի պայմանները, որոնք սահմանված են 12(1)(դ) հոդվածի համաձայն, ապա օպերատորը ձեռնարկում է

անհրաժեշտ գործողություններ, որոնք ուղղված են համապատասխան վտանգավոր նյութերի հեռացմանը, վերահսկմանը, մեկուսացմանը կամ նվազեցմանը, որպեսզի վայրն այլևս վտանգ չներկայացնի՝ հաշվի առնելով դրա ներկա կամ թույլատրված հետագա օգտագործումը:

4. Եթե օպերատորը պարտավոր չէ 2-րդ պարբերությամբ սահմանված նախնական զեկույց ներկայացնել, ապա գործունեության վերջնական դադարեցումից հետո նա ձեռնարկում է անհրաժեշտ գործողություններ, որոնք ուղղված են վտանգավոր նյութերի հեռացմանը, վերահսկմանը, մեկուսացմանը կամ նվազեցմանը, որպեսզի վայրը, հաշվի առնելով դրա ներկա կամ թույլատրված հետագա օգտագործումը, այլևս վտանգ չներկայացնի մարդու առողջության կամ շրջակա միջավայրի համար՝ հողերի և ստորգետնյա ջրերի աղտոտման հետևանքով, որը թույլատրված գործունեության արդյունք է և հաշվի առնելով կառուցվածքի գտնվելու վայրի պայմանները, որոնք սահմանվել են 12(1)(դ) հոդվածի համաձայն:

### Հոդված 23

#### **Բնապահպանական տեսչական ստուգումները**

1. Անդամ պետությունները սահմանում են կառուցվածքների բնապահպանական տեսչական ստուգումների համակարգ, որը ներառում է համապատասխան կառուցվածքների՝ շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցությունների ուսումնասիրություն:

Անդամ պետություններն ապահովում են, որ օպերատորներն օժանդակեն իրավասու մարմիններին, որպեսզի այդ մարմինները կարողանան այցելել կառուցվածքի գտնվելու վայրը, նմուշներ վերցնել և ստանալ ցանկացած տեղեկություն, որն անհրաժեշտ է՝ սույն Հրահանգի նպատակներով իրենց պարտականությունները կատարելու համար:

2. Անդամ պետություններն ապահովում են, որ բոլոր կառուցվածքները ներառվեն բնապահպանական տեսչական ստուգման պլանում ազգային, տարածաշրջանային կամ տեղական մակարդակով և ապահովում են, որ այս պլանը կանոնավորապես վերանայվի և, անհրաժեշտության դեպքում, թարմացվի:

3. Բնապահպանական տեսչական ստուգման պլանն ընդգրկում է հետևյալը՝  
ա) համապատասխան կարևոր բնապահպանական խնդիրների ընդհանուր գնահատականը.

բ) տեսչական ստուգման պլանում ներառված աշխարհագրական տարածքը.

գ) պլանում ներառված կառուցվածքների ցուցակը.

դ) 4-րդ պարբերության համաձայն կանոնավոր բնապահպանական տեսչական ստուգումների համար ծրագրեր կազմելու ընթացակարգերը.

ե) 5-րդ պարբերության համաձայն՝ ոչ կանոնավոր բնապահպանական ստուգումների ընթացակարգերը.

զ) անհրաժեշտության դեպքում՝ դրույթներ տարբեր տեսչական մարմինների միջև համագործակցության մասին:

4. Հիմնվելով տեսչական ստուգումների պլանների վրա՝ իրավասու մարմինը կանոնավորապես կազմում է ծրագրեր բնապահպանական տեսչական ստուգումների համար՝ ներառյալ տարբեր կառուցվածքների գտնվելու վայրեր այցելությունների պարբերականությունը:

Տվյալ տեղանք երկու այցելության միջև ընկած ժամանակահատվածը հիմնվում է այդ կառուցվածքների բնապահպանական վտանգների համակարգված գնահատման վրա և չի գերազանցում մեկ տարին այն կառուցվածքների համար, որոնք ներկայացնում են ամենամեծ վտանգը և 3 տարին՝ այն կառուցվածքների համար, որոնք ներկայացնում են ամենափոքր վտանգը:

Եթե ստուգման արդյունքում բացահայտվել է թույլտվության պայմանները չբավարարելու լուրջ դեպք, ապա կառուցվածքի գտնվելու վայր լրացուցիչ այցելությունը կատարվում է այդ տեսչական ստուգումից հետո 6 ամսվա ընթացքում:

Բնապահպանական ռիսկերի համակարգված գնահատումը հիմնվում է առնվազն հետևյալ չափորոշիչների վրա՝

ա) մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա տվյալ կառուցվածքների հնարավոր և ներկա ազդեցությունները՝ հաշվի առնելով արտանետումների մակարդակներն ու տեսակները, տեղի շրջակա միջավայրի զգայունությունը և վթարների վտանգը.

բ) թույլտվության պայմանները բավարարելու մասին տեղեկությունները.

գ) օպերատորի մասնակցությունը Միության էկո-կառավարման և աուդիտի համակարգին (ԷԿԱՀ)՝ թիվ 1221/2009 կանոնակարգի (ԵՀ) համաձայն:

Հանձնաժողովը կարող է բնապահպանական ռիսկերի գնահատման չափորոշիչների վերաբերյալ ուղեցույց ընդունել:

5. Ոչ կանոնավոր բնապահպանական տեսչական ստուգումներն իրականացվում են՝ լուրջ բնապահպանական բողոքները, խոշոր բնապահպանական վթարները, պատահարները և պայմանները չբավարարելու դեպքերը հնարավորինս շուտ հետաքննելու և, անհրաժեշտության դեպքում, թույլտվությունը տրամադրելուց, վերանայելուց կամ թարմացնելուց առաջ:

6. Կառուցվածքի գտնվելու վայր յուրաքանչյուր այցելությունից հետո իրավասու մարմինը պատրաստում է զեկույց, որտեղ նկարագրվում են կառուցվածքի՝

թույլտվության պայմանները բավարարելու վերաբերյալ ձեռք բերված տվյալները և հետագա անհրաժեշտ գործողությունների մասին եզրակացությունները:

Համապատասխան օպերատորը զեկույցի մասին տեղեկացվում է կառուցվածքի գտնվելու վայր այցելությունից հետո 2 ամսվա ընթացքում: Չեկույցն իրավասու մարմնի կողմից մատչելի է դարձվում հանրությանը՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 թվականի հունվարի 28-ի «Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկությունների հանրային մատչելիության մասին» 2003/4/ԵՀ հրահանգի համաձայն՝ կառուցվածքի գտնվելու վայր այցելությունից հետո 4 ամսվա ընթացքում:

Չհակասելով 8(2) հոդվածին՝ իրավասու մարմինն ապահովում է, որ օպերատորը զեկույցում նշված բոլոր անհրաժեշտ գործողությունները ձեռնարկի համապատասխան ժամկետում:

#### Հոդված 24

### **Տեղեկությունների մատչելիությունը և հասարակության մասնակցությունը թույլտվություն տրամադրելու ընթացակարգին**

1. Անդամ պետություններն ապահովում են, որ շահագրգիռ հասարակությանը տրվեն արդյունավետ հնարավորություններ՝ վաղ փուլում մասնակցելու հետևյալ ընթացակարգերին՝

ա) նոր կառուցվածքների շահագործման թույլտվության տրամադրում.

բ) ցանկացած էական փոփոխության համար թույլտվության տրամադրում.

գ) կառուցվածքի համար թույլտվության տրամադրում կամ թարմացում, եթե առաջարկվում է 15(4) հոդվածի կիրառումը.

դ) թույլտվության կամ թույլտվության տրամադրման պայմանների թարմացում՝ համաձայն 21(5)(ա) հոդվածի:

IV հավելվածում նշված ընթացակարգը կիրառվում է նման մասնակցությունն ապահովելու նպատակներով:

2. Եթե ընդունվել է թույլտվության տրամադրման, վերանայման կամ թարմացման մասին որոշում, ապա իրավասու մարմինը (ա), (բ) և (գ) կետերի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները մատչելի է դարձնում հանրությանը, այդ թվում՝ համացանցի միջոցով

ա) որոշման բովանդակությունը՝ ներառյալ թույլտվության պատճենը, և հետագա թարմացված տարբերակները.

բ) որոշման հիմքում ընկած պատճառները.

գ) որոշումն ընդունելուց առաջ անցկացված խորհրդակցությունների արդյունքները և բացատրություն, թե ինչպես են դրանք հաշվի առնվել այդ որոշման մեջ.

դ) տվյալ կառուցվածքին կամ գործունեությանը համապատասխան ԼՀՏ ելակետային փաստաթղթերի անվանումը.

ե) ինչպես են սահմանվել 14-րդ հոդվածում նշված թույլտվության պայմանները՝ ներառյալ արտանետումների սահմանային թույլատրելի քանակությունները՝ կապված լավագույն հասանելի տեխնոլոգիաների հետ, և այդ տեխնոլոգիաներին հատուկ սահմանային թույլատրելի քանակությունները.

զ) եթե շեղում է թույլատրվում՝ 15(4) հոդվածի համաձայն, ապա շեղման հիմքում ընկած որոշակի պատճառները՝ այդ պարբերությամբ սահմանված չափորոշիչների հիման վրա և սահմանված պայմանները:

3. Իրավասու մարմինը, կապված առնվազն (ա) կետի հետ, հանրությանը, այդ թվում՝ համացանցի միջոցով, նաև հասանելի է դարձնում հետևյալը՝

ա) համապատասխան տեղեկություններ այն միջոցների մասին, որոնք ձեռնարկվել են օպերատորի կողմից՝ 22-րդ հոդվածի համաձայն գործունեության վերջնական դադարեցումից հետո.

բ) թույլտվության պայմաններով սահմանված արտանետումների դիտանցման արդյունքները, որոնք առկա են իրավասու մարմնի մոտ:

4.1-ին, 2-րդ և 3-րդ պարբերությունները կիրառվում են 2003/4/ԵՏՀ հրահանգի 4 (1) և (2) հոդվածում սահմանված սահմանափակումներով:

## Հոդված 25

### Արդարադատության մատչելիությունը

1. Անդամ պետություններն ապահովում են, որ համապատասխան ազգային օրենսդրության համաձայն, շահագրգիռ հասարակության անդամները կարողանան օգտվել դատարանում կամ մեկ այլ անկախ կամ անկողմնակալ մարմնում վերանայման ընթացակարգից՝ վիճարկելու համար հասարակության որոշումների, գործողությունների կամ անգործության նյութական կամ ընթացակարգային օրինականությունը՝ պահպանելով 24-րդ հոդվածը, եթե բավարարված է հետևյալ պայմաններից որևէ մեկը՝

ա) նրանք բավականաչափ շահագրգռված են.

բ) նրանք պահպանում են իրավունքի խախտման սահմանափակումը, եթե դա պահանջվում է անդամ պետության վարչական դատավարության իրավունքով՝ որպես նախապայման:

2. Անդամ պետությունները սահմանում են, թե որ փուլում կարող են վիճարկվել որոշումները, գործողություններն ու անգործությունը:

3. Թե ինչ են իրենցից ներկայացնում բավարար շահագրգռվածությունը և իրավունքի չեղյալ հայտարարումը, սահմանվում է անդամ պետությունների կողմից՝ համաձայն հասարակության համար արդարադատության մատչելիությունն ապահովելու նպատակի:

Այս նպատակով շրջակա միջավայրի պաշտպանությունը խթանող և ազգային օրենսդրության բոլոր պահանջները բավարարող կազմակերպությունների շահագրգռվածությունը համարվում է բավարար՝ 1(ա) պարբերության նպատակով:

Նման կազմակերպություններն ունեն նաև սահմանափակման ենթակա իրավունքներ՝ սույն հոդվածի 1(բ) պարբերության նպատակով:

4. 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերությունները չեն բացառում նախնական վերանայման ընթացակարգի հնարավորությունը վարչական որևէ մարմնում և չեն ազդում դատական վերանայման ընթացակարգից առաջ վարչական վերանայման ընթացակարգի դադարման պահանջի վրա, եթե նման պահանջ կա՝ ազգային օրենսդրության համաձայն:

Ցանկացած նման ընթացակարգ պետք է լինի արդար, անաչառ, առանց ձգձգումների և չընդգրկի չափազանց մեծ ծախսեր:

5. Անդամ պետություններն ապահովում են, որ գործնական վարչական և դատական վերանայումների ընթացակարգերի մասին տեղեկությունները մատչելի դարձվեն հանրությանը:

## Հոդված 26

### **Անդրսահմանային ազդեցությունները**

1. Եթե անդամ պետությանը հայտնի է, որ որևէ կառուցվածքի շահագործումը կարող է բացասաբար ազդել մեկ այլ անդամ պետության շրջակա միջավայրի վրա, կամ եթե որևէ անդամ պետություն, որը կարող է էական ազդեցություններ կրել, նման պահանջ է ներկայացնում, ապա այն անդամ պետությունը, որի տարածքում, 4-րդ կամ 20(2) հոդվածի համաձայն, թույլտվություն ստանալու մասին դիմում է ներկայացվել, մյուս անդամ պետություն է ուղարկում ցանկացած տեղեկություն, որը պահանջվում է տրամադրել կամ մատչելի դարձնել 5-րդ հավելվածի համաձայն, այն նույն ժամանակահատվածում, երբ այդ տեղեկությունը մատչելի է դարձվում հանրությանը:

Այդ տեղեկությունները հիմք են երկկողմ հարաբերությունների շրջանակներում երկու անդամ պետությունների միջև փոխադարձության և համարժեքության հիման վրա անցկացվող ցանկացած խորհրդակցության համար:

2. Երկկողմ հարաբերությունների շրջանակում անդամ պետություններն ապահովում են, որ 1-ին պարբերության մեջ նշված դեպքերում դիմումները համապատասխան ժամկետներով մատչելի լինեն այն անդամ պետության հասարակությանը, որը կարող է ազդեցություն կրել, որպեսզի այդ հասարակությունը իրավասու մարմնի կողմից որոշումն ընդունելուց առաջ կարողանա հայտնել իր դիտողությունները:

3. 1-ին և 2-րդ պարբերությունների մեջ նշված խորհրդակցությունների արդյունքները պետք է հաշվի առնվեն այն ժամանակ, երբ իրավասու մարմինը որոշում է ընդունում դիմումի վերաբերյալ:

4. Իրավասու մարմինը տեղեկացնում է ցանկացած անդամ պետության, որի հետ խորհրդակցել են 1-ին պարբերության համաձայն, դիմումի վերաբերյալ ընդունած որոշման մասին և այդ անդամ պետություն է ուղարկում 24(2) հոդվածում նշված տեղեկությունները: Այդ անդամ պետությունը միջոցներ է ձեռնարկում՝ ապահովելու, որ նշված տեղեկությունները համապատասխանորեն մատչելի լինեն այդ պետության տարածքի շահագրգիռ հասարակությանը:

#### Հոդված 27

### **Նոր տեխնոլոգիաները**

1. Անդամ պետությունները, անհրաժեշտության դեպքում, նպաստում են նոր տեխնոլոգիաների զարգացմանն ու կիրառմանը և, մասնավորապես, այն տեխնոլոգիաների, որոնք նշված են ԼՀՏ ելակետային փաստաթղթերում:

2. Հանձնաժողովն ուղեցույց է սահմանում՝ 1-ին պարբերության մեջ նշված նոր տեխնոլոգիաների կատարելագործման և կիրառման խրախուսման գործում անդամ պետություններին օժանդակելու նպատակով:

#### ԳԼՈՒԽ III

### **ԱՅՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՏՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ**

#### Հոդված 28

### **Գործողության ոլորտը**

Սույն գլուխը կիրառվում է 50 ՄՎտ-ին հավասար կամ ավելի ընդհանուր նոմինալ ջերմային հզորությամբ այրման կայանների նկատմամբ՝ անկախ օգտագործվող վառելիքի տեսակից:

Սույն գլուխը չի կիրառվում հետևյալ այրման կայանների նկատմամբ՝



- ա) կայաններ, որտեղ այրման արգասիքներն օգտագործվում են ուղղակի տաքացման, չորացման կամ առարկաների ու նյութերի որևէ այլ ձևով մշակման համար.
- բ) այրման հետևանքով արտանետված գազերի մաքրման համար նախատեսված հետայրման կայաններ, որոնք չեն շահագործվում որպես առանձին այրման կայաններ.
- գ) կատալիտիկ կրեկինգի կատալիզատորների ռեգեներացիայի համար նախատեսված կառուցվածքներ,
- դ) ծծմբաջրածինը ծծմբի վերածելու համար նախատեսված կառուցվածքներ.
- ե) քիմիական արդյունաբերության մեջ օգտագործվող ռեակտորներ.
- զ) կոքսի վառարաններ.
- է) դոմնային օդատաքացուցիչներ.
- ը) ցանկացած տեխնիկական սարքավորում, որն օգտագործվում է տրանսպորտային միջոցի, նավի կամ օդանավի մղման համար.
- թ) ծովային հորատող հարթակների վրա օգտագործվող գազատուրբիններ և գազով աշխատող շարժիչներ.
- ժ) գործարաններ, որոնք որպես վառելիք օգտագործում են 3 (31) հոդվածի (բ) կետում նշված թափոններից տարբեր՝ ցանկացած այլ թափոն՝ հեղուկ կամ պինդ վիճակում:

## Հոդված 29

### **Միավորման կանոնները**

1. Եթե մեկ կամ ավելի առանձին այրման կայաններից արտանետված գազերը հեռացվում են ընդհանուր ծխատար խողովակով, ապա այդ կայանների համակցությունը դիտարկվում է որպես մեկ այրման կայան, իսկ դրանց արտադրողական հզորությունը հաշվի է առնվում ընդհանուր նոմինալ ջերմային հզորության հաշվարկման համար:

2. Եթե երկու կամ ավելի առանձին այրման կայաններ, որոնց առաջին անգամ թույլտվություն է տրվել 1987 թվականի հունիսի 1-ին կամ դրանից հետո, կամ եթե վերջիններիս օպերատորները ներկայացրել են թույլտվության համար լրացված դիմում՝ նշված նույն ժամանակահատվածում, ապա հաշվի առնելով տեխնիկական և տնտեսական գործոնները, վերջիններս, ըստ իրավասու մարմինների, տեղակայվում են այնպես, որ դրանցից արտանետվող գազերը հեռացվեն ընդհանուր ծխատար խողովակով, իսկ այդ կայանների համակցությունը դիտարկվում է որպես մեկ այրման կայան, և արտադրողական հզորության ցուցանիշները գումարվում են՝ ընդհանուր նոմինալ ջերմային հզորությունը հաշվարկելու համար:

3.1-ին և 2-րդ պարբերությունների մեջ նշված այրման կայանների համակցության ընդհանուր նոմինալ ջերմային հզորությունը հաշվարկելիս հաշվի չեն առնվում 15 ՄՎտ-ից ցածր նոմինալ ջերմային հզորությամբ այրման կայանները:

### Հոդված 30

#### **Արտանետումների թույլատրելի սահմանային քանակությունները**

1. Այրման կայաններից արտանետված գազերը վերահսկված կերպով հեռացվում են մեկ կամ մի քանի ծխնելույզներ ունեցող ծխատարի միջոցով, որի բարձրությունը հաշվարկված է այնպես, որ պահպանի մարդու առողջությունը և շրջակա միջավայրը:

2.. Նախքան 2013 թվականի հունվարի 7-ը թույլտվություն ստացած և այրման կայաններ ունեցող կառուցվածքների բոլոր թույլտվությունները, որոնց օպերատորները թույլտվության համար լրացված դիմում են ներկայացրել՝ նախքան նշված նույն ժամանակահատվածը, և որոնք գործարկվել են, 2014 թվականի հունվարի 7-ից ոչ ուշ, ներառում են այնպիսի պայմաններ, որոնք ապահովում են, որ նշված կառուցվածքների համար նախատեսված՝ V հավելվածի 1-ին մասով սահմանված արտանետումների թույլատրելի սահմանային քանակությունները չգերազանցվեն:

Այրման կայաններ ունեցող այն կառուցվածքների բոլոր թույլտվությունները, որոնց նկատմամբ բացառություն է կատարվել 2001/80/ԵՀ հրահանգի 4(4) հոդվածում նշվածի համաձայն, և որոնք սկսել են գործել 2016 թվականի հունվարի 1-ից հետո, ներառում են նշված կայանների համար նախատեսված՝ V հավելվածի 2-րդ մասով սահմանված արտանետումների թույլատրելի սահմանային քանակությունները չգերազանցող պայմաններ:

3. 2-րդ պարբերությամբ չկարգավորվող և այրման կայաններ ունեցող կառուցվածքների բոլոր թույլտվությունները ներառում են այնպիսի պայմաններ, որոնցով ապահովվում է, որ այս կայաններից կատարվող արտանետումները չգերազանցեն V հավելվածի 2-րդ մասով սահմանված արտանետումների թույլատրելի սահմանային քանակությունները:

4. V հավելվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված արտանետումների թույլատրելի սահմանային քանակությունները, ինչպես նաև նույն հավելվածի 5-րդ մասով սահմանված նվազագույն ծծմբազերծման գործակիցները կիրառվում են յուրաքանչյուր ընդհանուր ծխատարի արտանետումների նկատմամբ՝ ամբողջ այրման կայանի ընդհանուր նոմինալ ջերմային հզորության հարաբերությամբ հաշվարկված սահմանաչափով: Եթե V հավելվածով նախատեսվում է, որ արտանետումների թույլատրելի սահմանային նորմաները կարող են կիրառվել սահմանափակ շահագործման ժամերով՝ այրման կայանի մի հատվածի համար միայն, ապա այդ սահմանային քանակությունները կիրառվում են այդ հատվածի արտանետումների նկատմամբ, սակայն սահմանվում են այրման կայանի

ընդհանուր նոմինալ ջերմային հզորության հարաբերությամբ հաշվարկված սահմանաչափով:

5. Իրավասու մարմինը կարող է առավելագույնը վեց ամսով վերապահում կատարել 2-րդ և 3-րդ պարբերություններով նախատեսված ծծմբի դիօքսիդի համար սահմանված արտանետումների թույլատրելի սահմանային քանակություններին համապատասխանելու այն այրման կայանի պարտավորության մասով, որն այդ նպատակով արդեն ծծմբի ցածր պարունակությամբ վառելիք է օգտագործում, և այն դեպքերում, երբ օպերատորն ի վիճակի չէ բավարարելու այդ սահմանային թույլատրելի քանակությունները՝ պայմանավորված լուրջ պակասուրդի պատճառով ծծմբի ցածր պարունակությամբ վառելիքի մատակարարման ընդհատումներով:

Անդամ պետությունները Հանձնաժողովին պետք է անմիջապես տեղեկացնեն առաջին ենթապարբերության շրջանակում կատարված ցանկացած շեղման մասին:

6. Իրավասու մարմինը կարող է շեղում թույլ տալ 2-րդ և 3-րդ պարբերություններով նախատեսված արտանետումների թույլատրելի սահմանային նորմաների պարտավորության մասով այն դեպքում, երբ միայն գազային վառելիք օգտագործող այրման կայանը մատակարարման հանկարծակի ընդհատման պատճառով ստիպված է օգտվելու բացառապես այլ վառելիքներից և այդ պատճառով արտանետվող գազի մաքրման սարքավորմամբ համալրման կարիք ունի: Այդօրինակ շեղման ժամանակահատվածը չպետք է գերազանցի 10 օրը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ գերակա անհրաժեշտություն կա պահպանելու էլեկտրաէներգիայի մատակարարումները:

Օպերատորն իրավասու մարմնին պետք է անմիջապես տեղեկացնի առաջին պարբերության մեջ նշված յուրաքանչյուր առանձնահատուկ դեպքի մասին:

Անդամ պետությունները Հանձնաժողովին պետք է անմիջապես տեղեկացնեն առաջին պարբերության շրջանակում կատարված ցանկացած շեղման մասին:

7. Այրման կայանի ընդլայնման դեպքում V հավելվածի 2-րդ մասով սահմանված արտանետումների թույլատրելի սահմանային թույլատրելի քանակությունները կիրառվում են կայանի ընդլայնված և փոփոխության ենթարկված մասի նկատմամբ և սահմանվում են ամբողջ այրման կայանի ընդհանուր նոմինալ ջերմային հզորության հարաբերությամբ հաշվարկված սահմանաչափով: Այն դեպքում, երբ այրման կայանում կատարված փոփոխությունը կարող է իր հետևանքներն ունենալ շրջակա միջավայրի համար, և որը վերաբերում 15 ՄՎտ կամ ավելի նոմինալ ջերմային հզորությամբ այրման կայանի մի մասին, ապա V հավելվածի 2-րդ մասով սահմանված արտանետումների թույլատրելի

սահմանային քանակությունները կիրառվում են փոփոխության ենթարկված կայանի տվյալ մասի նկատմամբ՝ ամբողջ այրման կայանի ընդհանուր նոմինալ ջերմային հզորության հարաբերությամբ հաշվարկված սահմանաչափով:

8. V հավելվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված թույլատրելի սահմանային քանակությունները չեն կիրառվում հետևյալ այրման կայանների նկատմամբ՝

ա) դիզելային վառելիքով աշխատող շարժիչներ.

բ) ցելյուլոզայի արտադրության համար նախատեսված ռեգեներատոր-կաթսաներ:

9. Հանձնաժողովը լավագույն հասանելի տեխնոլոգիաների հիման վրա պետք է վերանայի հետևյալ այրման կայանների համար Միության տարածքում արտանետումների թույլատրելի սահմանային քանակություններ սահմանելու և V հավելվածով սահմանված արտանետումների թույլատրելի սահմանային քանակությունների փոփոխման անհրաժեշտությունը՝

ա) 8-րդ պարբերությամբ նշված այրման կայաններ.

բ) մշակման գործարաններում առկա այրման կայաններ, որոնք սեփական սպառման համար առանձին կամ այլ վառելիքների հետ միասին օգտագործում են նավթամշակումից ստացված թորման և փոխարկման մնացորդներ՝ հաշվի առնելով այդ գործարանների էներգետիկ համակարգերի առանձնահատկությունը.

գ) ոչ բնական գազով շահագործվող այրման կայաններ.

դ) քիմիական կայանքներում առկա այրման կայաններ, որոնք սեփական սպառման համար որպես ոչ առևտրային վառելիք արտադրական հեղուկ մնացորդներ են օգտագործում.

Հանձնաժողովը մինչև 2013 թվականի դեկտեմբերի 31-ը Եվրոպական պառլամենտ և վերջինիս կից Խորհուրդ հարկ եղած դեպքում՝ որպես օրենսդրական առաջարկ, հաշվետվություն պետք է ներկայացնի՝ այդ վերանայման արդյունքների վերաբերյալ:

## Հոդված 31

### **Ծծմբազերծման գործակիցը**

1. Տեղական ծագում ունեցող պինդ վառելիքներով շահագործվող այրման այն կայանների դեպքում, որոնք չեն կարող համապատասխանել ծծմբի երկօքսիդի արտանետումների՝ 30(2) ու (3) հոդվածով նշված սահմանային թույլատրելի նորմաներին, անդամ պետությունները կարող են դրա փոխարեն կիրառել ծծմբազերծման՝ V հավելվածի 5-րդ մասով սահմանված նվազագույն գործակիցները՝ այդ հավելվածի 6-րդ մասով սահմանված համապատասխանության կանոնների համաձայն, և իրավասու մարմնի կողմից՝ 72(4)(ա) հոդվածով նշված տեխնիկական զեկույցի նախնական հաստատմամբ:

2. Տեղական ծագման այրման վառելիքներով շահագործվող այրման այն կայանների դեպքում, որոնք համատեղ այրում են թափոնները, և որոնք տեղական ծագման պինդ վառելիքների առանձնահատկությունների պատճառով չեն կարող համապատասխանել ծծմբի երկօքսիդի՝ VI հավելվածի 4-րդ մասի 3.1 կամ 3.2 կետերի Cproc արժեքներին, անդամ պետությունները դրանց փոխարեն կարող են կիրառել ծծմբազերծման՝ V հավելվածի 5-րդ մասով սահմանված նվազագույն գործակիցները՝ այդ հավելվածի 6-րդ մասով սահմանված համապատասխանության կանոնների համաձայն: Եթե անդամ պետությունները որոշում են կիրառել սույն պարբերությունը, ապա VI հավելվածի 4-րդ մասի 1-ին կետով նշված Ըթափոնները պետք է լինեն 0 մգ/նխմ:

3. Հանձնաժողովը պետք է մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը վերանայի ծծմբազերծման՝ V հավելվածի 5-րդ մասով սահմանված նվազագույն գործակիցները կիրառելու հնարավորությունը՝ հաշվի առնելով, մասնավորապես, առկա լավագույն տեխնոլոգիաները և ծծմբի երկօքսիդի արտանետումների նվազեցման շնորհիվ ձեռք բերված օգուտները:

### Հոդված 32

#### **Անցումային ազգային ծրագիրը**

1. 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածի ընթացքում անդամ պետությունները կարող են կազմել և իրականացնել անցումային ազգային ծրագիր, որում ընդգրկում են այրման այն կայանները, որոնք առաջին թույլտվությունն ստացել են 2002 թվականի նոյեմբերի 27-ից առաջ, կամ այն օպերատորները, ովքեր թույլտվության ամբողջական դիմում էին ներկայացրել մինչև այդ ամսաթիվը՝ պայմանով, որ կայանը շահագործվել է, 2003 թվականի նոյեմբերի 27-ից ոչ ուշ: Ծրագրում ընդգրկված այրման կայաններից յուրաքանչյուրի համար ծրագրում պետք է ներառվի հետևյալ աղտոտող նյութերից մեկի կամ մի քանիսի արտանետումները՝ ազոտի օքսիդներ, ծծմբի երկօքսիդ և փոշի: Գազատուրբինների մասով ծրագրում ընդգրկվում են միայն ազոտի օքսիդների արտանետումները:

Անցումային ազգային ծրագրում չպետք է ընդգրկվեն հետևյալ այրման կայանները՝

ա) այն կայանները, որոնց նկատմամբ կիրառվում է 33(1) հոդվածը.

բ) մշակման գործարաններում առկա այրման կայանները, որոնք առանձին կամ այլ վառելիքների հետ միասին օգտագործում են սեփական սպառման համար չմշակված նավթի մշակումից գոյացած մնացորդների կամ թորման ու փոխակերպման մնացորդների գազացման միջոցով ձեռք բերված ցածր կալորիականությամբ գազեր.

գ) այն կայանները, որոնց նկատմամբ կիրառվում է 35-րդ հոդվածը.

դ) այն կայանները, որոնք ստացել են 2001/80/ԵՀ հրահանգի 4(4) հոդվածով նշված թույլտվությունը:

2. Ծրագրում ընդգրկված այրման կայաններին կարող է տրամադրվել ծրագրի առարկա հանդիսացող աղտոտող նյութերի համար 30(2) հոդվածով նշված արտանետումների սահմանային թույլատրելի նորմաներին կամ, անհրաժեշտության դեպքում, ծծմբազերծման՝ 31-րդ հոդվածով նշված գործակիցներին չհամապատասխանելու թույլտվություն:

Ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների և փոշու արտանետումների համար այրման կայանի թույլտվությամբ սահմանված սահմանային թույլատրելի այն նորմաները, որոնք կիրառելի են 2015 թվականի դեկտեմբերի 31-ին, մասնավորապես՝ 2001/80/ԵՀ և 2008/1/ԵՀ հրահանգների պահանջների համաձայն, պետք է առնվազն պահպանվեն:

Տեղական ծագման պինդ վառելիքներով շահագործվող այրման կայանները, որոնց նմինալ ջերմային հզորությունը 500 ՄՎտ-ից ավելի է, և որոնք առաջին թույլտվությունը ստացել են 1987 թվականի հուլիսի 1-ից հետո, պետք է համապատասխանեն ազոտի օքսիդների արտանետումների՝ V հավելվածի 1-ին մասով սահմանված սահմանային թույլատրելի նորմաներին:

3. Անցումային ազգային ծրագրում ընդգրկված յուրաքանչյուր աղտոտող նյութի համար ծրագրով սահմանվում է որոշակի սահմանաչափ՝ որպես ծրագրով կարգավորվող կայանների համար տարեկան արտանետումների ընդհանուր առավելագույն քանակ՝ հիմնվելով յուրաքանչյուր կայանի 2010 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր նմինալ ջերմային հզորության, տարվա կտրվածքով կայանի տարեկան ընդհանուր աշխատանքային ժամերի և վառելիքի օգտագործման վրա՝ հաշվարկված որպես վերջին 10 տարիների՝ ներառյալ 2010 թվականը, միջին ցուցանիշ:

2016 թվականի համար սահմանաչափը հաշվարկվում է 2001/80/ԵՀ հրահանգի III-VII հավելվածներով սահմանված՝ համապատասխան սահմանային թույլատրելի նորմաների կամ, համապատասխան դեպքերում, 2001/80/ԵՀ հրահանգի III հավելվածով սահմանված ծծմբազերծման գործակիցների հիման վրա: Գազատուրբինների դեպքում կիրառվում են 2001/80/ԵՀ հրահանգի VI հավելվածի Բ մասով նման կայանների համար ազոտի օքսիդների արտանետումների համար սահմանված սահմանային թույլատրելի նորմաները: 2019 և 2020 թվականների համար սահմանաչափերը հաշվարկվում են սույն Հրահանգի 1-ին մասով սահմանված համապատասխան սահմանային թույլատրելի նորմաների կամ, համապատասխան դեպքերում, սույն Հրահանգի V հավելվածով սահմանված ծծմբազերծման համապատասխան գործակիցների հիման վրա: 2017 և 2018 թվականների համար սահմանաչափերը սահմանվում են՝ ապահովելով 2016-2019 թվականների սահմանաչափերի գծային նվազեցումը:

Եթե անցումային ազգային ծրագրով կարգավորվող կայանը փակվում է կամ այլևս չի ընդգրկվում III գլխում, այդ փաստը չպետք է հիմք հանդիսանա ծրագրով կարգավորվող մնացած կայաններից կատարվող ընդհանուր տարեկան արտանետումների ավելացման համար:

4. Անցումային ազգային ծրագիրը պետք է նաև պարունակի դրույթներ դիտանցման և հաշվետվությունները ներկայացնելու մասին, որոնք համապատասխանում են 41(բ) հոդվածի համաձայն սահմանված կիրարկող կանոններին, ինչպես նաև կայաններից յուրաքանչյուրի համար նախատեսված այն միջոցների մասին, որոնք պետք է ապահովեն համապատասխանությունը արտանետումների սահմանային թույլատրելի այն նորմաներին, որոնք պետք է կիրառվեն 2020 թվականի հուլիսի 1-ից:

5. Անդամ պետությունները պետք է 2013 թվականի հունվարի 1-ից ոչ ուշ Հանձնաժողով ներկայացնեն իրենց անցումային ազգային ծրագրերը:

Հանձնաժողովը պետք է գնահատի այդ ծրագրերը, և եթե Հանձնաժողովը ծրագիրն ստանալուց հետո 12 ամիսների ընթացքում որևէ առարկություն չի ներկայացնում, համապատասխան անդամ պետությունը պետք է իր ծրագիրն ընդունված համարի:

Եթե Հանձնաժողովը համարում է, որ ծրագիրը չի համապատասխանում 41(բ) հոդվածի համաձայն սահմանված կիրարկող կանոններին, այն համապատասխան անդամ պետությանը տեղեկացնում է այն մասին, որ ծրագիրը չի կարող ընդունվել: Անդամ պետության կողմից Հանձնաժողով ներկայացված ծրագրի նոր տարբերակի գնահատման համար երկրորդ պարբերությամբ նշված ժամկետը պետք է 6 ամիս լինի:

6. Անդամ պետությունները Հանձնաժողովին հայտնում են ծրագրի ցանկացած հետագա փոփոխության մասին:

### Հոդված 33

Սահմանափակ ժամկետով գործելու դեպքում կիրառվող վերապահումը

1. 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի ընթացքում ծրագրում ընդգրկված այրման կայաններին կարող է տրամադրվել ծրագրի առարկա հանդիսացող աղտոտող նյութերի համար 30(2) հոդվածով նշված արտանետումների սահմանային թույլատրելի նորմաներին կամ, անհրաժեշտության դեպքում, ծմբազերծման՝ 31-րդ հոդվածով նշված գործակիցներին չհամապատասխանելու և 32-րդ հոդվածով նշված անցումային ազգային ծրագրում չընդգրկվելու թույլտվություն՝ պայմանով, որ բավարարված լինեն հետևյալ պայմանները՝

ա) այրման կայանի օպերատորն ամենաուշը մինչև 2014 թվականի հունվարի 1-ը ներկայացված գրավոր հայտարարագրով պարտավորվում է չշահագործել կայանը 175000 աշխատանքային ժամից ավելի՝ սկսած 2016 թվականի հունվարի 1-ից մինչև ամենաուշը 2023 թվականի դեկտեմբերի 31-ը.

բ) օպերատորը պարտավոր է յուրաքանչյուր տարի իրավասու մարմին ներկայացնել աշխատանքային ժամերի թիվը՝ սկսած 2016 թվականի հունվարի 1-ից.

գ) ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների և փոշու արտանետումների համար այրման կայանի թույլտվությամբ սահմանված սահմանային թույլատրելի նորմաները, որոնք կիրառելի են 2015 թվականի դեկտեմբերի 31-ին՝ մասնավորապես 2001/80/ԵՀ և 2008/1/ԵՀ հրահանգների պահանջների համաձայն, պետք է առնվազն պահպանվեն մինչև այրման կայանի շահագործման ավարտը: Տեղական ծագման պինդ վառելիքներով շահագործվող այրման կայանները, որոնց նոմինալ ջերմային հզորությունը 500 ՄՎտ-ից ավելի է, և որոնք առաջին թույլտվությունը ստացել են 1987 թվականի հուլիսի 1-ից հետո, պետք է համապատասխանեն ազոտի օքսիդների արտանետումների՝ V հավելվածի 1-ին մասով սահմանված սահմանային թույլատրելի նորմաներին և

դ) այրման կայանը չի ստացել 2001/80/ԵՀ հրահանգի 4(4) հոդվածով սահմանված թույլտվությունը:

2. Ամենաուշը 2016 թվականի հունվարի 1-ին յուրաքանչյուր անդամ պետություն Հանձնաժողով է ներկայացնում այն այրման կայանների ցանկը, որոնց նկատմամբ կիրառվում է 1-ին պարբերությունը՝ ներառյալ դրանց նոմինալ ջերմային հզորությունը, օգտագործվող վառելիքների տեսակներն ու ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների և փոշու արտանետումների համար կիրառվող սահմանային թույլատրելի նորմաները: 1-ին պարբերության մեջ նշված կայանների վերաբերյալ անդամ պետությունները ամեն տարի Հանձնաժողովին տեղեկացնում են 2016 թվականի հունվարի 1-ից աշխատանքային ժամերի թվի մասին:

3. Եթե 2011 թվականի հունվարի 6-ի դրությամբ փոքր առանձնացված համակարգի մաս հանդիսացող և այդ համակարգի ներսում էլեկտրաէներգիայի մատակարարման առնվազն 35%-ն ապահովող այրման կայանը տեխնիկական առանձնահատկությունների հետևանքով չի կարող համապատասխանել 30(2) հոդվածով նշված սահմանային թույլատրելի նորմաներին, ապա սույն հոդվածի 1(ա) պարբերության մեջ նշված աշխատանքային ժամերի թիվը պետք է լինի 18000՝ սկսած 2020 թվականի հունվարի 1-ից մինչև ոչ ուշ, քան մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը, իսկ սույն հոդվածի 1(բ) պարբերության և 2-րդ պարբերության մեջ նշված ամսաթիվը պետք է լինի 2020 թվականի հունվարի 1-ը:

4. 1500 ՄՎտ-ից ավելի նոմինալ ջերմային հզորությամբ այրման այնպիսի կայանի դեպքում, որը շահագործման է հանձնվել 1986 թվականի դեկտեմբերի



31-ից առաջ և օգտագործում է 5800 կՋ/կգ-ից պակաս ջերմարարությամբ տեղական ծագման պինդ վառելիքներ, որոնց մեջ խոնավության պարունակությունը ըստ զանգվածի 45%-ից, խոնավության ու մոխրի գումարային պարունակությունը ըստ զանգվածի 60%-ից, իսկ կալցիումի օքսիդի պարունակությունը 10%-ից ավելի է, 1(ա) պարբերությամբ նշված աշխատանքային ժամերի թիվը պետք է լինի 32000:

#### Հոդված 34

### **Փոքր առանձնացված համակարգեր**

1. Մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը այն այրման կայանները, որոնք 2011 թվականի հունվարի 6-ի փոքր առանձնացված համակարգերի մաս են կազմել, կարող են ստանալ արտանետումների՝ 30(2) հոդվածով նշված սահմանային թույլատրելի նորմաներին և, անհրաժեշտության դեպքում, 31-րդ հոդվածում նշված՝ ծծմբազերծման գործակիցներին չհամապատասխանելու թույլտվություն: Մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը այս այրման կայանների թույլտվություններում նշված արտանետումների սահմանային թույլատրելի նորմաները պետք է առնվազն պահպանվեն՝ մասնավորապես 2001/80/ԵՀ և 2008/1/ԵՀ հրահանգների պահանջներին համապատասխան:

2. Տեղական ծագման պինդ վառելիքներով շահագործվող այն այրման կայանները, որոնց նոմինալ ջերմային հզորությունը 500 ՄՎտ-ից ավելի է, և որոնք առաջին թույլտվությունը ստացել են 1987 թվականի հուլիսի 1-ից հետո, պետք է համապատասխանեն ազոտի օքսիդների արտանետումների՝ V հավելվածի 1-ին մասով սահմանված սահմանային թույլատրելի նորմաներին:

3. Եթե անդամ պետության տարածքում կան սույն գլխով կարգավորվող այրման կայաններ, որոնք փոքր առանձնացված համակարգերի մաս են կազմում, ապա այդ անդամ պետությունը մինչև 2013 թվականի հունվարի 7-ը Հանձնաժողով է ներկայացնում այդ այրման կայանների ցանկը, փոքր առանձնացված համակարգի ընդհանուր տարեկան էներգասպառումը և այլ համակարգերի հետ փոխկապակցված լինելու հաշվին ձեռք բերված էներգիայի քանակությունը:

#### Հոդված 35

### **Կենտրոնացված ջեռուցման կայանները**

1. Մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը այրման կայանը կարող է ստանալ արտանետումների՝ 30(2) հոդվածով նշված սահմանային թույլատրելի նորմաներին և, անհրաժեշտության դեպքում, 31-րդ հոդվածով նշված ծծմբազերծման գործակիցներին չհամապատասխանելու թույլտվություն՝ պայմանով, եթե բավարարված են հետևյալ պայմանները՝

ա) այրման կայանի նոմինալ ջերմային հզորությունը չի գերազանցում 200 ՄՎտ-ն.

բ) կայանն առաջին թույլտվությունը ստացել է մինչև 2002 թվականի նոյեմբերի 27-ը, կամ այդ կայանի օպերատորը թույլտվության ամբողջական դիմում է ներկայացրել այդ ամսաթվից առաջ՝ պայմանով, որ կայանը շահագործման է հանձնվել 2003 թվականի նոյեմբերի 27-ից ոչ ուշ.

գ) կայանում արտադրված օգտակար ջերմության առնվազն 50%-ը, որպես 5 տարվա սահող միջինը, կենտրոնացված ջեռուցման հանրային ցանց է մատակարարվում որպես գոլորշի կամ տաք ջուր և

դ) ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների և փոշու արտանետումների համար 2015 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կիրառվող թույլտվությամբ սահմանված սահմանային թույլատրելի նորմաները, 2001/80/ԵՀ և 2008/1/ԵՀ հրահանգների պահանջների համաձայն, պահպանվում են առնվազն մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը:

2. Յուրաքանչյուր անդամ պետություն ամենաուշը 2016 թվականի հունվարի 1-ին Հանձնաժողով է ներկայացնում այն այրման կայանների ցանկը, որոնց նկատմամբ կիրառվում է 1-ին պարբերությունը՝ ներառյալ դրանց նոմինալ ջերմային հզորությունը, օգտագործվող վառելիքների տեսակները և ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների ու փոշու արտանետումների համար սահմանված սահմանային թույլատրելի նորմաները: Բացի դրանից՝ անդամ պետությունները պետք է ցանկացած այն կայանի վերաբերյալ, որի նկատմամբ կիրառվում է 1-ին պարբերությունը, և այդ պարբերությամբ նշված ժամանակահատվածում ամեն տարի Հանձնաժողովին տեղեկացնեն յուրաքանչյուր կայանում արտադրված օգտակար էներգիայի այն մասնաբաժնի մասին, որը որպես գոլորշի կամ տաք ջուր մատակարարվել է կենտրոնացված ջեռուցման հանրային ցանց՝ արտահայտված որպես նախորդ 5 տարիների սահող միջինը:

### Հոդված 36

#### **Ածխաթթու գազի ստորգետնյա պահեստավորումը**

1. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ 300 մեգավատ կամ ավելի էլեկտրական հզորություն ունեցող բոլոր այն այրման կայանների օպերատորները, որոնց համար շինարարության սկզբնական լիցենզիան, կամ նման կարգի բացակայության դեպքում, շահագործման սկզբնական լիցենզիան, տրվել է «Ածխաթթու գազի ստորգետնյա պահեստավորման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 թվականի ապրիլի 23-ի 2009/31/ԵՀ հրահանգն ուժի մեջ մտնելուց հետո, ապահովեն, որ բավարարվել են հետևյալ պայմանները՝

ա) առկա են պահեստավորման համապատասխան վայրեր,

բ) փոխադրման կառուցվածքները տեխնիկապես և տնտեսապես հիմնավորված են,

գ) ածխաթթու գազի որսման կայանքների կատարելագործումը տեխնիկապես և տնտեսապես հիմնավորված է:

2. Եթե բավարարվում են 1-ին պարբերությամբ սահմանված պայմանները, ապա իրավասու մարմինն ապահովում է, որ օբյեկտի տեղակայման վայրում հարմար տեղ առանձնացվի՝ ածխաթթու գազի որսման և սեղմման համար: Իրավասու մարմինը որոշում է պայմանների հետ համապատասխանությունը 1-ին պարբերության մեջ նշված գնահատման և առկա այլ տվյալների հիման վրա, հատկապես՝ շրջակա միջավայրի և մարդու առողջության պաշտպանության համար:

### Հոդված 37

#### **Արտանետումների նվազեցման սարքավորման անսարքությունը կամ խափանումը**

1. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ թույլտվություններում դրույթ սահմանվի՝ արտանետումները նվազեցնելու սարքավորման անսարքությունը կամ խափանմանը վերաբերող ընթացակարգերի վերաբերյալ:

2. Խափանման դեպքում իրավասու մարմինը պետք է օպերատորից պահանջի, որ վերջինս կրճատի կամ դադարեցնի շահագործումը, եթե բնականոն շահագործումը հնարավոր չէ ապահովել 24 ժամվա ընթացքում, կամ կայանը շահագործել՝ օգտագործելով քիչ աղտոտող վառելիք:

Օպերատորը պետք է արտանետումների նվազեցման սարքավորման անսարքությունից կամ խափանումից հետո 48 ժամվա ընթացքում դրա մասին տեղեկացնի իրավասու մարմնին:

Առանց արտանետումների նվազեցման՝ շահագործման հանրագումարային տևողությունը ցանկացած տասներկուամսյա ժամանակահատվածում չպետք է գերազանցի 120 ժամը:

Իրավասու մարմինը կարող է շեղում թույլատրել առաջին և երրորդ ենթապարբերություններով սահմանված ժամկետներից հետևյալ դեպքերից որևէ մեկում՝

ա) կա էլեկտրաէներգիայի մատակարարումը պահպանելու գերակա անհրաժեշտություն.

բ) այն այրման կայանը, որի գործունեությունը խափանվել է, սահմանափակ ժամանակով կփոխարինվի մեկ այլ կայանով, որը կարող է առաջ բերել արտանետումների ընդհանուր ավելացում:

## Հոդված 38

### **Մթնոլորտային օդ կատարվող արտանետումների դիտանցումը**

1. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ իրականացվում է օդն աղտոտող նյութերի դիտանցում՝ V հավելվածի 3-րդ մասին համաձայն:
2. Դիտանցման ավտոմատացված սարքավորման տեղադրումն ու աշխատանքը պետք է ենթարկվի հսկողության և վերահսկողության ամենամյա թեստավորման, ինչպես սահմանված է V հավելվածի 3-րդ մասով:
3. Իրավասու մարմինը պետք է որոշի նմուշառման կամ չափման այն դիտակետերը, որոնք պետք է օգտագործվեն արտանետումների դիտանցման նպատակով:
4. Դիտանցման բոլոր արդյունքները պետք է գրանցվեն, մշակվեն և ներկայացվեն այնպիսի ձևով, որ իրավասու մարմինը կարողանա ստուգել համապատասխանությունը թույլտվությամբ նշված շահագործման պայմանների և արտանետումների սահմանային թույլատրելի նորմաների հետ:

## Հոդված 39

### **Արտանետումների թույլատրելի սահմանային նորմաների հետ համապատասխանությունը**

Մթնոլորտային օդ կատարվող արտանետումների սահմանային նորմաները համարվում են բավարարված, եթե բավարարվել են V հավելվածի 4-րդ մասով սահմանված պայմանները:

## Հոդված 40

### **Բազմավառելիքային այրման կայաններ**

1. Բազմավառելիքային այնպիսի այրման կայանների դեպքում, որոնք ներառում են երկու կամ ավելի վառելիքների համաժամանակյա այրում, իրավասու մարմինը պետք է սահմանի արտանետումների սահմանային թույլատրելի նորմաներ՝ հետևյալ քայլերի համաձայն՝
  - ա) վերցվում է յուրաքանչյուր վառելիքի և աղտոտող նյութի համար սահմանված արտանետման թույլատրելի սահմանային նորման՝ V հավելվածի 1-ին և 2-րդ մասերում ներկայացված այրման կայանի նոմինալ ջերմային հզորությանը համապատասխան,
  - բ) որոշվում են վառելիքով կշռված արտանետումների թույլատրելի սահմանային նորմաները, որոնք ստացվում են (ա) կետով նշված արտանետման յուրաքանչյուր սահմանային նորման համապատասխան վառելիքով արտադրվող նոմինալ

ջերմային հզորությամբ բազմապատկելով և արտադրյալը բոլոր վառելիքներով արտադրվող նոմինալ ջերմային հզորությունների գումարի վրա բաժանելով,

գ) հաշվարկվում է վառելիքով կշռված արտանետումների թույլատրելի սահմանային նորմաների հանրագումարը:

2. 30(2) հոդվածով կարգավորվող բազմավառելիքային այն այրման կայանների դեպքում, որոնք սեփական օգտագործման համար առանձին կամ այլ վառելիքների հետ միասին օգտագործում են նավթամշակումից ստացված թորման և կերպափոխման մնացորդներ, 1-ին պարբերությամբ սահմանված արտանետումների սահմանային նորմաների փոխարեն կարող են կիրառվել հետևյալ սահմանային նորմաները՝

ա) եթե այրման կայանի շահագործման ժամանակ բոլոր վառելիքների ջերմային հզորության ընդհանուր ծավալում որոշիչ վառելիքից ստացված մասնաբաժինը կազմում է առնվազն 50 տոկոս կամ ավելի, V հավելվածի 1-ին մասով սահմանված սահմանային թույլատրելի նորմաները որոշիչ վառելիքի համար.

բ) բոլոր վառելիքների ջերմային հզորության ընդհանուր ծավալում որոշիչ վառելիքից ստացված մասնաբաժինը կազմում է առնվազն 50 տոկոս կամ ավելի, սահմանային թույլատրելի նորմաները սահմանվում են՝ հետևյալ քայլերի համաձայն՝

i) վերցվում է օգտագործված յուրաքանչյուր վառելիքի համար V հավելվածի 1-ին մասով սահմանված՝ արտանետման թույլատրելի սահմանային նորման՝ այրման կայանի նոմինալ ջերմային հզորությանը համապատասխան,

ii) հաշվարկվում են որոշիչ վառելիքի արտանետումների սահմանային թույլատրելի նորմաները՝ բազմապատկելով այդ վառելիքի համար (i) կետի համաձայն սահմանված՝ արտանետման սահմանային նորման «2» գործակցով և այնուհետև ստացված արդյունքից մաս հանելով V հավելվածի 1-ին մասով սահմանված արտանետման ամենացածր թույլատրելի սահմանային նորմա ունեցող վառելիքի արտանետման սահմանային նորման՝ այրման կայանի նոմինալ ջերմային հզորությանը համապատասխան.

iii) որոշվում են վառելիքով կշռված արտանետումների թույլատրելի սահմանային նորմաները, որոնք ստացվում են յուրաքանչյուր վառելիքի համար (i) ու (ii) կետերով նշված արտանետման սահմանային նորման համապատասխան վառելիքով արտադրվող նոմինալ ջերմային հզորությամբ բազմապատկելով և արտադրյալը բոլոր վառելիքներով արտադրվող նոմինալ ջերմային հզորությունների գումարի վրա բաժանելով.

գ) գումարվում են վառելիքով կշռված արտանետումների՝ (iii) կետով նշված սահմանային թույլատրելի նորմաները:

3. 30(2) հոդվածով կարգավորվող բազմավառելիքային այն այրման կայանների դեպքում, որոնք սեփական օգտագործման համար առանձին կամ այլ վառելիքների հետ միասին օգտագործում են նավթամշակումից ստացված թորման և կերպափոխման մնացորդներ, V հավելվածի 7-րդ մասով ձեռք բերվող համար սահմանված արտանետումների միջին սահմանային

թույլատրելի նորմաները կարող են կիրառվել սույն հոդվածի 1-ին և 2-րդ պարբերություններով սահմանված արտանետումների սահմանային նորմաների փոխարեն:

Հոդված 41

### **Կիրարկող կանոնները**

Կիրարկող կանոնները սահմանվում են հետևյալի առնչությամբ՝

ա) շահագործման՝ 3-րդ հոդվածի 27-րդ կետով և V հավելվածի 4-րդ մասի 1-ին կետով նշված մեկնարկի ու դադարեցման ժամանակահատվածները սահմանելու:

բ) 32-րդ հոդվածով նշված՝ անցումային ազգային ծրագրերի և, մասնավորապես, արտանետումների սահմանաչափերը սահմանելու ու դրանց առնչվող դիտանցման և հաշվետվությունները ներկայացնելու:

Այդ կիրարկող կանոններն ընդունվում են՝ 75(2) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգի համաձայն: Հանձնաժողովն անհրաժեշտ առաջարկությունները ներկայացնում է 2011 թվականի հուլիսի 7-ից ոչ ուշ:

ԳԼՈՒԽ IV

### **ՀԱՏՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ՝ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԱՅՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԵՎ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ԱՅՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

Հոդված 42

### **Գործողության ոլորտը**

1. Սույն գլուխը չպետք է կիրառվի աղբի այրման և աղբի համատեղ այրման այն կայանների նկատմամբ, որոնք այրում են կամ համատեղ այրում են պինդ կամ հեղուկ թափոններ:

Սույն գլուխը չի կիրառվում գազացման կամ հրաքայքայման գործարանների նկատմամբ, եթե թափոնների ջերմային մշակումից գոյացած այս գազերն այնքան են մաքրվում, որ դրանք այրումից առաջ այլևս թափոններ չեն, և դրանց այրումից կարող են առաջանալ ավելի շատ թափոններ, քան բնական գազ այրելու դեպքում:

Սույն գլխում նշված նպատակներով աղբի այրման և աղբը որպես հումք օգտագործող կայանները պետք է ներառեն այրման կամ համատեղ այրման ուղիների, թափոնների ընդունման, պահեստավորման և տեղում նախնական մշակման օբյեկտները, թափոնների, վառելիքի ու օդի մատակարարման համակարգերը, կաթսաները, արտանետվող գազերի մշակման օբյեկտները, մնացորդների և թափոնների մշակման կամ պահեստավորման օբյեկտները,

ծխատարերը, այրման գործընթացները վերահսկելու, այրման պայմանները գրանցելու ու դիտանցելու սարքավորումներն ու համակարգերը:

Եթե թափոնների ջերմային մշակման համար կիրառվում են օքսիդացումից բացի այլ գործընթացներ, ինչպիսիք են հրաքայքայումը, գազացումը կամ պլազմային մշակումը, ապա թափոնների այրման կամ թափոնների համատեղ այրման կայաններում պետք է իրականացվեն և՛ ջերմային մշակման գործընթացը, և՛ այրման հետագա գործընթացը:

Եթե թափոնների համատեղ այրման գործընթացը տեղի է ունենում այնպիսի եղանակով, որ կայանի հիմնական նպատակը ոչ թե էներգիայի արտադրությունը կամ նյութական արտադրանքի արտադրությունն է, այլ թափոնների ջերմային մշակումը, ապա կայանը պետք է համարվի թափոնների այրման կայան:

2. Սույն գլուխը չի կիրառվում հետևյալ կայանների նկատմամբ՝

ա) այն կայանների, որոնք մշակում են միայն հետևյալ թափոնները՝

i) 3-րդ հոդվածի 31-րդ կետի (բ) ենթակետում նշված թափոնները.

ii) ռադիոակտիվ թափոններ.

iii) մսեղիք, ինչպես սահմանված է կենդանիների՝ մարդու կողմից սպառման համար չնախատեսված ենթամթերքին վերաբերող առողջապահական կանոնները սահմանող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2002 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1774/2002 Կանոնակարգով [35].

iv) թափոններ, որոնք առաջանում են ավամերձ կայաններում՝ նավթի ու գազի ռեսուրսների օգտագործման և կայանների ներսում այրման հետևանքով.

բ) փորձարարական կայաններ, որոնք օգտագործվում են ուսումնասիրությունների, զարգացման և թեստավորման համար՝ այրման գործընթացը բարելավելու նպատակով, և որոնք տարեկան մշակում են 50 տոննայից պակաս թափոններ:

#### Հոդված 43

### Մնացորդների սահմանումը

Սույն գլխի նպատակով՝ «մնացորդ» նշանակում է ցանկացած հեղուկ կամ պինդ թափոն, որն արտադրվում է թափոնների այրման կամ թափոնների համատեղ այրման կայանում:

#### Հոդված 44

### Թույլտվություն ստանալու դիմումները

Թափոնների այրման կամ թափոնների համատեղ այրման կայանի համար թույլտվություն ստանալու դիմումը պետք է ներառի այն միջոցների

նկարագրությունը, որոնք նախատեսված են՝ ապահովելու համար, որ բավարարվել են հետևյալ պահանջները՝

ա) կայանը նախագծված է ու կահավորված և կպահպանվի ու կշահագործվի այնպիսի եղանակով, որ սույն գլխի պահանջները բավարարվեն՝ հաշվի առնելով այն թափոնների տեսակները, որոնք պետք է այրվեն կամ համատեղ այրվեն:

բ) այրման կամ համատեղ այրման ժամանակ առաջացած էներգիան հնարավորինս վերականգնվում է էներգիայի, գոլորշու կամ ջերմության միջոցով.

գ) մնացորդների քանակը և վնասակարությունը հասցվում է նվազագույնին, և մնացորդները, համապատասխան դեպքերում, վերամշակվում են.

դ) այն թափոնների հեռացումը, որոնք հնարավոր չէ կանխել, նվազեցնել կամ վերամշակել, պետք է իրականացվի՝ ազգային և Համայնքի իրավունքի համաձայն:

#### Հոդված 45

### **Թույլտվության պայմանները**

1. Թույլտվությունն ընդգրկում է հետևյալը՝

ա) թափոնների այն բոլոր տեսակների ցանկը, որոնք կարող են մշակվել՝ օգտագործելով առնվազն 2005/532/ԵՀ որոշմամբ սահմանված՝ Թափոնների եվրոպական ցանկում ներառված թափոնների տեսակները, և ներառելով տեղեկություններ թափոնի յուրաքանչյուր տեսակի մասին.

բ) կայանի թափոնների այրման կամ համատեղ այրման ծավալը.

գ) օդ և ջրային ռեսուրսներ կատարվող արտանետումների սահմանային թույլատրելի նորմաները.

դ) pH-ին, ջերմաստիճանին և կեղտաջրերի արտանետումների հոսքին ներկայացվող պահանջները.

ե) նմուշառման ու չափման ընթացակարգերը և հաճախականությունը, որոնք պետք է կիրառվեն՝ արտանետումների դիտանցման համար սահմանված պայմանները բավարարելու նպատակով.

զ) մաքրման կամ չափման սարքավորումների տեխնիկապես անխուսափելի դադարների, խափանումների կամ ձախողումների առավելագույն թույլատրելի ժամանակահատվածները, որոնց ընթացքում օդ կատարվող արտանետումները և կեղտաջրերի արտահոսքերը կարող են գերազանցել արտանետումների սահմանային թույլատրելի նորմաները:

2. Բացի 1-ին պարբերությամբ սահմանված պահանջներից՝ թափոնների այրման կամ թափոնների համատեղ այրման այն կայանին տրամադրված թույլտվությունը, որն օգտագործում է վտանգավոր թափոններ, պետք է ընդգրկի հետևյալը՝

ա) վտանգավոր թափոնների տարբեր տեսակների՝ մշակման ենթակա քանակությունների ցանկը.



բ) այդ վտանգավոր թափոնների նվազագույն ու առավելագույն զանգվածային արտահոսքը, դրանց նվազագույն ու առավելագույն ջերմարարությունը և դրանց կազմում պոլիքլորինացված բիֆենիլների, պենտաքլորոբենոլի, քլորի, ֆտորի, ծծմբի, ծանր մետաղների և այլ աղտոտող նյութերի առավելագույն պարունակությունը:

3. Անդամ պետությունները կարող են նշել թույլտվության մեջ ընդգրկվելիք այն թափոնների տեսակները, որոնք թափոնների համատեղ այրման որոշ կայաններում կարող են համատեղ այրվել:

4. Իրավասու մարմինը պարբերաբար վերազնահատում է և անհրաժեշտության դեպքում, թարմացնում թույլտվության պայմանները:

#### Հոդված 46

### Արտանետումների հսկողությունը

1. Թափոնների այրման կայաններից և թափոնների համատեղ այրման կայաններից արտանետված գազերը վերահսկված կերպով հեռացվում են մեկ կամ մի քանի ծխնելույզներ ունեցող ծխատարի միջոցով, որի բարձրությունը հաշվարկված է այնպես, որ պահպանի մարդու առողջությունը և շրջակա միջավայրը:

2. Թափոնների այրման կայաններից և թափոնների համատեղ այրման կայաններից օդ կատարվող արտանետումները չպետք է գերազանցեն VI հավելվածի 3-րդ ու 4-րդ մասերով սահմանված կամ այդ հավելվածի 4-րդ մասով հաշվարկված սահմանային թույլատրելի նորմաները:

Եթե թափոնների համատեղ այրման կայանում վտանգավոր թափոնների այրումից անջատված ջերմության 40%-ը կամ կայանը համատեղ այրում է չմշակված կենցաղային թափոններ, ապա կիրառվում են VI հավելվածի 3-րդ մասով սահմանված՝ սահմանային թույլատրելի նորմաները:

3. Արտանետված գազերի մաքրումից առաջացող կեղտաջրերի արտանետումը ջրային միջավայր պետք է հնարավորինս նվազեցվի, իսկ աղտոտող նյութերի կոնցենտրացիաները չպետք է գերազանցեն VI հավելվածի 5-րդ մասով սահմանված սահմանային թույլատրելի նորմաները:

4. Արտանետումների սահմանային արժեքները կիրառվում են թափոնների այրման կայանից կամ թափոնների համատեղ այրման կայանից արտանետվող գազերի մաքրումից հետո գոյացած կեղտաջրերի նկատմամբ:

Եթե արտանետվող գազերի մաքրումից հետո գոյացած կեղտաջրերը մշակվում են թափոնների այրման կայանից կամ թափոնների համատեղ այրման կայանից դուրս՝ մշակման այնպիսի գործարանում, որը նախատեսված է կեղտաջրերի միայն այդ տեսակի մշակման համար, ապա VI հավելվածի 5-րդ մասով սահմանված սահմանային թույլատրելի նորմաները կիրառվում են վերամշակման կայանից արտահոսող կեղտաջրերի նկատմամբ: Եթե արտանետվող գազերի մաքրումից հետո գոյացած կեղտաջրերը մշակվում են այլ աղբյուրներից գոյացած կեղտաջրերի հետ միասին, թե՛ կայանում, թե՛ կայանից դուրս, օպերատորն իրականացնում է զանգվածի հավասարակշռման հաշվարկներ՝ օգտագործելով VI հավելվածի 6-րդ մասի 2-րդ կետով սահմանված չափումների արդյունքները՝ որոշելու համար կեղտաջրերի այն սահմանային թույլատրելի նորմաները, որոնք կարող են կիրառվել արտանետվող գազերի մաքրումից հետո գոյացող կեղտաջրերի նկատմամբ:

Ոչ մի դեպքում չպետք է իրականացվի կեղտաջրերի նոսրացում՝ VI հավելվածի 5-րդ մասով սահմանված սահմանային թույլատրելի նորմաների հետ համապատասխանելու նպատակով:

5. Թափոնների այրման կայանների վայրերը և թափոնների համատեղ այրման կայանների վայրերը, այդ թվում՝ թափոնների պահեստավորման համար նախատեսված տարածքները, պետք է նախագծված լինեն ու շահագործվեն այնպես, որ հնարավոր լինի կանխելու հող, մակերևութային ջրեր և ստորգետնյա ջրեր աղտոտող նյութերի չթույլատրված ու պատահական արտանետումը:

Պահեստավորման տարածքներ պետք է նախատեսված լինեն թափոնների այրման կայանի վայրից կամ թափոնների համատեղ այրման կայանի վայրից արտահոսած աղտոտված անձրևաջրերի կամ հակահրդեհային աշխատանքների ժամանակ գոյացած աղտոտված ջրերի համար: Պահեստավորման ծավալը պետք է համարժեք լինի՝ ապահովելու համար, որ նման ջրերը կարող են ստուգվել ու վերամշակվել արտահոսքից առաջ:

6. Չհակասելով 50(4)(գ) հոդվածին՝ թափոնների այրման կայանում կամ թափոնների համատեղ այրման կայանում, կամ թափոնների այրման կայանի, կամ թափոնների համատեղ այրման կայանի մաս հանդիսացող առանձին վառարաններում թափոնների այրումը չպետք է շարունակվի 4 ժամից ավելի, եթե գերազանցվում են սահմանային թույլատրելի նորմաները:

Նման պայմաններում շահագործման ընդհանուր տևողությունը մեկ տարվա ընթացքում չպետք է գերազանցի 60 ժամը:

Երկրորդ ենթապարբերությամբ սահմանված ժամկետը պետք է կիրառվի այն վառարանների նկատմամբ, որոնք միացված են արտանետված գազերի մաքրման մեկ առանձին սարքավորմանը:

#### Հոդված 47

### **Աշխատանքի խափանումը**

Աշխատանքի խափանման դեպքում օպերատորը, հնարավորինս շուտ, կրճատում կամ դադարեցնում է շահագործումը՝ մինչև բնականոն գործունեության վերականգնումը:

#### Հոդված 48

### **Արտանետումների դիտանցումը**

1. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ իրականացվում է արտանետումների դիտանցում՝ VI հավելվածի 6-րդ ու 7-րդ մասերի համաձայն:

2. Չափման ավտոմատացված համակարգերի տեղադրումն ու աշխատանքը պետք է ենթարկվեն հսկողության և վերահսկողության ամենամյա թեստավորման, ինչպես սահմանված է VI հավելվածի 1-ին կետի 6-րդ մասով:

3. Իրավասու մարմինը պետք է որոշի նմուշառման կամ չափման այն դիտակետերը, որոնք պետք է օգտագործվեն արտանետումների դիտանցման նպատակով:

4. Դիտանցման բոլոր արդյունքները պետք է գրանցվեն, մշակվեն և ներկայացվեն այնպիսի ձևով, որ իրավասու մարմինը կարողանա ստուգել համապատասխանությունը թույլտվությամբ նշված շահագործման պայմանների և արտանետումների սահմանային թույլատրելի նորմաների հետ:

5. Միության տարածքում չափման համապատասխան տեխնիկան հասանելի դառնալուց անմիջապես հետո Հանձնաժողովը 76-րդ հոդվածով սահմանված պատվիրակված ակտերի և 77-րդ ու 78-րդ հոդվածներով սահմանված պայմանների համաձայն, սահմանում է, թե երբևանից պետք է ծանր մետաղների, դիօքսինի ու ֆուրանի օդ արտանետումների շարունակական չափումներ իրականացվեն:

#### Հոդված 49

### **Արտանետումների թույլատրելի սահմանային նորմաների հետ համապատասխանությունը**

Օդի ու ջրային ռեսուրսների համար սահմանված սահմանային թույլատրելի նորմաները համարվում են բավարարված, եթե բավարարվել են VI հավելվածի 8-րդ մասով նշված պայմանները:

#### Հոդված 50

### **Շահագործման պայմանները**

1. Թափոնների այրման սարքերը պետք է շահագործվեն այնպես, որպեսզի հնարավոր լինի հասնելու այրման այնպիսի մակարդակի, որ խարամի և մոխրային նստվածքների մեջ ընդհանուր օրգանական ածխածնի պարունակությունը լինի 3 %-ից ցածր կամ բռնկման հետևանքով դրանց կորուստը լինի նյութի չոր քաշի 5 %-ից ցածր: Անհրաժեշտության դեպքում պետք է օգտագործվեն թափոնների նախնական մաքրման տեխնոլոգիաներ:

2. Թափոնների այրման սարքերը պետք է նախագծվեն, հարմարեցվեն, կառուցվեն և շահագործվեն այնպես, որ թափոնների այրման հետևանքով առաջացած գազի ջերմաստիճանը, այրման գոտի ներթափանցած օդի վերջին ներմղումից հետո, հսկվող և միատարր տեսքով և նույնիսկ ամենաանբարենպաստ պայմաններում, հասնի առնվազն 850 °C՝ առնվազն երկու վայրկյանում:

Թափոնների այրման կայանները պետք է նախագծվեն, կահավորվեն, կառուցվեն և շահագործվեն այնպես, որ վերականգնված թափոնների այրման հետևանքով առաջացած գազի ջերմաստիճանը, այրման գոտի ներթափանցած օդի վերջին ներմղումից հետո, հսկվող և միատարր տեսքով և նույնիսկ ամենաանբարենպաստ պայմաններում, հասնի առնվազն 850 °C՝ առնվազն երկու վայրկյանում:

Եթե 1 %-ից ավելի հալոգենացված օրգանական նյութեր պարունակող և որպես քլորին արտահայտված վտանգավոր թափոնն ու վերականգնված վտանգավոր թափոնն այրված է, ապա առաջին և երկրորդ ենթապարբերությունների համաձայն անհրաժեշտ ջերմաստիճանը պետք է լինի 1100 °C:

Թափոնների այրման սարքերում առաջին և երրորդ ենթապարբերություններով սահմանված ջերմաստիճանը պետք է չափվի այրման խցիկի ներքին պատի մոտ: Իրավասու մարմինը կարող է չափումների համար այրման խցիկի այլ հատուկ կետ նշանակել:

3. Թափոնների այրման սարքի յուրաքանչյուր այրման խցիկ պետք է զինվի առնվազն մեկ լրացուցիչ այրման վառարանով: Այրման այս վառարանը պետք է ինքնաբերաբար միանա, երբ այրման գոտի ներթափանցած օդի վերջին ներմղումից հետո արտանետված գազերի ջերմաստիճանն իջնում է 2-րդ պարբերության մեջ նշված ջերմաստիճանից:

Լրացուցիչ այրման վառարանը չպետք է լիցքավորել այնպիսի վառելիքներով, որոնք կարող են առաջացնել ավելի բարձր արտանետումներ, քան որոշակի հեղուկ վառելիքներում ծծմբի պարունակության նվազեցման վերաբերյալ Խորհրդի 1999 թվականի ապրիլի 26-ի 1999/32/ԵՀ հրահանգի [36] 2(2) հոդվածում նշված գազային յուղերի, հեղուկացված գազի և բնական գազի այրման հետևանքով առաջացած արտանետումներն են:

4. Թափոնների այրման սարքերն ու թափոնների այրման կայանները պետք է կիրառեն ավտոմատացված համակարգեր՝ կանխելու համար թափոնների օգտահանումը հետևյալ իրավիճակներում՝

ա) գործարկման փուլում, քանի դեռ չի ապահովվել սույն հոդվածի 2-րդ պարբերության մեջ նշված կամ 51 (1) հոդվածի համաձայն սահմանված ջերմաստիճանը.

բ) ցանկացած ժամանակ, երբ չի ապահովվել սույն հոդվածի 2-րդ պարբերության մեջ նշված կամ 51 (1) հոդվածի համաձայն սահմանված ջերմաստիճանը.

գ) ցանկացած ժամանակ, երբ շարունակական չափումները ցույց տան, որ թափոններից անջատվող գազերի մաքրման սարքերի անսարքությունների և խափանումների պատճառով գերազանցվել են արտանետումների թույլատրելի սահմանային նորմաները:

5. Թափոնների այրման սարքերից կամ թափոնների այրման կայանքներից ստացված ջերմությունը պետք է հնարավորինս վերականգնել:

6. Վարակիչ կլինիկական թափոններն առանց նախապես խառնվելով թափոնների այլ խմբերի հետ և առանց անմիջական շփման անմիջապես դրվում են վառարանի մեջ:

7. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ թափոնների այրման սարքերն ու թափոնների այրման կայանները շահագործվեն և վերահսկվեն ֆիզիկական անձի կողմից, ով լիազորված է իրականացնելու կայանի կառավարումը:

#### Հոդված 51

#### **Շահագործման պայմանները փոփոխելու թույլտվությունը**

1. Իրավասու մարմինը կարող է թույլատրել կիրառել 50(1), (2) և (3) հոդվածով ու ջերմաստիճանի համար նշված հոդվածի 4-րդ պարբերությամբ և թափոնների որոշ կատեգորիաների կամ որոշ ջերմային պրոցեսների համար թույլտվությամբ սահմանված պայմաններից բացի այլ պայմաններ, եթե բավարարվեն սույն գլխի մյուս պահանջները: Անդամ պետությունները կարող են սահմանել նշված թույլտվությունները կարգավորող կանոնները:

2. Թափոնների այրման սարքերի դեպքում շահագործման պայմանների փոփոխության հետևանքով չպետք է առաջանան ավելի շատ նստվածքներ կամ աղտոտող օրգանական նյութերի բարձր պարունակությամբ նստվածքներ՝ համեմատած այն նստվածքների հետ, որոնք ակնկալվում էին, որ կառաջանան 50(1), (2) և (3) հոդվածով սահմանված պայմանների դեպքում:

3. Ընդհանուր օրգանական ածխածնի և ածխածնի մոնօքսիդի արտանետումները թափոնների այրման այն կայաններից, որոնց, 1-ին պարբերության համաձայն, թույլ է տրվել փոփոխել շահագործման պայմանները, պետք է ևս բավարարեն VI հավելվածի 3-րդ մասով սահմանված՝ արտանետումների թույլատրելի սահմանային նորմաները:

Թղթի և ցեյուլոզի արդյունաբերության մեջ կեղևի մշակման կաթսաներից ընդհանուր օրգանական ածխածնի արտանետումները, որոնք արտադրման վայրում վերամշակված թափոններ են այրում, և թույլտվություն էին ստացել ու գործում էին՝ նախքան 2002 թվականի դեկտեմբերի 28-ը, և որոնց թույլ է տրվել փոփոխել շահագործման պայմանները՝ 1-ին պարբերության համաձայն, պետք է ևս բավարարեն VI հավելվածի 3-րդ մասով սահմանված արտանետումների թույլատրելի սահմանային նորմաները:

4. Անդամ պետությունները պետք է Հանձնաժողով ներկայացնեն 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերությունների համաձայն թույլատրված՝ շահագործման բոլոր պայմանները և ստուգումների արդյունքները, որոնք կատարվել են որպես 72-րդ հոդվածի համաձայն հաշվետվություն ներկայացնելու պահանջներին համապատասխան տրամադրված տեղեկությունների մաս:

## Հոդված 52

### **Թափոնների առաքումը և ընդունումը**

1. Թափոնների այրման սարք կամ թափոնների այրման կայան շահագործողը պետք է ձեռնարկի անհրաժեշտ բոլոր նախազգուշական միջոցները՝ կապված թափոնների առաքման և ընդունման հետ՝ հնարավորության սահմաններում կանխելու կամ սահմանափակելու համար օդի, հողի, մակերևութային ջրի և ստորերկրյա ջրերի աղտոտումը, ինչպես նաև շրջակա միջավայրի վրա մյուս բացասական ազդեցությունները, հոտերը և աղմուկը, ինչպես նաև մարդու առողջությանը սպառնացող ուղղակի վտանգները:

2. Շահագործողը, նախքան թափոնների այրման սարք կամ թափոնների այրման կայան թափոնների ընդունումը, պետք է որոշի յուրաքանչյուր տեսակի թափոնի զանգվածը՝ 2000/532/ԵՀ որոշմամբ հաստատված Թափոնների եվրոպական ցանկի համաձայն, եթե դա հնարավոր է:

3. Շահագործողը, նախքան թափոնների այրման սարք կամ թափոնների այրման կայան վտանգավոր թափոնների ընդունումը, պետք է հավաքի թափոնների վերաբերյալ բոլոր անհրաժեշտ տեղեկությունները՝ ստուգելու համար 45(2) հոդվածով սահմանված թույլտվությանը ներկայացվող պահանջների հետ համապատասխանությունը:

Նշված տեղեկությունները ներառում են հետևյալը՝

ա) գոյացման պրոցեսի վերաբերյալ 4(ա) պարբերությամբ նշված փաստաթղթերում ներառված բոլոր վարչական տեղեկությունները.

բ) թափոնի ֆիզիկական և, հարկ եղած դեպքում, քիմիական բաղադրությունն ու այրման նախատեսված պրոցեսի համար դրանց պիտանիությունը գնահատելու համար անհրաժեշտ բոլոր մյուս տեղեկությունները.

գ) թափոնի վտանգավոր հատկությունները, այն նյութերը, որոնց հետ այն չի կարող միախառնվել և թափոնների տնօրինման ժամանակ ձեռնարկվելիք նախազգուշական միջոցները:

4. Նախքան թափոնների այրման սարքեր կամ թափոնների այրման կայան վտանգավոր թափոնների ընդունումը՝ շահագործողը պետք է առնվազն իրականացնի հետևյալ ընթացակարգերը՝

ա) 2008/98/ԵՀ հրահանգով ու, անհրաժեշտության դեպքում, «Թափոնների փոխադրումների մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2006 թվականի հունիսի 14-ի թիվ 1013/2006 կանոնակարգով (ԵՀ) [37] և «Վտանգավոր բեռների փոխադրման մասին» օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերի ստուգումը.

բ) եթե նախքան բեռնաթափումը դա աննպատակահարմար չի համարվում, ապա ներկայացուցչական նմուշներ վերցնելը՝ ստուգումներ իրականացնելու միջոցով ստուգելու համար 3-րդ պարբերությամբ նախատեսված տեղեկատվության հետ համապատասխանությունը և հնարավորություն տալով իրավասու մարմիններին բացահայտելու մաքրված թափոնների բնույթը.

(բ) կետում նշված նմուշները պետք է պահվեն առնվազն մեկ ամիս՝ նախքան համապատասխան թափոնի կամ վերամշակված թափոնի այրումը:

5. Իրավասու մարմինը կարող է թափոնների այրման սարքերի կամ թափոնների այրման կայանների համար ազատում նախատեսել 2-րդ, 3-րդ և 4-րդ պարբերություններից, որոնք կազմում են II գլխով կարգավորվող կայանքի մաս և այրում են միայն տվյալ կայանքից գոյացող թափոնները կամ վերականգնված թափոնները:

### Հոդված 53

### **Նստվածքները**

1. Նստվածքները պետք է իրենց քանակով և վտանգավորության աստիճանով հասցվեն նվազագույնի: Նստվածքները պետք է վերամշակվեն, հարկ եղած դեպքում, անմիջապես կայանում կամ դրանից դուրս:

2. Փոշու տեսքով չոր նստվածքների փոխադրումը և միջանկյալ պահումը պետք է իրականացվի այնպես, որ նշված նստվածքների շրջակա միջավայր տարածումը բացառվի:

3. Նախքան նստվածքների տարածման կամ վերամշակման ուղիները որոշելը՝ անհրաժեշտ է իրականացնել համապատասխան հետազոտություններ՝ նստվածքների ֆիզիկական ու քիմիական հատկությունները և աղտոտման պոտենցիալը սահմանելու նպատակով: Նշված հետազոտությունները վերաբերում են ընդհանուր լուծվող ֆրակցիային և ծանր մետաղների լուծվող ֆրակցիային:

#### Հոդված 54

##### **Շահագործման պայմանների էական փոփոխությունը**

Շահագործման պայմանների էական փոփոխություն է համարվում թափոնների այրման այն սարքի կամ թափոնների այրման այն կայանի շահագործման պայմանների փոփոխությունը, որոնք մշակում են միայն II գլխով կարգավորվող կայանքի ոչ վտանգավոր թափոնները, այն է՝ վտանգավոր թափոնի այրումը կամ վերականգնված թափոնների այրումը:

#### Հոդված 55

##### **Թափոնների այրման սարքերի կամ թափոնների այրման կայանների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելը և հանրությանը տրամադրվող տեղեկությունները**

1. Թափոնների այրման սարքեր կամ թափոնների այրման կայաններ շահագործելու նոր թույլտվությունների դիմումները պետք է մատչելի դարձվեն հանրության համար մեկ կամ ավելի վայրերում համապատասխան ժամկետներով՝ հնարավորություն տալով հանրությանը դիմումների վերաբերյալ ներկայացնելու իր դիտողությունները՝ նախքան իրավասու մարմնի կողմից որոշում կայացնելը: Նշված որոշումը, այդ թվում՝ առնվազն թույլտվության պատճենը, ինչպես նաև ցանկացած այլ հետագա փոփոխություններ, պետք է ևս մատչելի դարձվեն հանրության համար:

2. Մեկ ժամում երկու կամ ավելի տոննա արտադրողականություն ունեցող թափոնների այրման սարքերի կամ թափոնների այրման կայանների դեպքում 72-րդ հոդվածում նշված հաշվետվությունը պետք է պարունակի կայանի գործունեության և դիտանցման վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև դրանում պետք է հաշվի առնվեն թափոնների ու վերականգնված թափոնների այրման պրոցեսի ընթացքը և օդ ու ջուր արտանետումների մակարդակը՝ համեմատած արտանետումների թույլատրելի սահմանային նորմաների հետ: Այդ տեղեկությունները ևս պետք է մատչելի դարձվեն հանրության համար:

3. Մեկ ժամում երկու կամ ավելի տոննա արտադրողականություն ունեցող թափոնների այրման սարքերի կամ թափոնների այրման կայանների ցանկը



պետք է կազմվի իրավասու մարմնի կողմից և մատչելի դարձվի հանրության համար:

#### ԳԼՈՒԽ V

### **ՕՐԳԱՆԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՅԹՆԵՐ ՕԳՏԱԳՈՐԾՈՂ ԿԱՅԱՆՔՆԵՐԻՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՏՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

#### Հոդված 56

#### **Գործողության ոլորտը**

Սույն գլուխը տարածվում է VII հավելվածի 1-ին մասով նշված գործողությունների նկատմամբ և, հարկ եղած դեպքում, հասնելով այդ հավելվածի 2-րդ մասով սահմանված սպառման շեմերին:

#### Հոդված 57

#### **Սահմանումները**

Սույն գլխի նպատակներով կիրառվում են հետևյալ սահմանումները՝

1) «գործող կայանք» նշանակում է 1999 թվականի մարտի 29-ին գործարկվող կամ նախքան 2001 թվականի ապրիլի 1-ը գործարկման թույլտվություն ստացած կամ գրանցված կայանք, կամ որի շահագործողը, նախքան 2001 թվականի ապրիլի 1-ը, ներկայացրել է թույլտվություն ստանալու ամբողջական դիմում՝ պայմանով, որ նշված կայանքը կգործարկվի 2002 թվականի ապրիլի 1-ից ոչ ուշ:

2) «արտանետվող գազեր» նշանակում է ցնդող օրգանական միացություններ պարունակող վերջնական գազանման արտանետվածքներ կամ ծխատարի, կամ մաքրման սարքավորումներից օդ արտանետվող այլ աղտոտիչներ.

3) «ֆուգիտիվ արտանետումներ» նշանակում է ցնդող օրգանական միացությունների արտանետվող գազերի արտանետումներ՝ օդ, հող և ջուր, ինչպես նաև ցանկացած արտադրանքում պարունակվող լուծույթներ, եթե այլ բան չի նախատեսվում VII հավելվածի 2-րդ մասով.

4) «ընդհանուր արտանետումներ» նշանակում է ֆուգիտիվ արտանետումների և արտանետվող գազերի արտանետումների հանրագումարը.

5) «խառնուրդ» նշանակում է «Քիմիական նյութերի գրանցման, գնահատման, թույլտվության և սահմանափակման (REACH) ու Քիմիական նյութերի եվրոպական գործակալություն ստեղծելու մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2006 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 1907/2006 կանոնակարգի (ԵՀ) (38) 3(2) հոդվածով սահմանված խառնուրդ.

6) «հարակցանյութ» նշանակում է դրա պատշաճ կիրառման համար անհրաժեշտ օրգանական լուծույթներ պարունակող ցանկացած խառնուրդ՝ ներառյալ բոլոր օրգանական լուծույթները կամ խառնուրդները, որոնք արտադրանքի տարբեր մասեր փակցնելու համար են օգտագործվում:

7) «թանաք» նշանակում է դրա պատշաճ կիրառման համար անհրաժեշտ օրգանական լուծույթներ պարունակող խառնուրդ՝ ներառյալ բոլոր օրգանական լուծույթները կամ խառնուրդները, որոնք օգտագործվում են տպագրական գործում՝ մակերեսի վրա տեքստ կամ նկարներ տպելու համար:

8) «լաք» նշանակում է թափանցիկ պատվածք:

9) «սպառում» նշանակում է մեկ օրացուցային տարվա ընթացքում կամ մեկ այլ տասներկու ամիս ժամանակահատվածում կայանքի մեջ լցված օրգանական լուծույթների ընդհանուր քանակը, որն ավելի քիչ է բազմակի օգտագործման համար վերականգնված ցանկացած ցնդող օրգանական միացությունից:

10) «ներդրանք» նշանակում է գործունեություն իրականացնելիս օգտագործվող օրգանական լուծույթների քանակը և խառնուրդներում դրանց քանակը՝ ներառյալ կայանքում և դրանից դուրս վերամշակված լուծույթները, որոնք հաշվվում են յուրաքանչյուր ժամանակ, երբ դրանք օգտագործվում են գործունեությունն իրականացնելիս:

11) «կրկնակի օգտագործում» նշանակում է կայանքի մեջ օգտագործելուց հետո վերականգնված օրգանական լուծույթների օգտագործումը տեխնիկական կամ առևտրային նպատակով և, այդ թվում՝ որպես վառելիք, բացառելով վերականգնված օրգանական լուծույթի վերջնական հեռացումը որպես թափոն:

12) «կարգավորվող պայմաններ» նշանակում է պայմաններ, որոնց ներքո գործում է կայանքն այնպես, որ գործունեության հետևանքով արտազատված ցնդող օրգանական միացությունները հավաքվեն և կարգավորված բաց թողնվեն՝ ծխատարի կամ մաքրման սարքի միջոցով և, այսպիսով, ամբողջությամբ ֆուգիտիվ չլինեն:

13) «մեկնարկ և դադարեցում» նշանակում են այնպիսի գործողություններ, որի ժամանակ մեկնարկվում կամ դադարեցվում է գործողությունը, գործի է դրվում կամ դադարեցվում է սարքավորման միավորը կամ բաքը՝ բացառությամբ պարբերաբար վիբրացիայի ենթարկելու փուլերի:

## Հոդված 58

### Վտանգավոր նյութերի փոխարինումը

Նյութերին կամ դրանց խառնուրդներին, որոնք իրենց՝ որպես քաղցկեղածին, մուտագեն կամ թիվ 1272/2008 կանոնակարգի (ԵՀ) համաձայն վերարտադրության համար թունավոր դասակարգված ցնդող օրգանական միացությունների պարունակության պատճառով ստացել են կամ պետք է կրեն H340, H350, H350i, H360D կամ H360F վտանգի բնույթի և աստիճանի մասին վկայող նշում, պետք է փոխարինվեն հնարավորինս շուտ և հնարավորինս կարճ ժամկետում պակաս վտանգավոր նյութերով կամ դրանց խառնուրդներով:

## Հոդված 59

### Արտանետումների հսկողությունը

1. Անդամ պետությունները պետք է ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ յուրաքանչյուր կայանք ապահովի հետևյալը՝

ա) կայանքներից ցնդող օրգանական միացությունների արտանետումների քանակը չպետք է գերազանցի արտանետվող գազերի ու ֆուգիտիվ արտանետումների թույլատրելի սահմանային նորմաները և արտանետումների թույլատրելի սահմանային ընդհանուր նորմաներն ու պետք է բավարարի VII հավելվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված մյուս պահանջները.

բ) VII հավելվածի 5-րդ մասով նախատեսված կրճատման սխեմայի պահանջների բավարարումը՝ պայմանով, որ արտանետումները կրճատվեն համարժեք չափով, այնքան, որքան հնարավոր է (ա) կետում նշված արտանետումների թույլատրելի սահմանային նորմաների կիրառման միջոցով:

Անդամ պետությունները պետք է, 72(1) հոդվածին համապատասխան, զեկուցեն Հանձնաժողովին (բ) կետում նշված արտանետումների համարժեք չափով կրճատման առաջընթացի մասին:

2. Շեղում կատարելով 1(ա) պարբերությունից, եթե շահագործողն ապացուցում է իրավասու մարմին, որ առանձին կայանքների դեպքում ֆուգիտիվ արտանետումների համար արտանետումների թույլատրելի սահմանային նորմաները տեխնիկական և տնտեսական պատճառներով հնարավոր չէ պահել, ապա իրավասու մարմինը կարող է թույլատրել, որ արտանետումների քանակը գերազանցի արտանետումների սահմանված թույլատրելի նորման՝ պայմանով, որ դա լուրջ վտանգ չի ներկայացնի մարդու առողջության կամ շրջակա միջավայրի համար, և որ շահագործողն ապացուցի, որ օգտագործվում են հնարավորինս լավագույն սարքավորումները:

3. Շեղում կատարելով 1-ին պարբերությունից՝ VII հավելվածի 2-րդ մասի աղյուսակի 8-րդ կետով կարգավորվող երեսապատման աշխատանքների

դեպքում, որոնք չեն կարող իրականացվել կարգավորվող պայմանների ներքո, իրավասու մարմինը կարող է թույլատրել, որ կայանքի արտանետումների քանակը գերազանցի այդ պարբերությամբ սահմանված նորմաները, եթե շահագործողն ապացուցում է իրավասու մարմիններին, որ դրանց պահումը տեխնիկական և տնտեսական պատճառներով հնարավոր չէ, և օգտագործվում են հնարավորինս լավագույն սարքավորումները:

4. Անդամ պետությունները պետք է զեկուցեն Հանձնաժողովին սույն հոդվածի 2-րդ և 3-րդ պարբերություններում նշված շեղումների մասին՝ 72(2) հոդվածին համապատասխան:

5. Յնդող օրգանական միացությունների արտանետումները, որոնց տրվում են կամ պետք է կրեն H340, H350, H350i, H360D կամ H360F վտանգի բնույթի և աստիճանի մասին վկայող նշում կամ հալոգենացված ցնդող օրգանական միացությունները, որոնց տրվում են կամ պետք է կրեն H341 կամ H351 վտանգի բնույթի ու աստիճանի մասին վկայող նշում, պետք է հսկվեն կարգավորվող պայմաններում, որքան հնարավոր է՝ տեխնիկապես և տնտեսապես պաշտպանելու համար հանրության առողջությունն ու շրջակա միջավայրը, և չպետք է գերազանցեն VII հավելվածի 4-րդ մասով սահմանված արտանետումների թույլատրելի սահմանային նորմաները:

6. Այն կայանքները, որտեղ իրականացվում են երկու կամ ավելի գործողություններ, որոնցից յուրաքանչյուրը գերազանցում է VII հավելվածի 2-րդ մասով սահմանված շեմը, պետք է՝

ա) կապված 5-րդ պարբերությամբ սահմանված նյութերի հետ, բավարարեն այդ պարբերությամբ յուրաքանչյուր գործողության համար առանձին սահմանված պահանջները.

բ) ինչ վերաբերում է բոլոր այլ նյութերին՝

i) յուրաքանչյուր գործողության համար առանձին սահմանված՝ 1-ին պարբերության պահանջները կամ

ii) ցնդող օրգանական միացությունների ընդհանուր արտանետումները չգերազանցեն այն նորմաները, որոնք կարող են ստացվել, եթե կիրառվի (i) կետը:

7. Անհրաժեշտ է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ նախազգուշական միջոցները՝ նվազագույնի հասցնելու համար ցնդող օրգանական միացությունների արտանետումները գործողությունների մեկնարկի և դադարեցման ընթացքում:

## Հոդված 60

### **Արտանետումների դիտանցումը**

Անդամ պետությունները, թույլտվության պայմաններով սահմանված սպեցիֆիկացիայի կամ ընդհանուր պարտադիր կանոնների միջոցով, պետք է ապահովեն, որ արտանետումների չափումներն իրականացվեն VII հավելվածի 6-րդ մասին համապատասխան:

## Հոդված 61

### **Արտանետումների թույլատրելի սահմանային նորմաների հետ համապատասխանությունը**

Եթե VII հավելվածի 8-րդ մասով սահմանված պայմանները բավարարվում են, ապա համարվում է, որ պահվել են արտանետվող գազերի թույլատրելի սահմանային նորմաները:

## Հոդված 62

### **Համապատասխանության վերաբերյալ հաշվետվություն**

Օպերատորն իրավասու մարմնին տրամադրում է այնպիսի տվյալներ, որոնք իրավասու մարմնին հնարավորություն են ընձեռում ստուգելու համապատասխանությունը հետևյալներից որևէ մեկին՝

ա) արտանետումների սահմանային թույլատրելի արժեքներ, ֆուգիտիվ արտանետումների սահմանային թույլատրելի արժեքներ և արտանետումների սահմանային ընդհանուր արժեքներ,

բ) VII հավելվածի 5-րդ մասով նախատեսված կրճատման սխեմայի պահանջներ, գ) 59(2) և (3) հոդվածի համաձայն թույլատրված շեղումներին:

Սա կարող է ներառել VII հավելվածի 7-րդ մասի համաձայն կազմված լուծիչների կառավարման պլանը:

## Հոդված 63

### **Գոյություն ունեցող կայանքների էական փոփոխությունը**

1. Գոյություն ունեցող կայանքների կողմից միջինը 1 օրվա կտրվածքով օրգանական լուծիչների առավելագույն զանգվածային փոփոխությունը, այն դեպքում, երբ կայանքը շահագործվում է այն նպատակով, որի համար այն նախատեսված է և այնպիսի պայմաններում, որոնք տարբերվում են մեկնարկի ու փակման գործընթացների և սարքավորումների պահման համար նախատեսված պայմաններից, պետք է համարվի էական, եթե այն հանգեցնում է ցնդող

օրգանական միացությունների արտանետումների ծավալի մեծացմանն ավելի, քան

ա) 25 %՝ այն կայանքների համար, որոնք իրականացնում են կամ այնպիսի գործողություններ, որոնք գտնվում են VII հավելվածի 2-րդ մասում ներկայացված աղյուսակի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 8-րդ, 10-րդ, 13-րդ, 16-րդ կամ 17-րդ կետերում նշված գործողությունների ավելի ցածր շեմի սահմաններում կամ այնպիսի գործողություններ, որոնք գտնվում են VII հավելվածի 2-րդ մասի այլ գործողություններից մեկի սահմաններում և ունեն լուծիչների ավելի քիչ, քան տարեկան տասը տոննա սպառման ծավալ,

բ) 10 %՝ մնացած բոլոր կայանքների համար:

2. Եթե գոյություն ունեցող կայանքը էական փոփոխության է ենթարկվում կամ գտնվում է սույն հրահանգի գործողության ոլորտում՝ առաջին անգամ թույլ տալով էական փոփոխություն կատարել, ապա կայանքի այն մասը, որը ենթարկվում է էական փոփոխության, պետք է համարվի կամ որպես նոր կայանք կամ որպես գոյություն ունեցող կայանք՝ պայմանով, որ ամբողջ կայանքի ընդհանուր արտանետումները չգերազանցեն արտանետումների այն ծավալը, որը կառաջանար, եթե նույնիսկ էապես փոփոխված մասը նոր կայանք համարվեր:

3.. Էական փոփոխության դեպքում իրավասու մարմինը պետք է ստուգի կայանքի համապատասխանությունը սույն Հրահանգի պահանջներին:

#### Հոդված 64

### **Օրգանական լուծիչներին փոխարինելու վերաբերյալ տեղեկությունների փոխանակումը**

Հանձնաժողովը պետք է տեղեկատվության փոխանակում կազմակերպի անդամ պետությունների, արդյունաբերական և ոչ կառավարական կազմակերպությունների հետ՝ խթանելով շրջակա միջավայրի պաշտպանությանը օրգանական լուծիչների և դրանց պոտենցիալ փոխարինիչների միջոցով, ինչպես նաև այնպիսի տեխնիկաների միջոցով, որոնք նվազագույն ազդեցություն ունեն օդի, ջրի, բնահողի, էկոհամակարգերի և մարդու առողջության վրա:

Տեղեկատվության փոխանակումը պետք է կազմակերպվի հետևյալի հիման վրա՝

ա) օգտագործման հարմարավետություն,

բ) հնարավոր ազդեցություններ մարդու առողջության վրա և, մասնավորապես, մասնագիտական ճառագայթում,

գ) հնարավոր ազդեցություն շրջակա միջավայրի վրա,

դ) տնտեսական հետևանքներ՝ մասնավորապես առկա հնարավորությունների ծախսերն ու եկամուտները:

Հոդված 65

**Տեղեկատվության մատչելիությունը**

1. Իրավասու մարմնի որոշումը՝ ներառյալ թույլտվության առնվազն պատճենը, ինչպես նաև ցանկացած այլ թարմացված տարբերակ պետք է հանրամատչելի դարձվեն:

Կայանքների նկատմամբ կիրառվող ընդհանուր պարտադիր կանոնները, ինչպես նաև թույլտվություն ստանալու և գրանցման ենթակա կայանքների ցանկը պետք է հանրամատչելի դարձվեն:

2. Արտանետումների դիտանցման արդյունքները, որն իրականացվում է՝ համաձայն 60-րդ հոդվածի և իրավասու մարմնի կողմից, պետք է հանրամատչելի դարձվեն:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ պարբերությունները պետք է կիրառվեն՝ հաշվի առնելով 2003/4/ԵՀ հրահանգի 4 (1) և (2) հոդվածով սահմանված սահմանափակումները:

ԳԼՈՒԽ VI

**ՏԻՏԱՆԻ ԵՐԿՕՔՍԻԴ ԱՐՏԱԴՐՈՂ ԿԱՅԱՆՔՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՏՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ**

Հոդված 66

**Գործողության ոլորտը**

Սույն գլուխը կիրառվում է տիտանի երկօքսիդ արտադրող կայանքների նկատմամբ:

Հոդված 67

**Թափոնների հեռացման արգելումը**

Անդամ պետությունները պետք է արգելեն դեպի որևէ ջրային մարմին, ծով կամ օվկիանոս հետևյալ թափոնների հեռացումը՝

ա) պինդ թափոններ,

բ) սուլֆատի ստացման տեխնիկա կիրառող կայաններից ստացված տիտանիլի սուլֆատի լուծույթի հիդրոլիզին հաջորդող ֆիլտրման փուլի հետևանքով առաջացող մայր լուծույթներ՝ ներառյալ այդ լուծույթներում առկա թթու գուդրոնը, որն ընդհանուր հաշվով պարունակում է ավելի քան 0,5 % ազատ ծծմբաթթու և բազմաթիվ ծանր մետաղներ, ինչպես նաև՝ ներառյալ այնպիսի մայր լուծույթներ, որոնք այնքան են նոսրացվել, որ պարունակեն 0,5 % կամ ավելի քիչ ազատ ծծմբաթթու,

գ) քլորիդի ստացման տեխնիկա կիրառող կայաններից ստացված թափոններ, որոնք պարունակում են ավելի քան 0,5 % ազատ աղաթթու և բազմաթիվ ծանր

մետաղներ՝ ներառյալ այնպիսի թափոններ, որոնք այնքան են նոսրացվել, որ պարունակեն 0,5 % կամ ավելի քիչ ազատ աղաթթու,

դ) ֆիլտրման աղեր, նստվածքներ և հեղուկ թափոններ, որոնք առաջանում են (բ) և (գ) կետերում նշված թափոնների վնասազերծումից (խտացում կամ չեզոքացում) և պարունակում են բազմաթիվ ծանր մետաղներ, սակայն չեն ներառում չեզոքացված և ֆիլտրված կամ զտված թափոն, որը միայն ծանր մետաղների տարրեր է պարունակում և որը, նախքան որևէ նոսրացում, ունի 5,5-ից բարձր pH արժեք:

#### Հոդված 68

### **Ջրում արտանետումների հսկողությունը**

Կայանքներից դեպի ջուր մղվող արտանետումները չպետք է գերազանցեն VIII հավելվածի 1-ին մասով սահմանված արտանետումների սահմանային թույլատրելի արժեքները:

#### Հոդված 69

### **Օդում արտանետումների կանխումն ու հսկողությունը**

1. Պետք է կանխել թթու կաթիլների արտանետումները կայանքներից:

2. Կայանքներից դեպի օդ մղվող արտանետումները չպետք է գերազանցեն VIII հավելվածի 2-րդ մասով սահմանված արտանետումների սահմանային թույլատրելի արժեքները:

#### Հոդված 70

### **Արտանետումների դիտանցումը**

1. Անդամ պետությունները պետք է ապահովեն դեպի ջուր մղվող արտանետումների դիտանցում՝ իրավասու մարմնին հնարավորություն ընձեռելու համար ստուգելու թույլտվությամբ նախատեսված պայմանների և 68-րդ հոդվածի հետ համապատասխանությունը:

2. Անդամ պետությունները պետք է ապահովեն դեպի օդ մղվող արտանետումների դիտանցում՝ իրավասու մարմնին հնարավորություն ընձեռելու համար ստուգելու թույլտվությամբ նախատեսված պայմանների և 69-րդ հոդվածի հետ համապատասխանությունը: Նման դիտանցումը պետք է ներառի առնվազն VIII հավելվածի 3-րդ մասում նշված արտանետումների դիտանցումը:

3. Դիտանցումը պետք է իրականացվի ՍԵԿ ստանդարտների համաձայն կամ, եթե ՍԵԿ ստանդարտներն առկա չեն, ՍՄԿ ստանդարտների, ազգային կամ այլ միջազգային ստանդարտների համաձայն, որոնք ապահովում են համարժեք գիտական արժեք ներկայացնող տվյալների տրամադրումը:



**ԿՈՄԻՏԵՆ, ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԵՎ ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ**

Հոդված 71

**Իրավասու մարմինները**

Անդամ պետությունները պետք է նշանակեն սույն Հրահանգից բխող պարտավորությունների իրականացման համար պատասխանատու իրավասու մարմիններ:

Հոդված 72

**Անդամ պետությունների կողմից ներկայացվող հաշվետվությունը**

1. Անդամ պետությունները պետք է Հանձնաժողովին տրամադրեն սույն Հրահանգի իրականացման, արտանետումների և աղտոտման այլ ձևերի վերաբերյալ համապատասխան տվյալների, արտանետումների սահմանային թույլատրելի արժեքների, 14-րդ և 15-րդ հոդվածների համաձայն սահմանված առկա լավագույն մեթոդների, մասնավորապես, 15(4) հոդվածի համաձայն շնորհված բացառությունների և 27-րդ հոդվածի համաձայն ձևավորվող տեխնիկաների զարգացման և կիրառության մասով առաջընթացի վերաբերյալ տեղեկատվությունը: Անդամ պետությունները պետք է տեղեկատվությունը մատչելի դարձնեն էլեկտրոնային տարբերակով:

2. 1-ին պարբերության համաձայն հասանելի դարձվող տեղեկատվության տեսակը, ձևաչափն ու հաճախականությունը պետք է սահմանվեն 75 (2) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգերի համաձայն: Սա պետք է ներառի հստակ գործողությունների և աղտոտիչների որոշումը, որի համար անհրաժեշտ է հասանելի դարձնել 1-ին պարբերության մեջ նշված տվյալները:

3. Սույն Հրահանգի III գլխում նշված աղբի այրման բոլոր գործարանների համար անդամ պետությունները պետք է, սկսած 2016 թվականի հունվարի 1-ից, սահմանեն ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, փոշու արտանետումների և էներգիայի կիրառման տարեկան արտանետումների ցանկը:

Հաշվի առնելով 29-րդ հոդվածում ներկայացված միավորման կանոնները՝ իրավասու մարմինները պետք է աղբի այրման յուրաքանչյուր գործարանի համար ձեռք բերեն հետևյալ տվյալները՝

- ա) աղբի այրման գործարանի ջերմային հզորության (ՄՎտ) ընդհանուր ծավալը,
- բ) աղբի այրման գործարանի տեսակը՝ կաթսա, գազի տուրբին, գազի շարժիչ, դիզելային շարժիչ և այլն (հստակեցնելով տեսակը),
- գ) աղբի այրման գործարանի շահագործման մեկնարկի ամսաթիվը,

դ) ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների և փոշու տարեկան ընդհանուր արտանետումները (տոննա տարեկան) (որպես ընդհանուր օդում կախված մասնիկներ),

ե) աղբի այրման գործարանի աշխատանքային ժամերի թիվը,

զ) զուտ ջերմարարության արժեքի մասով էներգիայի հզորության տարեկան ընդհանուր քանակը (T) տարեկան), որը հաշվարկված է ըստ հետևյալ վառելիքների կատեգորիաների՝ ածուխ, գործ ածուխ/լիգնիտ, բիոգանգված, տորֆ, այլ պինդ վառելիքներ (հստակեցնելով տեսակը), հեղուկ վառելիքներ, բնական գազ, այլ գազեր (հստակեցնելով տեսակը),

Հանձնաժողովի պահանջի դեպքում պետք է տրամադրվեն այս ցուցակներում ընդգրկված յուրաքանչյուր գործարանի մասին տարեկան տվյալները:

Ցուցակների ամփոփ նկարագիրը պետք է հասանելի լինի Հանձնաժողովի համար յուրաքանչյուր երեք տարվա մեջ 12 ամիսների ընթացքում՝ հաշվարկված նախատեսված եռամյա ժամկետի ավարտից: Այս ամփոփ նկարագրով պետք է առանձին ներկայացվի մաքրման և զտման գործարանների ներսում գտնվող աղբի այրման գործարանների տվյալները:

Հանձնաժողովը, 2003/4/ԵՀ հրահանգի համաձայն, անդամ պետությունների և հասարակության համար հասանելի է դարձնում այդ ցուցակների համեմատության ու գնահատման ամփոփ նկարագիրը 24 ամիսների ընթացքում՝ հաշվարկված նախատեսված եռամյա ժամկետի ավարտից:

4. Սկսած 2016 թվականի հունվարի 1-ից՝ անդամ պետությունները պետք է ամեն տարի հաշվետվություն ներկայացնեն Հանձնաժողով հետևյալ տվյալների մասին՝

ա) յուրաքանչյուր ամսվա կտրվածքով հաշվարկված օգտագործվող տեղական ծագման պինդ վառելիքներում ծծմբի պարունակության և ձեռք բերված ծծմբազերծման գործակցի միջինը՝ աղբի այրման այն գործարանների համար, որոնց նկատմամբ կիրառվում է 31-րդ հոդվածը: Առաջին տարում ևս, երբ կկիրառվի 31-րդ հոդվածը, պետք է հաշվետվություն ներկայացնել 30(2) և (3) հոդվածում նշված արտանետումների սահմանային թույլատրելի արժեքների հետ համապատասխանության անիրագործելիության տեխնիկական հիմնավորման մասին և

բ) աշխատանքային ժամերի տարեկան թիվը աղբի այրման այն գործարանների համար, որոնք, որպես հինգ տարվա համար հաշվարկված սահող միջինը, տարեկան չեն աշխատում ավելի քան 1500 աշխատանքային ժամ:

Հոդված 73  
**Վերանայումը**

1. Մինչև 2016 թվականի հունվարի 7-ը և դրանից հետո յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ Հանձնաժողովը, 72-րդ հոդվածում նշված տեղեկատվության հիման վրա, Եվրոպական պառլամենտ և Խորհուրդ սույն Հրահանգի կիրարկման արդյունքների ուսումնասիրության մասին հաշվետվություն է ներկայացնում:

Հաշվետվությունը պետք է ներառի միության կողմից իրականացվելիք գործողություն սահմանելու կարիքի գնահատումը՝ ամբողջ միության մասշտաբով արտանետումների սահմանային թույլատրելի արժեքների և նախատեսված գործողությունների դիտանցման և համապատասխանության կանոնների պահանջներ սահմանելու կամ եղածները թարմացնելու միջոցով, որը կկատարվի L<S եզրակացության շրջանակներում, որն ընդունվել է նախորդ եռամյա ժամկետում՝ հիմնվելով հետևյալ չափորոշիչների վրա՝

- ա) շրջակա միջավայրի վրա համապատասխան գործողությունների ազդեցություն և
- բ) համապատասխան գործողությունների համար նախատեսված առկա լավագույն տեխնիկաների շահագործման վիճակ:

Այդ գնահատումն անդրադառնում է 13(4) հոդվածում նշված ֆորումի եզրակացությանը:

Սույն Հրահանգի III և V գլուխները նախատեսված են այրման խոշոր կայանների համար՝ ամբողջ միության մասշտաբով նվազագույն պահանջները ներկայացնելու նպատակով:

Անհրաժեշտության դեպքում հաշվետվությանը կից օրենսդրական առաջարկ է ներկայացվում: Եթե երկրորդ ենթապարբերության մեջ նշված գնահատման մեջ նշված է նման կարիքի մասին, ապա օրենսդրական առաջարկը պետք է պարունակի այնպիսի դրույթներ, որոնք սահմանում են ամբողջ Միության համար սահմանված արտանետումների սահմանային թույլատրելի արժեքների և նախատեսված գործողությունների դիտանցման ու համապատասխանության գնահատման կանոնների պահանջները:

2. Հանձնաժողովը պետք է մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը վերանայի ներքոհիշյալ երևույթների արդյունքում առաջացող արտանետումների վերահսկման անհրաժեշտությունը՝

- ա) վառելիքների այրում այն կայաններում, որոնք ունեն 50 ՄՎտ-ից ցածր ընդհանուր ջերմային հզորություն,
- բ) խոշոր եղջերավոր կենդանիների ինտենսիվ բուծում և
- գ) գոմաղբի տարածում:

Հանձնաժողովը պետք է այդ վերանայման արդյունքների մասին հաշվետվություն ներկայացնի Եվրոպական պառլամենտ և Խորհուրդ՝ անհրաժեշտության դեպքում կից ներկայացնելով օրենսդրական առաջարկ:

3. Հանձնաժողովը մինչև 2011 թվականի դեկտեմբերի 31-ը պետք է Եվրոպական պառլամենտ և Խորհուրդ հաշվետվություն ներկայացնի I հավելվածում նշված սահմանաչափերի որոշման մասին՝

ա) տարբեր թռչնատեսակների՝ հատուկ դեպքում նաև լորի բուծման համար սահմանված հնարավոր սահմանաչափեր,

բ) միևնույն տարածքում գտնվող տարբեր տեսակների կենդանիների միաժամանակ բուծման համար սահմանված հնարավոր սահմանաչափեր:

Հանձնաժողովը պետք է այդ վերանայման արդյունքների մասին հաշվետվություն ներկայացնի Եվրոպական պառլամենտ և Խորհուրդ՝ անհրաժեշտության դեպքում կից ներկայացնելով օրենսդրական առաջարկ:

#### Հոդված 74

### **Հավելվածների փոփոխությունները**

Սույն Հրահանգի դրույթները առկա լավագույն մեթոդների հիման վրա գիտական և տեխնիկական առաջընթացին հարմարեցնելու համար Հանձնաժողովը պետք է պատվիրակված ակտեր ընդունի՝ 76-րդ հոդվածի համաձայն և 77-րդ ու 78-րդ հոդվածներում սահմանված պայմաններին համապատասխան, երբ խոսքը վերաբերում է V հավելվածի 3-րդ և 4-րդ մասերը, VI հավելվածի 2-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ մասերը, ինչպես նաև VII հավելվածի 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ մասերն այդ գիտական և տեխնիկական առաջընթացի հետ հարմարեցնելուն:

#### Հոդված 75

### **Կոմիտեի ընթացակարգը**

1. Հանձնաժողովին աջակցում է Կոմիտեն:

2. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, ապա կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամանակահատվածը սահմանվում է երեք ամիս:

## Հոդված 76

### Լիազորությունների պատվիրակումը

1. Սկսած 2011 թվականի հունվարի 6-ից՝ 48(5) և 74 –րդ հոդվածներով նախատեսված պատվիրակված ակտերն ընդունելու լիազորությունը պետք է հինգ տարի ժամկետով վերապահվի Հանձնաժողովին: Հանձնաժողովը պետք է հնգամյա ժամկետի ավարտից ամենաուշը վեց ամիս առաջ հաշվետվություն կազմի պատվիրակված լիազորությունների մասին: Լիազորությունների պատվիրակումը մեխանիկորեն կերկարաձգվի նույնքան տևողությամբ՝ մինչև Եվրոպական պառլամենտն ու Խորհուրդը այն չեղյալ համարեն՝ համաձայն 77–րդ հոդվածի:
2. Պատվիրակված ակտն ընդունելուց անմիջապես հետո Հանձնաժողովը պետք է Եվրոպական պառլամենտին և Խորհրդին միաժամանակ ծանուցի դրա մասին:
3. Պատվիրակված ակտ ընդունելու լիազորությունը վերապահվում է Հանձնաժողովին՝ համաձայն 77–րդ և 78–րդ հոդվածներում նշված պայմանների:

## Հոդված 77

### Պատվիրակումը չեղյալ համարելը

1. Եվրոպական պառլամենտն ու Խորհուրդը կարող են ցանկացած պահի չեղյալ համարել 48(5) և 74–րդ հոդվածներում նշված լիազորությունների պատվիրակումը:
2. Այն կառույցը, որը լիազորությունների պատվիրակումը չեղյալ համարելու համար ներքին ընթացակարգ է սահմանել, պետք է աշխատի նախքան վերջնական որոշում կայացնելը խելամիտ ժամկետներում դրա մասին տեղեկացնել այլ կառույցներին և Հանձնաժողովին՝ հիշատակելով չեղյալ հայտարարելու ենթակա լիազորություններն ու չեղյալ համարելու պատճառները:
3. Չեղյալ հայտարարելու մասին որոշումը վերջ կդնի այդ որոշման մեջ նշված լիազորությունների պատվիրակմանը: Այն ուժի մեջ է մտնում անմիջապես կամ դրանով սահմանված ավելի ուշ ժամկետում: Այն չի ազդում արդեն ուժի մեջ մտած պատվիրակված ակտերի վավերության վրա: Այն հրապարակվում է Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում:

## Հոդված 78

### **Պատվիրակված ակտերի վերաբերյալ առարկություններ**

1. Եվրոպական պառլամենտը կամ Խորհուրդը կարող են առարկություններ ներկայացնել պատվիրակված ակտերի վերաբերյալ ծանուցման ամսաթվից երկու ամսվա ընթացքում:

Եվրոպական պառլամենտի կամ Խորհրդի նախաձեռնությամբ՝ այդ ժամկետը երկարաձգվում է երկու ամսով:

2. Եթե, 1-ին պարբերության մեջ նշված ժամկետը լրանալուն պես, ոչ Եվրոպական պառլամենտը, ո՛չ Խորհուրդը առարկություններ չեն ներկայացնում պատվիրակված ակտի վերաբերյալ, ապա այն հրապարակվում է Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում և ուժի մեջ է մտնում դրանում նշված օրը:

Պատվիրակված ակտը կարող է հրապարակվել Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում և ուժի մեջ մտնել մինչև այդ ժամկետի լրանալը, եթե թե՛ Եվրոպական պառլամենտը, թե՛ Խորհուրդը Հանձնաժողովին տեղեկացնում են առարկություններ ներկայացնելու իրենց մտադրության մասին:

3. Եթե Եվրոպական պառլամենտը կամ Խորհուրդն առարկություններ է ներկայացնում պատվիրակված ակտի վերաբերյալ 1-ին պարբերության մեջ նշված ժամանակահատվածի ընթացքում, այն ուժի մեջ չի մտնում: Առարկություններ ներկայացնող հաստատությունը պետք է նշի պատվիրակված ակտի վերաբերյալ առարկության պատճառները:

## Հոդված 79

### **Պատժամիջոցները**

Անդամ պետությունները սահմանում են սույն Հրահանգի համաձայն ընդունված ազգային դրույթների խախտման դեպքում կիրառվող պատժամիջոցները: Նախատեսված պատժամիջոցները պետք է լինեն արդյունավետ, համարժեք և տարհամոզիչ: Անդամ պետությունները տեղեկացնում են Հանձնաժողովին այս դրույթների մասին ամենաուշը մինչև 2013 թվականի հունվարի 7-ը և առանց հապաղման տեղեկացնում են հետագայում դրանցում կատարված ցանկացած փոփոխության մասին:

## Հոդված 80

### **Փոխատեղումը**

1. Անդամ պետությունները պետք է գործողության մեջ դնեն 2-րդ հոդվածի, 3-րդ հոդվածի (8), (11) – (15), (18) – (23), (26) – (30), (34) – (38) և (41) կետերի, 4-րդ

հողվածի (2) և (3) կետերի, 7-րդ հողվածի, 8-րդ և 10-րդ հողվածների, 11-րդ հողվածի (ե) և (ը) կետերի, 12(1) հողվածի (ե) և (ը) կետերի, 13(7) հողվածի, 14(1)(գ) հողվածի (ii) կետի, 14(1) հողվածի (դ), (ե), (զ) և (ը) կետերի, 14-րդ հողվածի (2) – (7) կետերի, 15-րդ հողվածի (2) – (5) կետերի, 16-րդ, 17-րդ և 19-րդ հողվածների, 21-րդ հողվածի (2) – (5) կետերի, 22-րդ, 23-րդ, 24-րդ, 27-րդ, 28-րդ և 29-րդ հողվածների, 30-րդ հողվածի (1), (2), (3), (4), (7) և (8) կետերի, 31-րդ, 32-րդ, 33-րդ, 34-րդ, 35-րդ, 36-րդ, 38-րդ և 39-րդ հողվածների, 40-րդ հողվածի (2) և (3) կետերի, 42-րդ և 43-րդ հողվածների, 45(1) հողվածի, 58-րդ հողվածի, 59(5) հողվածի, 63-րդ հողվածի, 65(3) հողվածի, 69-րդ, 70-րդ, 71-րդ, 72-րդ և 79-րդ հողվածների և I հավելվածի առաջին ենթապարբերության ու 1.1, 1.4, 2.5(բ), 3.1, 4, 5, 6.1(գ), 6.4(բ), 6.10 և 6.11 կետերի, II հավելվածի, III հավելվածի 12-րդ կետի, V հավելվածի, VI հավելվածի 1-ին մասի (բ) կետի, 4-րդ մասի 2.2, 2.4, 3.1 և 3.2 կետերի, 6-րդ մասի 2.5 և 2.6 կետերի և 8-րդ մասի 1.1(դ) կետի, VII հավելվածի 4-րդ մասի 2-րդ կետի, 5-րդ մասի 1-ին կետի, 7-րդ մասի 3-րդ կետի, VIII հավելվածի 1-ին մասի 1-ին և 2(գ) կետերի, 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի ու 3-րդ մասի կիրարկման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը և վարչական ակտերը մինչև 2013 թվականի հունվարի 7-ը:

Նրանք կիրառում են այդ դրույթները նույն օրվանից սկսած:

Երբ անդամ պետություններն ընդունում են նշված միջոցները, ապա դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին կամ դրանց պաշտոնական հրապարակման ժամանակ ուղեկցվեն նման հղումով: Նման հղում կատարելու մեթոդները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

2. Անդամ պետությունները Հանձնաժողով պետք է ներկայացնեն ազգային իրավունքի հիմնական դրույթների տեքստը, որը նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտներում:

## Հոդված 81

### **Ուժը կորցրած ճանաչելը**

1. IX հավելվածի Ա կետում թվարկված ակտերով փոփոխված 78/176/ԵՏՀ, 82/883/ԵՏՀ, 92/112/ԵՏՀ, 1999/13/ԵՀ, 2000/76/ԵՀ և 2008/1/ԵՀ հրահանգներն ուժը կորցրած են ճանաչվում 2014 թվականի հունվարի 7-ից՝ չհակասելով IX հավելվածի Բ կետով սահմանված՝ հրահանգները ազգային իրավունքում փոխատեղելու և կիրառելու ժամկետների վերաբերյալ անդամ պետությունների պարտավորություններին:

2. IX հավելվածի Ա մասում նշված ակտերով փոփոխված 2001/80/ԵՀ հրահանգն ուժը կորցրած է ճանաչվում 2016 թվականի հունվարի 1-ից՝ չհակասելով IX հավելվածի Բ մասով սահմանված՝ հրահանգներն ազգային իրավունքում փոխատեղելու և դրանք կիրառելու ժամկետների վերաբերյալ անդամ պետությունների պարտավորություններին:

3. Ուժը կորցրած հրահանգներին հղումները պետք է հասկացվեն որպես սույն Հրահանգին հղումներ և պետք է կարդացվեն համաձայն X հավելվածում սահմանված համեմատական աղյուսակի:

## Հոդված 82

### Անցումային դրույթները

1. I հավելվածում նշված գործողություններն իրականացնող կառուցվածքների, 50 ՄՎտ նոմինալ ջերմային հզորությամբ գործողություններին վերաբերող 1.1 կետի, քիմիական վերամշակման միջոցով արտադրության հետ կապված գործողություններին վերաբերող 1.2 և 1.3, 1.4(ա), 2.1 – 2.6, 3.1 – 3.5, 4.1 – 4.6 կետերի, 2008/1/ԵՀ հրահանգի կարգավորման առարկա հանդիսացող գործողություններին վերաբերող 5.1 – 5.2 կետերի, 2008/1/ԵՀ հրահանգի կարգավորման առարկա հանդիսացող գործողություններին վերաբերող 5.3 (ա)(i) և (ii), 5.4, 6.1(ա) և (բ), 6.2 և 6.3, 6.4(ա), 6.4(բ) կետերի, 6.4(գ) և 6.5 – 6.9 կետերի (որոնք վերաբերում են այն կայանքներին, որոնք շահագործվում են և թույլտվություն ունեն մինչև 2013 թվականի հունվարի 7–ը կամ որոնց տնտեսավարող սուբյեկտները թույլտվության համար դիմում են ներկայացրել մինչև այդ օրը՝ պայմանով որ այդ կայանքները շահագործվեն 2014 թվականի հունվարի 7–ից ոչ ուշ) դեպքում անդամ պետությունները կիրառում են 80(1) հոդվածի համաձայն ընդունված օրենքները, կանոնակարգերը և վարչական ակտերը 2014 թվականի հունվարի 7–ից՝ բացի III գլխից և V հավելվածից:

2. I հավելվածում նշված գործողություններն իրականացնող կառուցվածքների առնչությամբ 50 ՄՎտ նոմինալ ջերմային հզորությամբ գործողություններին վերաբերող 1.1 կետի, 1.4 (բ) կետի, կենսաբանական վերամշակման միջոցով արտադրության հետ կապված գործողություններին վերաբերող 4.1 – 4.6 կետերի, 2008/1/ԵՀ հրահանգի կարգավորման առարկա չհանդիսացող գործողություններին վերաբերող 5.1 և 5.2 կետերի, 2008/1/ԵՀ հրահանգի կարգավորման առարկա չհանդիսացող գործողություններին վերաբերող 5.3(ա)(iii) – (v), 5.3(բ), 5.5 և 5.6, 6.1(գ), 6.4(բ) կետերի, 6.10 և 6.11 կետերի դեպքում (որոնք վերաբերում են այն կայանքներին, որոնք շահագործվում են և թույլտվություն ունեն մինչև 2013 թվականի հունվարի 7–ը ) անդամ պետությունները կիրառում են սույն Հրահանգի համաձայն ընդունված օրենքները, կանոնակարգերը և վարչական ակտերը 2015 թվականի հուլիսի 7–ից՝ բացի III ու IV գլուխներից և V ու VI հավելվածներից:

3. 30(2) հոդվածում նշված այրման կայանների դեպքում անդամ պետությունները 2016 թվականի հունվարի 1–ից կիրառում են 80(1) հոդվածի համաձայն ընդունված և III գլխի ու V հավելվածի կիրարկման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը և վարչական ակտերը:



4. 30(3) հողվածում նշված այրման կայանների դեպքում անդամ պետությունները 2013 թվականի հունվարի 7-ից սկսած այլևս չեն կիրառում 2001/80/ԵՀ հրահանգը:

5. Աղբը որպես հումք օգտագործող այրման կայանների դեպքում VI հավելվածի 4-րդ մասի 3.1 կետը կիրառվում է մինչև.

ա) 30(2) հողվածում նշված այրման կայանների դեպքում՝ 2015 թվականի դեկտեմբերի 31-ը.

բ) 30(3) հողվածում նշված այրման կայանների դեպքում՝ 2013 թվականի դեկտեմբերի 7-ը.

6. VI հավելվածի 4-րդ մասի 3.2 կետը կիրառվում է աղբը որպես հումք օգտագործող այրման կայանների դեպքում.

ա) 30(2) հողվածում նշված այրման կայանների դեպքում՝ 2016 թվականի հունվարի 1-ից

բ) 30(3) հողվածում նշված այրման կայանների դեպքում՝ 2013 թվականի դեկտեմբերի 7-ից:

7. 58-րդ հողվածը պետք է կիրառվի 2015 թվականի հունիսի 1-ից: Մինչ այդ այն նյութերը կամ դրանց խառնուրդները, որոնք իրենց ցնդող օրգանական միացությունների պարունակության պատճառով դասակարգված են որպես քաղցկեղածին, մուտագեն կամ, թիվ 1272/2008 կանոնակարգի (ԵՀ) համաձայն, վերարտադրության համար թունավոր, ստացել են կամ պետք է կրեն H340, H350, H350i, H360D կամ H360F վտանգի բնույթի և աստիճանի մասին վկայող նշում կամ R45, R46, R49, R60, կամ R61 ռիսկի ծածկագրեր, պետք է փոխարինվեն հնարավորինս շուտ և հնարավորինս կարճ ժամկետում պակաս վտանգավոր նյութերով կամ դրանց խառնուրդներով:

8. 59(5) հողվածը պետք է կիրառվի 2015 թվականի հունիսի 1-ից: Մինչ այդ ցնդող օրգանական միացությունների արտանետումները, որոնց տրվում են կամ որոնք պետք է կրեն H350, H350i, H360D կամ H360F վտանգի բնույթի և աստիճանի մասին վկայող նշում կամ R45, R46, R49, R60 կամ R61 ռիսկի ծածկագրեր կամ հալոգենացված ցնդող օրգանական միացությունները, որոնց տրվում են կամ պետք է կրեն H341 or H351 վտանգի բնույթի ու աստիճանի մասին վկայող նշում, պետք է հսկվեն փակ պայմաններում, որքան հնարավոր է տեխնիկապես և տնտեսապես պաշտպանելու համար հանրային առողջությունն ու շրջակա միջավայրը, և չպետք է գերազանցեն VII հավելվածի 4-րդ մասով սահմանված արտանետումների թույլատրելի նորմաները:

9. VII հավելվածի 4-րդ մասի 2-րդ կետը պետք է կիրառվի 2015 թվականի հունիսի 1-ից: Մինչ այդ ցնդող օրգանական միացությունների արտանետումների դեպքում, որոնց տրվում են կամ որոնք պետք է կրեն H341 կամ H351 վտանգի բնույթի և աստիճանի մասին վկայող նշում, կամ R40, կամ R68 ռիսկի

ծածկագրեր, եթե H341 կամ H351 վտանգի բնույթի և աստիճանի մասին վկայող նշման կամ R40, կամ R68 ռիսկի ծածկագրերի տրման պատճառ հանդիսացող միացությունների զանգվածը գերազանցում է կամ հավասար է 100 գ/ժ-ի, կիրառվում է 20մգ/նխմ նորման: Արտանետումների թույլատրելի նորման վերաբերում է առանձին միացությունների զանգվածներին:

### Հոդված 83

#### **Ուժի մեջ մտնելը**

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո 20-րդ օրը:

### Հոդված 84

#### **Հասցեատերերը**

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Ստրասբուրգում, 2010 թվականի նոյեմբերի 24 -ին:

Եվրոպական պառլամենտի կողմից՝

Նախագահ

Ժ. Բուլգել

Խորհրդի կողմից՝

Նախագահ

Օ. Չեսթել

[1] ՊՏ C 182, 04.08.2009թ., էջ 46:

[2] ՊՏ C 325, 19.12.2008թ., էջ 60:

[3] Եվրոպական պառլամենտի 2009 թվականի մարտի 10-ի դիրքորոշում (ՊՏ C 87 E, 01.04.2010թ., էջ 191) և Խորհրդի դիրքորոշում 2010 թվականի փետրվարի 15-ի առաջին ընթերցման ժամանակ (ՊՏ C 107 E, 27.04.2010թ., էջ 1): Եվրոպական պառլամենտի 2010 թվականի հուլիսի 7-ի դիրքորոշում (դեռևս չհրապարակված Պաշտոնական տեղեկագրում) և Խորհրդի 2010 թվականի նոյեմբերի 8-ի որոշում:

[4] ՊՏ L 54, 25.02.1978 թ., էջ 19:

[5] ՊՏ L 378, 31.12.1982թ., էջ 1:

[6] ՊՏ L 409, 31.12.1992 թ., էջ 11:

[7] ՊՏ L 85, 29.03.1999 թ., էջ 1:

[8] ՊՏ L 332, 28.12.2000 թ., էջ 91:

[9] ՊՏ L 309, 27.11.2001թ., էջ 1:

[10] ՊՏ L 24, 29.01.2008թ., էջ 8:

[11] ՊՏ L 242, 10.09.2002թ., էջ 1:

- [12] ՊՏ L 275, 25.10.2003թ., էջ 32:
- [13] ՊՏ L 175, 05.07.1985թ., էջ 40:
- [14] ՊՏ L 10, 14.01.1997 թ., էջ 13:
- [15] ՊՏ L 124, 17.05.2005 թ., էջ 4:
- [16] ՊՏ L 309, 27.11.2001թ., էջ 22:
- [17] ՊՏ L 33, 04.02.2006 թ., էջ 1:
- [18] ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23:
- [19] ՊՏ C 321, 31.12.03, էջ 1:
- [20] ՊՏ L 159, 29.06.1996թ., էջ 1:
- [21] ՊՏ L 125, 21.05.2009 թ., էջ 75:
- [22] ՊՏ L 106, 17.04.2001 թ., էջ 1:
- [23] ՊՏ L 353, 31.12.2008 թ., էջ 1:
- [24] ՊՏ L 327, 22.12.2000թ., էջ 1:
- [25] ՊՏ L 303, 31.10.1990 թ., էջ 6:
- [26] ՊՏ L 176, 15.07.2003 թ., էջ 37:
- [27] ՊՏ L 312, 22.11.2008 թ., էջ 3:
- [28] Խորհրդի 2000 թվականի մայիսի 3-ի 2000/532/ԵՀ որոշմամբ փոխարինված՝ «Թափոնների մասին» Խորհրդի 75/442/ԵՏՀ հրահանգի 1(ա) հոդվածի համաձայն՝ «Թափոնների ցուցակ սահմանող» 94/3/ԵՀ որոշում և «Վտանգավոր թափոնների մասին» Խորհրդի 91/689/ԵՏՀ հրահանգի 1(4) հոդվածի համաձայն՝ Խորհրդի «Վտանգավոր թափոնների ցուցակ հաստատող» 94/904/ԵՀ որոշում (ՊՏ L 226, 06.09.2000թ., էջ 3):
- [29] ՊՏ L 143, 30.04.2004 թ., էջ 87:
- [30] ՊՏ L 143, 30.04.2004 թ., էջ 56:
- [31] ՊՏ L 372, 27.12.2006թ., էջ 19:
- [32] «Համայնքի էկոկառավարման և աուդիտի համակարգին (ՀԷԿԱՀ) կազմակերպությունների կամավոր մասնակցության մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 1221/2009 կանոնակարգ (ԵՀ) (ՊՏ L 342, 22.12.2009թ., էջ 1):
- [33] ՊՏ L 41, 14.02.2003 թ., էջ 26:
- [34] ՊՏ L 140, 05.06.2009 թ., էջ 114:
- [35] ՊՏ L 273, 10.10.2002 թ., էջ 1:
- [36] ՊՏ L 121, 11.05.1999 թ., էջ 13:
- [37] ՊՏ L 190, 12.07.2006թ., էջ 1:
- [38] ՊՏ L 396, 30.12.2006 թ., էջ 1:
-

## ՀԱՎԵԼՎԱԾ I

### 10-րդ հոդվածում նշված գործունեության տեսակները

Ստորև ներկայացված սահմանային թույլատրելի մեծությունները/նորմերը հիմնականում վերաբերում են արտադրական հզորություններին կամ արտադրության ծավալներին: Եթե սահմանային նորմեր պարունակող միևնույն գործունեության նկարագրի տակ ընկնող մի քանի տեսակի արտադրական գործունեություններ իրականացվում են միևնույն կառուցվածքում, արտադրական գործունեության այդ տեսակի հզորությունները գումարվում են: Թափոնների կառավարման գործունեության դեպքում այդ հաշվարկը կիրառվում է գործունեությունների 5.1, 5.3(ա) և 5.3(բ) մակարդակներում:

Հանձնաժողովը վերահսկում է.

ա) կապը սույն հավելվածում և 2008/98/ԵՀ հրահանգի I և II հավելվածներում նկարագրված թափոնների կառավարման գործունեությունների միջև, և  
բ) «արդյունաբերական մասշտաբ» տերմինի մեկնաբանումը, որը վերաբերում է սույն հավելվածում նկարագրված՝ քիմիական արտադրության հետ կապված գործունեություններին:

#### 1. Էներգետիկ արդյունաբերության ճյուղեր

1.1. վառելիքի այրում՝ 50 ՄՎտ կամ ավելի նոմինալ ջերմային հզորությամբ կառուցվածքներում

1.2. Նավթի և գազի մշակում

1.3. Կոքսի արտադրություն

1.4. Հետևյալ նյութերի գազաֆիկացում և հեղուկացում.

ա) ածխի

բ) այլ վառելիքների 20 ՄՎտ և ավելի նոմինալ ջերմային հզորությամբ կայանքներում/կառուցվածքներում

#### 2. Մետաղների արտադրություն և վերամշակում

2.1. Մետաղների հանքաքարերի (ներառյալ ծծմբային հանքաքարը) թրծում կամ այրում

2.2. Չուգունի կամ պողպատի արտադրություն (առաջնային կամ երկրորդային հալում), ինչպես նաև շարունակական ծուլում, որոնց արտադրողականությունը գերազանցում է ժամում 2,5 տոննան

2.3. Սև մետաղների վերամշակում.

ա) տաք գլոցման հաստոցների շահագործում, որոնք արտադրում են ժամում 20 տոննայից ավելի չմշակված պողպատ,

բ) դարբնոցների շահագործում, որոնք ապահովված են մուրճերով, որոնցից յուրաքանչյուրի էներգիան գերազանցում է 50 կիլոջոուլը, երբ օգտագործվող ջերմատվությունը գերազանցում է 20 ՄՎտ-ն,

գ) ձուլված մետաղական պաշտպանիչ ծածկերի օգտագործում, որոնց օգնությամբ ժամում արտադրվում է ավելի քան 2 տոննա պողպատ:

2.4. Սև մետաղների ձուլման ցեխերի շահագործում, որոնց արտադրողականությունը գերազանցում է օրական 20 տոննան

2.5. Գունավոր մետաղների վերամշակում.

ա) հանքաքարերից, կոնցենտրատներից կամ երկրորդական հումքից մետաղագործական, քիմիական կամ էլեկտրոլիտիկ գործընթացների միջոցով գունավոր չմշակված մետաղների արտադրություն,

բ) գունավոր մետաղների, այդ թվում՝ վերականգնված արտադրանքի հալում, ինչպես նաև ձուլում ու գունավոր մետաղների ձուլման ցեխերի շահագործում, որոնց հալման հզորությունը գերազանցում է օրական 4 տոննան՝ կապարի և կադմիումի համար, և 20 տոննան՝ մյուս բոլոր մետաղների համար:

2.6. Էլեկտրոլիտիկ կամ քիմիական գործընթացների միջոցով մետաղների և պլաստմասսայի նախնական վերամշակում, երբ վերամշակման ցիստեռնների ծավալը գերազանցում է 30 մ<sup>3</sup>-ը:

3. Հանքարդյունաբերություն

3.1. Ցեմենտի, կրի ու մագնեզիումի օքսիդի արտադրություն

ա) պտտվող վառարաններում ցեմենտի կլինկերի թրծում, որոնց արտադրողականությունը գերազանցում է օրական 500 տոննան կամ այլ վառարաններում, որոնց արտադրողականությունը գերազանցում է օրական 50 տոննան,

բ) կրի արտադրություն վառարաններում, որոնց արտադրողականությունը գերազանցում է օրական 50 տոննան,

գ) մագնեզիումի օքսիդի արտադրություն վառարաններում, որոնց արտադրողականությունը գերազանցում է օրական 50 տոննան:

3.2. Ասբեստի կամ ասբեստ պարունակող արտադրանքի արտադրություն

3.3. Ապակու, ինչպես նաև ապակե մանրաթելի արտադրություն, որի հալման հզորությունը գերազանցում է օրական 20 տոննան

3.4. Հանքային նյութերի հալում՝ ներառյալ հանքային մանրաթելի արտադրությունը, որի հալման հզորությունը գերազանցում է օրական 20 տոննան

3.5. Կերամիկական ապրանքների, մասնավորապես՝ ծածկի կղմինդրի, աղյուսի, հրակայուն աղյուսի, կղմինդրի, կավե ամանեղենի կամ ճենապակու արտադրություն, որի արտադրողականությունը գերազանցում է օրական 75 տոննան, և (կամ) որոնց վառարանների ծավալը գերազանցում է 4 մ<sup>3</sup>-ը, իսկ ցանկացած վառարանի խտություն գերազանցում է 300 կգ/մ<sup>3</sup>-ը:

#### 4. Քիմիական արտադրություն

Սույն մասի նպատակներով՝ սույն մասում նշված գործունեության տեսակների իմաստով արտադրությունը նշանակում է արտադրություն արդյունաբերական ծավալներով՝ 4.1- 4.6 կետերում թվարկված նյութերի կամ նյութերի խմբերի քիմիական կամ կենսաբանական վերամշակման միջոցով:

4.1. Այնպիսի օրգանական քիմիկատների արտադրություն, ինչպիսիք են.

ա) պարզ ածխաջրածինները (կանոնավոր կամ ցիկլային, հագեցած կամ չհագեցած, ալիֆատիկ կամ արոմատիկ).

բ) թթվածին պարունակող ածխաջրածինները, ինչպիսիք են սպիրտը, կետոնները, կարբոնաթթուները, եթերները և եթերների խառնուրդը, ացետատները, պերօքսիդներն ու էպօքսիդային խեժը.

գ) ծծմբային ածխաջրածինները.

դ) ազոտական ածխաջրածինները, ինչպիսիք են ամինները, ամիդները, ազոտային միացությունները կամ նիտրոմիացությունները, նիտրիլները, ցիանատները, իզոցիանատները.

դ) ֆոսֆոր պարունակող ածխաջրածինները.

ե) հալոգեն ածխաջրածինները.

զ) մետաղաօրգանական միացությունները.

է) պլաստմասսա ( պոլիմերներ, սինթետիկ մանրաթել և թաղանթանյութ).

ը) սինթետիկ կաուչուկը.

թ) ներկանյութերը և պիգմենտները.

ժ) մակերևութաակտիվ նյութերը:

4.2. Այնպիսի անօրգանական քիմիկատների արտադրություն, ինչպիսիք են.

ա) գազերը, ինչպիսիք են ամոնիակը, քլորը կամ քլորաջրածինը, ֆտորը կամ ֆտորաջրածինը, ածխածնի օքսիդը, ծծմբային միացությունները, ազոտի օքսիդները, ջրածինը, ծծմբային անհիդրիդը, կարբոնիլ քլորիդը.

ա) թթուները, ինչպիսիք են քրոմաթթուն, ֆտորաջրածնաթթուն, ֆոսֆորային թթուն, ազոտական թթուն, քլորաջրածնային թթուն, ծծմբաթթուն, օլեումը/ (ծխացող ծծմբաթթուն), ծծմբավոր թթուները.

բ) հիմքերը, ինչպիսիք են ամոնիումի հիդրօքսիդը, կալիումի հիդրօքսիդը, նատրիումի հիդրօքսիդը.

դ) աղերը, ինչպիսիք են ամոնիումի քլորիդը, կալիումի քլորատը, կալիումի կարբոնատը, նատրիումի կարբոնատը, պերբորատը, արծաթի նիտրատը.

ե) ոչ մետաղները, ինչպիսիք են մետաղի օքսիդները կամ այլ անօրգանական միացություններ, ինչպիսիք են կալցիումի կարբիդը, սիլիցիումը, սիլիցիումի կարբիդը.

4.3. Ֆոսֆորային, ազոտային կամ կալիումական պարարտանյութերի արտադրություն (մաքուր կամ խառնուրդով պարարտանյութեր)

4.4. Բույսերի պահպանման արտադրանքների կամ բիոցիդների արտադրություն

4.5. Դեղագործական արտադրանքների, այդ թվում՝ միջանկյալ նյութերի արտադրություն

4.6. Պայթուցիկ նյութերի արտադրություն

5. Թափոնների կառավարում

5.1. Օրական 10 տոննա ծավալը գերազանցող վտանգավոր թափոնների հեռացում կամ վերականգնում՝ հետևյալ գործողություններից մեկի կամ մի քանիսի ներգրավմամբ.

ա) կենսաբանական մաքրում,

բ) ֆիզիկաքիմիական մաքրում,

գ) տեսախառնումը կամ խառնումը՝ նախքան 5.1 և 5.2 կետերում թվարկված գործողությունները կատարելը,

դ) վերափաթեթավորումը՝ նախքան 5.1 և 5.2 կետերում թվարկված գործողությունները կատարելը,

ե) լուծիչի բարելավում/ռեգեներացիա

զ) մետաղներից և մետաղի միացություններից բացի՝ անօրգանական այլ մետաղների վերամշակում/բարելավում,

է) թթուների և հիմքերի ռեգեներացիա,

ը) աղտոտումը նվազեցնելու նպատակով օգտագործվող միացությունների վերականգնում.

թ) կատալիզատորներից միացությունների վերականգնում,

ժ) նավթի վերամաքում կամ նավթի օգտագործման այլ ձևեր.

Ժա) մակերևութային ջրամբարներ:

5.2. Թափոնների հեռացում կամ վերականգնում թափոնների այրման սարքերում կամ թափոնների այրման գործարաններում.

ա) ոչ վտանգավոր թափոնների համար, որոնց ծավալը գերազանցում է ժամում 3 տոննան,

բ) վտանգավոր թափոնների համար, որոնց ծավալը գերազանցում է ժամում 10 տոննան:

5.3. ա) Ոչ վտանգավոր թափոնների հեռացում, որոնց ծավալը գերազանցում է օրական 50 տոննան և ներառում հետևյալ գործունեություններից մեկը կամ մի քանիսը՝ բացառությամբ այն գործողությունների, որոնք «Քաղաքային կեղտաջրերի մաքրման մասին» [1] Խորհրդի 1991 թվականի մայիսի 21–ի 91/271/ԵՏՀ հրահանգի կարգավորման առարկա չեն.

i) կենսաբանական մաքրում,

ii) ֆիզիկաքիմիական մաքրում,

iii) թափոնների նախնական մաքրում՝ այրման կամ վերականգնման/վերամշակման նպատակով

iv) մոխիրների և կեղտի մաքրում,

v) մետաղի թափոնները մանրացնող մեքենաների մաքրում, այդ թվում՝ էլեկտրական և էլեկտրոնիկայի թափոնային սարքերի ու օգտագործումից հանված փոխադրամիջոցների և դրանց բաղադրիչների մաքրում:

բ) Օրական 75 տոննա ծավալը գերազանցող ոչ վտանգավոր թափոնների վերականգնում կամ վերականգնում և հեռացում՝ հետևյալ գործողություններից որևէ մեկի կամ մի քանիսի ներգրավմամբ՝ բացառությամբ այն գործողությունների, որոնք 91/271/ԵՏՀ հրահանգի կարգավորման առարկա չեն.

i)) կենսաբանական մաքրում,

ii) թափոնների նախնական մաքրում՝ այրման կամ վերականգնման/վերամշակման նպատակով

iii) մոխիրների և կեղտի մաքրում,

iv) մետաղի թափոնները մանրացնող մեքենաների մաքրում, այդ թվում՝ էլեկտրական և էլեկտրոնիկայի թափոնային սարքերի ու օգտագործումից հանված փոխադրամիջոցների և դրանց բաղադրիչների մաքրում:

Եթե թափոնների մաքրման միակ իրականացված գործողությունը անաերոբիկ (անօդակյաց) վերամշակումն է, ապա այդ գործողության համար նախատեսված հզորության շեմը պետք է լինի օրական 100 տոննա:

5.4. Ինչպես սահմանված է «Աղբավայրերի մասին» Խորհրդի 1999 թվականի ապրիլի 26–ի 1999/31/ԵՀ հրահանգի 2(գ) հոդվածով [2], օրական 10 տոննայից ավելի թափոն ստացող կամ 25000 տոննա ծավալը գերազանցող աղբավայրերը՝ բացառությամբ չեզոք թափոնների համար նախատեսված աղբավայրերի:



5.5. 5.1, 5.2, 5.4 ու 5.6 կետերում նշված գործողությունների նպատակով 5.4 կետում չնշված ժամանակավոր պահեստավորված վտանգավոր թափոններ՝ 50 տոննա ընդհանուր ծավալով (բացառությամբ թափոնի արտադրման վայրում ժամանակավոր պահեստավորման, որից հետո թափոնները պետք է հավաքվեն)

5.6. 50 տոննա ընդհանուր ծավալով վտանգավոր թափոնների ստորգետնյա պահեստավորում

## 6. Արտադրական գործունեության այլ տեսակներ

6.1. Արտադրություն արդյունաբերական կառուցվածքներում.

ա) փայտանյութից կամ այլ թելավոր նյութերից ցելյուլոզայի արտադրության համար.

բ) օրական 20 տոննան գերազանցող արտադրողականությամբ թղթի և ստվարաթղթի արտադրության համար:

գ) հետևյալ փայտե հիմքով պանելներից մեկը կամ մի քանիսը. տաշեղային սալիկներ, փայտասալիկներ (ԴՄՊ) կամ ֆիբրոլիթ, որոնց ծավալը գերազանցում է 600 մ<sup>3</sup>-ը:

6.2. Թելերի և տեքստիլի նախնական մշակում (լվացում, գունաթափում, մերսերացում) կամ ներկում, որոնց վերամշակման ծավալը գերազանցում է օրական 10 տոննան:

6.3. Մորթիների և կաշիների ներկում, որտեղ օրական մշակվում է ավելի քան 12 տոննա պատրաստի արտադրանք:

6.4. ա) մսեղիքի արտադրման սպանդանոցների շահագործում, որոնց արտադրողականությունը գերազանցում է օրական 50 տոննան

բ) միայն փաթեթավորումից բացի՝ վերամշակված կամ ոչ վերամշակված և սննդի ու կենդանիների կերի արտադրության համար նախատեսված հետևյալ հումքի մաքրում և վերամշակում.

i) կենդանական ծագման հումք (բացառությամբ կաթի)՝ օրական ավելի քան 75 տոննա արտադրողականությամբ.

ii) բուսական ծագման հումք՝ օրական ավելի քան 300 տոննա արտադրողականությամբ կամ 600 տոննա արտադրողականությամբ, եթե տվյալ կառուցվածքը ցանկացած տարվա ընթացքում շահագործվում է իրար հաջորդող 90 օրից ոչ ավելի.

iii) կենդանական և բուսական ծագման հումք՝ ինչպես համակցված, այնպես էլ առանձին արտադրատեսակներում, որոնց արտադրողականությունն ավելի բարձր է, քան.


- 75-ը, եթե A-ն հավասար է կամ 10-ից շատ է, կամ

- [300- (22,5 × A)] ցանկացած այլ դեպքում,

որտեղ «A»-ն արտադրողականության հզորության կենդանական ծագման հումքի չափաբաժինն է (քաշի առումով):

Փաթեթավորումը չպետք է ներառվի արտադրատեսակի վերջնական քաշի մեջ: Սույն կետը չի կիրառվում, եթե հումքը միայն կաթ է:

### **Շեմը (օրական տոննաները)**



**Կենդանական ծագման հումք (արտադրողականության տոկոսը)**

գ) Կաթի մշակում և վերամշակում, եթե մեկ օրվա ընթացքում ստացված կաթի քանակը գերազանցում է 200 տոննան (միջին ցուցանիշ՝ տարեկան կտրվածքով):

6.5. Կենդանիների մսեղիքի և կենդանական թափոնների հեռացում ու վերամշակում, որոնց վերամշակման ծավալը գերազանցում է օրական 10 տոննան:

6.6. Թռչունների կամ խոզերի բուծում՝ ժամանակակից ինտենսիվ տեխնոլոգիաներով.

ա) ավելի քան 40000 տեղ՝ ընտանի թռչունների համար.

բ) 2000 տեղ՝ արտադրության համար նախատեսվող խոզերի (30 կգ-ից ավելի) համար, կամ

գ) ավելի քան 750 տեղ՝ ընտանի թռչունների համար.

6.7. Նյութերի, առարկաների կամ օրգանական լուծիչներ պարունակող արտադրատեսակների նախնական մշակում, մասնավորապես՝ հղկման,

տպագրման, երեսապատման, ճարպահեռացման, անջրանցիկության ապահովման, չափսերի որոշման, ներկման, մաքրման կամ հագեցման համար, որոնց սպառման ծավալը գերազանցում է ժամում 150 կգ-ը կամ տարեկան 200 տոննան:

6.8. Մոխրացման և գրաֆիտացման միջոցով ածխի կամ էլեկտրոգրաֆիտի արտադրություն:

6.9. Սույն Հրահանգով նախատեսվող կառուցվածքներից 2009/31/ԵՀ հրահանգի համաձայն՝ ստորգետնյա պահեստավորման նպատակներով՝ CO<sub>2</sub> –ի աղբյուրահանում

6.10. Օրական 75 մ<sup>3</sup> ծավալը գերազանցող փայտի և քիմիկատներ պարունակող փայտե արտադրատեսակների պահպանում6.11. Առանձին կարգով իրականացված կեղտաջրերի մաքրում, որը նախատեսված չէ 91/271/ԵՏՀ հրահանգով և իրականացվում է II գլխով նախատեսվող կառուցվածքի կողմից

[1] ՊՏ L 135, 30.05.1991 թ., էջ 40:

[2] ՊՏ L 182, 16.07.1999 թ., էջ 1:

-----

## ՀԱՎԵԼՎԱԾ II

### Աղտոտող նյութերի ցուցակը

#### ՄԹՆՈԼՈՐՏ/ՕԴ

1. Ծծմբի երկօքսիդ և այլ ծծմբային միացություններ
2. Ազոտի օքսիդներ և այլ ազոտային միացություններ
3. Շմոլ գազ
4. Ցնդող օրգանական միացություններ
5. Մետաղներ և դրանց միացությունները
6. Փոշի, այդ թվում՝ միկրոսկոպիկ պինդ մարմիններ
7. Ասբեստ (օդ բարձրացած մասնիկներ, մանրաթելեր)
8. Քլոր և դրա միացությունները
9. Ֆտոր և դրա միացությունները
10. Արսենիում և դրա միացությունները
11. Ցիանատներ
12. Նյութեր և խառնուրդներ, որոնցում հաստատվել է քաղցկեղածին կամ մուտագեն հատկանիշների առկայությունը, կամ այնպիսի հատկանիշների առկայությունը, որոնք օդի միջոցով կարող են ազդել վերարտադրության վրա
13. Պոլիբրոմինացված դիբենզոդիօքսին և պոլիբրոմինացված դիբենզոֆուրան

#### ԶՈՒՐ

1. Օրգանահալոգեն միացություններ և նյութեր, որոնք ջրային ավազանում կարող են նման միացություններ կազմել
2. Օրգանաֆոսֆորային միացություններ
3. Մանգանի միացություններ
4. Նյութեր և խառնուրդներ, որոնցում հաստատվել է քաղցկեղածին կամ մուտագեն հատկանիշների առկայությունը, կամ այնպիսի հատկանիշների առկայությունը, որոնք ջրային ավազանում կամ դրա միջոցով կարող են ազդել վերարտադրության վրա:
5. Կայուն ածխաջրածիններ և կայուն ու կենսակուտակման հատկանիշով օժտված օրգանական թունավոր նյութեր
6. Ցիանատներ
7. Մետաղներ և դրանց միացությունները
8. Արսենիում և դրա միացությունները
9. Բիոցիդներ և բույսերի պահպանման արտադրանքներ
10. Օդ բարձրացած նյութեր

11. Նյութեր, որոնք առաջ են բերում ճահճացում (մասնավորապես՝ նիտրատներ և ֆոսֆատներ)

12. Նյութեր, որոնք բացասաբար են ազդում թթվածնային հավասարակշռության վրա (և կարող են չափվել՝ կիրառելով այնպիսի պարամետրեր, ինչպիսիք են թթվածնի կենսաբանական պահանջը, թթվածնի քիմիական պահանջը և այլն)

13. 2000/60/ԵՀ հրահանգի X հավելվածում թվարկված նյութեր:

-----

### ՀԱՎԵԼՎԱԾ III

#### **Լավագույն հասանելի տեխնոլոգիաների սահմանման չափանիշները**

1. քիչ թափոններով տեխնոլոգիաների օգտագործումը.
  2. նվազ վտանգավոր նյութերի օգտագործումը.
  3. անհրաժեշտության դեպքում, պրոցեսի հետևանքով առաջացած կամ օգտագործված նյութերի և թափոնների վերականգնման կամ վերամշակման խրախուսումը.
  4. համեմատական պրոցեսները, սարքավորումները կամ շահագործման մեթոդները, որոնք արդյունաբերության մեջ հաջողությամբ կիրառվել են.
  5. տեխնոլոգիական առաջընթացները և գիտական մտքի ու գիտելիքների փոփոխությունները
  6. համապատասխան արտանետումների բնույթը, ազդեցությունները և ծավալը.
  7. նոր և օգտագործվող կառուցվածքների շահագործման մեկնարկի օրերը.
  8. հասանելի լավագույն տեխնոլոգիաները ներդնելու համար անհրաժեշտ ժամանակի տևողությունը.
  9. պրոցեսում օգտագործվող հումքի սպառումն ու բնույթը և էներգետիկ արդյունավետությունը.
  10. շրջակա միջավայրի վրա արտանետումների ազդեցությունը և դրանց վտանգները կանխելու կամ նվազագույնի հասցնելու անհրաժեշտությունը.
  11. վթարները կանխելու և շրջակա միջավայրի համար դրանց հետևանքները նվազեցնելու անհրաժեշտությունը.
  12. պետական միջազգային կազմակերպությունների կողմից հրապարակված տեղեկություններ
-

## ՀԱՎԵԼՎԱԾ IV

### Որոշումների ընդունման գործընթացում հանրային մասնակցությունը

1. Հանրությունը պաշտոնական ծանուցագրերով կամ համապատասխան այլ միջոցներով, առկայության դեպքում, օրինակ՝ էլեկտրոնային կրիչով, պետք է տեղեկացվի հետևյալ խնդիրների մասին՝ նախքան թույլտվության տրամադրման ընթացակարգի մեկնարկը կամ ամենաուշը՝ տեղեկատվությունը պատշաճ կերպով ներկայացվելուց անմիջապես հետո՝

ա) թույլտվություն ստանալու դիմումը կամ, ելնելով կոնկրետ դեպքից, 21-րդ հոդվածի համաձայն, թույլտվության կամ թույլտվության պայմանների արդիականացման առաջարկությունը, այդ թվում նաև՝ 12(1) հոդվածում նշված տարրերի նկարագրությունը.

բ) կիրառելիության դեպքում, այն փաստը, որ թույլտվության համար դիմումին վերաբերող որոշումը կայացվում է անդամ պետությունների միջև խորհրդատվությունից հետո՝ 26-րդ հոդվածին համապատասխան.

գ) որոշման ընդունման համար պատասխանատու այն իրավասու մարմինների տվյալները, որոնցից կարելի է համապատասխան տեղեկություններ ստանալ, և որոնց կարելի է դիտողություններ կամ հարցեր ներկայացնել, ինչպես նաև դիտողություններ կամ հարցեր ներկայացնելու համար սահմանված ժամանակացույցի մանրամասները.

դ) հնարավոր որոշումների բնույթի կամ, առկա որոշման դեպքում, որոշման նախագծի մասին.

ե) կիրառելիության դեպքում՝ տեղեկություններ՝ թույլտվության կամ թույլտվության պայմանների թարմացման մասին առաջարկի առնչությամբ.

զ) հիշատակում ժամկետների կամ այն վայրերի մասին, որտեղ և որոնց միջոցով համապատասխան տեղեկատվությունը մատչելի կլինի.

է) տեղեկություններ՝ սույն հոդվածի 5-րդ պարբերության համաձայն հանրային մասնակցությանն ուղղված միջոցառումների մասին:

2. Անդամ պետություններն ապահովում են, որ հետևյալը համապատասխան ժամկետներում մատչելի լինի հասարակությանը՝

ա) ազգային իրավունքի համաձայն՝ իրավասու մարմինն փոխանցված հիմնական հաշվետվությունները և նրանց տրված խորհրդատվությունն այն ժամանակահատվածում, երբ շահագրգիռ հանրությունը տեղեկացված էր՝ 1-ին կետի համաձայն.

բ) 2003/4/ԵՀ հրահանգի համաձայն՝ 1-ին կետում նշված տեղեկատվությունից բացի այլ տեղեկատվություն, որոնք կարևոր են՝ սույն Հրահանգի 5-րդ հոդվածի համաձայն որոշում կայացնելու համար և որոնք հասանելի են դառնում միայն այն ժամանակ, երբ շահագրգիռ հասարակությունը տեղեկացվում էր՝ 1-ին կետի համաձայն:

3. Շահագրգիռ հասարակությունն իրավունք ունի դիտողություններ և կարծիքներ ներկայացնելու իրավասու մարմին՝ նախքան որոշում կայացնելը:

4. Սույն հոդվածի համաձայն անցկացված խորհրդատվությունների արդյունքները պետք է պատշաճ կերպով հաշվի առնվեն որոշում կայացնելիս:

5. Հանրությանը տեղեկացնելու (օրինակ՝ որոշակի տարածքում պաստառների տեղադրման կամ տեղական թերթերում հրապարակումների միջոցով) և շահագրգիռ հանրության հետ խորհրդատվություն անցկացնելու (օրինակ՝ գրավոր դիմումների կամ հանրային հարցումների միջոցով) համար մանրամասն միջոցառումները սահմանվում են անդամ պետությունների կողմից: Տարբեր փուլերի համար խելամիտ ժամկետներ են նախատեսվում՝ բավականաչափ ժամանակ տրամադրելով հանրությանը կամ շահագրգիռ հանրությանը տեղեկացնելու համար՝ պատրաստվելու և արդյունավետ կերպով մասնակցելու համար սույն հոդվածի դրույթների համաձայն շրջակա միջավայրի շուրջ որոշումների կայացման գործում:

-----



ՀԱՎԵԼՎԱԾ V

Այրման կայաններին վերաբերող տեխնիկական դրույթներ

ՄԱՍ 1

**30(2) հողվածում նշված այրման կայանների համար սահմանված արտանետումների թույլատրելի սահմանային նորմաները**

1. Արտանետումների թույլատրելի բոլոր սահմանային նորմաները պետք է հաշվարկվեն 293 կելվին ջերմաստիճանի և 101.3 կիլոպասկալ ճնշման ներքո և արտանետվող գազերում ջրի գոլորշիների բաղադրությունն ստուգելուց հետո ու ստանդարտացված O2 պարունակությունը՝ 6 տոկոս պինդ վառելիքի համար, 3 տոկոս՝ այրման կայանների համար՝ բացի հեղուկ և գազային վառելիք օգտագործող գազատուրբիններից ու գազով շահագործվող կայաններից, և 15 տոկոս՝ գազատուրբինների ու գազով շահագործվող կայանների համար:

2. Գազատուրբիններից և գազով շահագործվող կայաններից բացի՝ պինդ կամ հեղուկ վառելիքով շահագործվող այրման կայանների համար նախատեսված ծծմբի դիօքսիդի արտանետումների թույլատրելի սահմանային նորմաները (մգ/նխմ)

| Ընդհանուր նոմինալ ջերմային հզորություն (ՄՎտ) | Ածուխ, լիգնիտ և այլ պինդ վառելիք | Կենսազանգված | Տորֆ | Հեղուկ վառելիք |
|--|----------------------------------|--------------|------|----------------|
| 50-100                                       | 400                              | 200          | 300  | 350            |
| 100-300                                      | 250                              | 200          | 300  | 250            |
| > 300  | 200                              | 200          | 200  | 200            |

Պինդ վառելիքով շահագործվող այրման կայանների դեպքում, որոնց թույլտվություն է տրվել մինչև 2002 թվականի նոյեմբերի 27-ը, կամ որոնց տնտեսավարող սուբյեկտները ներկայացրել են թույլտվության համար լրացված դիմում՝ նախքան նշված նույն ժամանակահատվածը, և որոնք գործարկվել են 2003 թվականի նոյեմբերի 27-ից ոչ ուշ և որոնք, որպես հինգ տարվա համար հաշվարկված սահող միջին, տարեկան 1500 աշխատանքային ժամից ավելի չեն աշխատում, ծծմբի դիօքսիդի արտանետումների թույլատրելի սահմանային նորման կազմում է 800 մգ/նխմ:

Հեղուկ վառելիքով շահագործվող այրման կայանների դեպքում, որոնց թույլտվություն է տրվել մինչև 2002 թվականի նոյեմբերի 27-ը, կամ որոնց տնտեսավարող սուբյեկտները ներկայացրել են թույլտվության համար լրացված

դիմում՝ նախքան նշված նույն ժամանակահատվածը, և որոնք գործարկվել են 2003 թվականի նոյեմբերի 27-ից ոչ ուշ և որոնք, որպես հինգ տարվա համար հաշվարկված սահող միջին, տարեկան 1500 աշխատանքային ժամից ավելի չեն աշխատում, ծծմբի դիօքսիդի արտանետումների թույլատրելի սահմանային նորման կազմում է 850 մգ/նխմ՝ այն կայանների դեպքում, որոնց ընդհանուր նոմինալ ջերմային հզորությունը չի գերազանցում 300 ՄՎտ-ն և 400 մգ/նխմ՝ այն կայանների դեպքում, որոնց ընդհանուր նոմինալ ջերմային հզորությունը չի գերազանցում 300 ՄՎտ-ն:

Այրման կայանի մի մասի դեպքում, որում դրանից արտանետվող գազերը հեռացվում են մեկ կամ մի քանի ծխնելույզներ ունեցող ընդհանուր ծխատար խողովակով և որը, որպես հինգ տարվա համար հաշվարկված սահող միջին, տարեկան չի աշխատում 1500 աշխատանքային ժամից ավելի, ծծմբի դիօքսիդի արտանետումների թույլատրելի սահմանային նորման կարող է լինել նույնը, որը նախորդ երկու պարբերությամբ սահմանված է ամբողջ այրման կայանի ընդհանուր նոմինալ ջերմային հզորության հարաբերությամբ հաշվարկված սահմանաչափով: Նման դեպքերում այդ ծխնելույզներից յուրաքանչյուրի միջոցով հեռացվող արտանետումները դիտարկվում են առանձին-առանձին:

3. Գազատուրբիններից և գազով շահագործվող կայաններից բացի՝ գազային վառելիք օգտագործող այրման կայանների համար նախատեսված ծծմբի դիօքսիդի արտանետումների թույլատրելի սահմանային նորմաները (մգ/նխմ)

|   |     |
|---|-----|
| Ընդհանուր   | 35  |
| Հեղուկացված գազ   | 5   |
| Կոքսային վառարաններից արտազատվող ցածր կալորիականությամբ գազեր | 400 |
| Դոմնային վառարաններից արտազատվող ցածր կալորիականությամբ գազեր | 200 |

Նավթամշակման մնացորդների գազացումից առաջացած ցածր կալորիականությամբ գազերով շահագործվող այրման կայանների դեպքում, որոնց թույլտվություն է տրվել մինչև 2002 թվականի նոյեմբերի 27-ը, կամ որոնց տնտեսավարող սուբյեկտները ներկայացրել են թույլտվության համար լրացված դիմում՝ նախքան նշված նույն ժամանակահատվածը, և որոնք գործարկվել են 2003 թվականի նոյեմբերի 27-ից ոչ ուշ, ծծմբի դիօքսիդի արտանետումների թույլատրելի սահմանային նորման կազմում է 800 մգ/նխմ:

4. Գազատուրբիններից և գազով շահագործվող կայաններից բացի՝ պինդ կամ հեղուկ վառելիք օգտագործող այրման կայանների համար նախատեսված ազոտի օքսիդի արտանետումների թույլատրելի սահմանային նորմաները (մգ/նխմ)

| Ընդհանուր նոմինալ ջերմային հզորություն (ՄՎտ) | Ածուխ, լիզնիտ և այլ պինդ վառելիք            | Կենսազանգված և տորֆ | Հեղուկ վառելիք |
|--|---|---------------------|----------------|
| 50-100                                       | 300<br>450 մանրացված լիզնիտի այրման դեպքում | 300                 | 450            |
| 100-300                                      | 200   | 250                 | 200 [1]        |
| > 300  | 200   | 200                 | 150 [1]        |

### Ծանոթագրություն

[1] Քիմիական կայանքներում առկա այրման կայանների դեպքում, որոնք սեփական սպառման համար որպես ոչ առևտրային վառելիք օգտագործում են արտադրական հեղուկ մնացորդներ, որոնց ընդհանուր նոմինալ ջերմային հզորությունը չի գերազանցում 500 ՄՎտ-ն և որոնց թույլտվություն է տրվել մինչև 2002 թվականի նոյեմբերի 27-ը, կամ որոնց տնտեսավարող սուբյեկտները ներկայացրել են թույլտվության համար լրացված դիմում՝ նախքան նշված նույն ժամանակահատվածը, և որոնք գործարկվել են 2003 թվականի նոյեմբերի 27-ից ոչ ուշ, ազոտի օքսիդի արտանետումների թույլատրելի սահմանային նորման կազմում է 450 մգ/նխմ:

Պինդ կամ հեղուկ վառելիքով շահագործվող այրման կայանների դեպքում, որոնց թույլտվություն է տրվել մինչև 2002 թվականի նոյեմբերի 27-ը, որոնց տնտեսավարող սուբյեկտները ներկայացրել են թույլտվության համար լրացված դիմում՝ նախքան նշված նույն ժամանակահատվածը, և որոնք գործարկվել են 2003 թվականի նոյեմբերի 27-ից ոչ ուշ և որոնք, որպես հինգ տարվա համար հաշվարկված սահող միջին, տարեկան չեն աշխատում 1500 աշխատանքային ժամից ավելի, ազոտի օքսիդի արտանետումների թույլատրելի սահմանային նորման կազմում է 450 մգ/նխմ:

Հեղուկ վառելիքով շահագործվող և 500 ՄՎտ-ն գերազանցող ընդհանուր նոմինալ ջերմային հզորությամբ այրման կայանների դեպքում, որոնց թույլտվություն է տրվել մինչև 1987 թվականի հուլիսի 1-ը և որոնք, որպես հինգ տարվա համար հաշվարկված սահող միջին, տարեկան չեն աշխատում 1500 աշխատանքային ժամից ավելի, ազոտի օքսիդի արտանետումների թույլատրելի սահմանային նորման կազմում է 450 մգ/նխմ:

Հեղուկ վառելիքով շահագործվող և 500 ՄՎտ-ն գերազանցող ընդհանուր նոմինալ ջերմային հզորությամբ այրման կայանների դեպքում, որոնց թույլտվություն է տրվել մինչև 2002 թվականի նոյեմբերի 27-ը, կամ որոնց տնտեսավարող սուբյեկտները ներկայացրել են թույլտվության համար լրացված դիմում՝ նախքան նշված նույն ժամանակահատվածը, և որոնք գործարկվել են

2003 թվականի նոյեմբերի 27-ից ոչ ուշ և որոնք, որպես հինգ տարվա համար հաշվարկված սահող միջին, տարեկան չեն աշխատում 1500 աշխատանքային ժամից ավելի, ազոտի օքսիդի արտանետումների թույլատրելի սահմանային նորման կազմում է 400 մգ/նխմ:

Այրման կայանի այն մասի դեպքում, որում դրանից արտանետվող գազերը հեռացվում են մեկ կամ մի քանի ծխնելույզներ ունեցող ընդհանուր ծխատար խողովակով և որը, որպես հինգ տարվա համար հաշվարկված սահող միջին, տարեկան չի աշխատում 1500 աշխատանքային ժամից ավելի, ծծմբի դիօքսիդի արտանետումների թույլատրելի սահմանային նորման կարող է լինել նույնը, որը նախորդ երեք պարբերությամբ սահմանված է ամբողջ այրման կայանի ընդհանուր նոմինալ ջերմային հզորության հարաբերությամբ հաշվարկված սահմանաչափով: Նման դեպքերում այդ ծխնելույզներից յուրաքանչյուրի միջոցով հեռացվող արտանետումները դիտարկվում են առանձին-առանձին:

5. Խառնուրդներ և միջին թորամասեր օգտագործող գազատուրբինների դեպքում (այդ թվում՝ համակցված ցիկլով գազատուրբիններ (<ՅԳ)) ազոտի օքսիդի արտանետումների թույլատրելի սահմանային նորման կազմում է 90 մգ/նխմ, իսկ CO-ի (շմուլ գազի) արտանետումների թույլատրելի սահմանային նորման՝ 100 մգ/նխմ

Սույն կետով սահմանված սահմանային նորմաները չեն կիրառվում արտակարգ դեպքերի համար օգտագործվող այն գազատուրբինների նկատմամբ, որոնք տարեկան 500 ժամից քիչ են շահագործվում: Նման կայանների տնտեսավարող սուբյեկտները գրանցում են օգտագործված աշխատանքային ժամերը:

6. Գազով շահագործվող այրման կայանների համար սահմանված ազոտի օքսիդի և CO-ի արտանետումների սահմանային թույլատրելի նորմաները (մգ/նխմ)

|   | Ազոտի օքսիդ | CO  |
|---|-------------|-----|
| Բնական գազով շահագործվող այրման կայանները՝ բացառությամբ գազատուրբինների և գազով շահագործվող կայանների   | 100         | 100 |
| Նավթամշակման մնացորդների, կոքսի վառարանների գազի, դոմնային գազերի գազացումից առաջացած՝ ցածր կալորիականությամբ գազերով շահագործվող այրման կայաններ՝ բացառությամբ գազատուրբինների և գազով շահագործվող կայանների | 200 [4]     | –   |
| Այլ գազերով շահագործվող այրման կայաններ՝ բացառությամբ գազատուրբիններից և գազով շահագործվող կայաններից   | 200 [4]     | –   |
| Որպես վառելիք՝ բնական գազ օգտագործող գազատուրբիններ (այդ թվում՝ համակցված ցիկլով  | 50[2] [3]   | 100 |

|   |     |     |
|---|-----|-----|
| գազատուրբիններ (<ՑԳ))   |     |     |
| Որպես վառելիք՝ այլ գազեր օգտագործող գազատուրբիններ (այդ թվում՝ համակցված ցիկլով գազատուրբիններ (<ՑԳ)) | 120 | –   |
| Գազով շահագործվող կայաններ  | 100 | 100 |

### Ծանոթագրություններ

[1] Բնական գազը բնական պաշարներից արդյունահանվող մեթանն է, որի մեջ իներտ գազերի և այլ խառնուրդների ընդհանուր բաղադրությունը չի գերազանցում 20 տոկոսը (ծավալային առումով):

[2] 75 մգ/նխմ՝ հետևյալ դեպքերում, երբ գազատուրբինի արտադրողականությունը որոշվում է բազային բեռի ISO պայմաններով.

i) ջերմաէլեկտրական համակցված համակարգերով գազատուրբիններ, որոնց ընդհանուր արտադրողականությունը 75 տոկոսից ավելի է,

ii) համակցված ցիկլով կայաններում օգտագործվող գազատուրբիններ, որոնց գումարային էլեկտրական ՕԳԳ-ի տարեկան միջինը գերազանցում է 55 տոկոսը

iii) գազատուրբինների մեխանիկական շարժաբեռների համար:

[3] (2) կետի տակ նշված կատեգորիաներից որևէ մեկին չհամապատասխանող, բայց բազային բեռի ISO պայմաններով որոշված՝ ավելի քան 35 տոկոս ՕԳԳ ունեցող մեկ ցիկլով գազատուրբինների դեպքում սահմանային թույլատրելի նորման կազմում է  $50 \cdot \eta / 35$ , որտեղ « $\eta$ »-ն գազատուրբինի ՕԳԳ-ն է՝ տոկոսային արտահայտությամբ (և բազային բեռի ISO պայմաններով):

[4] 300 մգ/նխմ 500 ՄՎտ-ն չգերազանցող ընդհանուր նոմինալ ջերմային հզորությամբ այրման կայանների դեպքում, որոնց թույլտվություն է տրվել մինչև 2002 թվականի նոյեմբերի 27-ը կամ որոնց տնտեսավարող սուբյեկտները ներկայացրել են թույլտվության համար լրացված դիմում՝ նախքան նշված նույն ժամանակահատվածը, և որոնք գործարկվել են 2003 թվականի նոյեմբերի 27-ից ոչ ուշ:

Գազատուրբինների (այդ թվում՝ համակցված ցիկլով գազատուրբինների (<ՑԳ)) դեպքում սույն կետում ընդգրկված աղյուսակով սահմանված ազոտի օքսիդի և CO-ի արտանետումների սահմանային թույլատրելի նորմաները կիրառվում են միայն 70 տոկոսից ավելի բեռնվածության դեպքում:

Գազատուրբինների (այդ թվում՝ համակցված ցիկլով գազատուրբինների (<ՑԳ)) դեպքում, որոնց թույլտվություն է տրվել մինչև 2002 թվականի նոյեմբերի 27-ը, որոնց տնտեսավարող սուբյեկտները թույլտվության համար լրացված դիմում են ներկայացրել՝ նախքան նշված նույն ժամանակահատվածը, և որոնք գործարկվել են 2003 թվականի նոյեմբերի 27-ից ոչ ուշ և որոնք, որպես հինգ տարվա համար հաշվարկված սահող միջին, տարեկան չեն աշխատում 1500 աշխատանքային ժամից ավելի, բնական գազ օգտագործելիս ազոտի օքսիդի արտանետումների թույլատրելի սահմանային նորման կազմում է 150 մգ/նխմ, իսկ այլ գազեր կամ հեղուկ վառելիք օգտագործելիս՝ 200 մգ/նխմ:

Այրման կայանի այն մասի դեպքում, որում դրանից արտանետվող գազերը հեռացվում են մեկ կամ մի քանի ծխնելույզներ ունեցող ընդհանուր ծխատար խողովակով և որը, որպես հինգ տարվա համար հաշվարկված սահող միջին,

տարեկան չի աշխատում 1500 աշխատանքային ժամից ավելի, ծծմբի դիօքսիդի արտանետումների թույլատրելի սահմանային նորմը կարող է լինել նույնը, որը նախորդ պարբերությամբ սահմանված է ամբողջ այրման կայանի ընդհանուր նոմինալ ջերմային հզորության հարաբերությամբ հաշվարկված սահմանաչափով: Նման դեպքերում այդ ծխնելույզներից յուրաքանչյուրի միջոցով հեռացվող արտանետումները դիտարկվում են առանձին-առանձին:

Սույն կետով սահմանված սահմանային նորմաները չեն կիրառվում արտակարգ դեպքերի համար օգտագործվող այն գազատուրբինների և գազով շահագործվող կայանների նկատմամբ, որոնք տարեկան 500 ժամից քիչ են շահագործվում: Նման կայանների տնտեսավարող սուբյեկտները գրանցում են օգտագործված աշխատանքային ժամերը:

7. Գազատուրբիններից և գազով շահագործվող կայաններից բացի՝ պինդ կամ հեղուկ վառելիքով շահագործվող այրման կայանների համար նախատեսված փոշու արտանետումների թույլատրելի սահմանային նորմաները (մգ/նխմ)

| Ընդհանուր նոմինալ ջերմային հզորություն (ՄՎտ) | Ածուխ, լիզնիտ և այլ պինդ վառելիք | Կենսազանգված և տորֆ | Հեղուկ վառելիք |
|--|----------------------------------|---------------------|----------------|
| 50-100                                       | 30                               | 30                  | 30             |
| 100-300                                      | 25                               | 20                  | 25             |
| > 300  | 20                               | 20                  | 20             |

**Ծանոթագրություն**

<sup>1</sup> Արտանետումների սահմանային թույլատրելի նորման կազմում է 50 մգ/նխմ՝ սեփական օգտագործման համար նախատեսված ստացված թորման և կերպափոխման մնացորդներն օգտագործող այրման կայանների դեպքում, որոնց թույլտվություն է տրվել մինչև 2002 թվականի նոյեմբերի 27-ը կամ որոնց տնտեսավարող սուբյեկտները ներկայացրել են թույլտվության համար լրացված դիմում՝ նախքան նշված նույն ժամանակահատվածը, և որոնք գործարկվել են 2003 թվականի նոյեմբերի 27-ից ոչ ուշ:

8. Գազատուրբիններից և գազով շահագործվող կայաններից բացի՝ գազային վառելիքով շահագործվող այրման կայանների համար նախատեսված փոշու արտանետումների թույլատրելի սահմանային նորմաները (մգ/նխմ)

|   |    |
|---|----|
| Ընդհանուր   | 5  |
| Դոմնային գազեր  | 10 |
| Սև մետալուրգիայից ստացվող գազեր, որոնք կարող են օգտագործվել այլ նպատակներով | 30 |

ՄԱՍ 2

**30(3) հողվածում նշված այրման կայանների համար նախատեսված արտանետումների թույլատրելի սահմանային նորմաները**

1. Արտանետումների թույլատրելի բոլոր սահմանային նորմաները պետք է հաշվարկվեն 293 կելվին ջերմաստիճանի ու 101.3 կիլոպասկալ ճնշման ներքո և արտանետվող գազերում ջրի գոլորշիների բաղադրությունը ստուգելուց հետո ու ստանդարտացված O2 պարունակությունը՝ 6 տոկոս՝ պինդ վառելիքի համար, 3 տոկոս՝ այրման կայանների համար՝ բացի հեղուկ և գազային վառելիք օգտագործող գազատուրբիններից ու գազով շահագործվող կայաններից, և 15 տոկոս՝ գազատուրբինների ու գազով շահագործվող կայանների համար:

Լրացուցիչ վառելիք օգտագործող՝ համակցված ցիկլով գազատուրբինների դեպքում ստանդարտացված O2 պարունակությունը կարող է սահմանվել իրավասու մարմնի կողմից՝ հաշվի առնելով տվյալ կառուցվածքի տեխնիկական բնութագրերը:

2. Գազատուրբիններից և գազով շահագործվող կայաններից բացի՝ պինդ կամ հեղուկ վառելիք օգտագործող այրման կայանների համար նախատեսված ծծմբի դիօքսիդի արտանետումների թույլատրելի սահմանային նորմերը (մգ/նիսմ)

| Ընդհանուր նոմինալ ջերմային հզորություն (ՄՎտ) | Ածուխ, լիզնիտ և այլ պինդ վառելիք  | Կենսազանգված | Տորֆ   | Հեղուկ վառելիք |
|--|---|--------------|--|----------------|
| 50-100                                       | 400   | 200          | 300  | 350            |
| 100-300                                      | 200   | 200          | 300<br>250<br>պսեվդոհեղուկացված շերտի այրման դեպքում | 200            |
| > 300  | 150<br>200<br>շրջանառվող կամ ճնշման տակ գտնվող պսեվդոհեղուկացված շերտի այրման դեպքում | 150          | 150<br>200<br>պսեվդոհեղուկացված շերտի այրման դեպքում | 150            |

3. Գազատուրբիններից և գազով շահագործվող կայաններից բացի՝ գազային վառելիք օգտագործող այրման կայանների համար նախատեսված ծծմբի դիօքսիդի արտանետումների թույլատրելի սահմանային նորմերը (մգ/նխմ)

|   |     |
|---|-----|
| Ընդհանուր   | 35  |
| Հեղուկացված գազ   | 5   |
| Կոքսային վառարաններից առաջացող ցածր կալորիականությամբ գազեր | 400 |
| Դոմնային վառարաններից առաջացող ցածր կալորիականությամբ գազեր | 200 |

4. Գազատուրբիններից և գազով շահագործվող կայաններից բացի՝ պինդ կամ հեղուկ վառելիք օգտագործող այրման կայանների համար նախատեսված ազոտի օքսիդի արտանետումների թույլատրելի սահմանային նորմերը (մգ/նխմ)

| Ընդհանուր նոմինալ ջերմային հզորություն (ՄՎտ) | Ածուխ, լիգնիտ և այլ պինդ վառելիք            | Կենսազանգված և տորֆ | Հեղուկ վառելիք |
|--|---|---------------------|----------------|
| 50-100                                       | 300<br>400 մանրացված լիգնիտի այրման դեպքում | 250                 | 300            |
| 100-300                                      | 200   | 200                 | 150            |
| >300   | 150<br>200 մանրացված լիգնիտի այրման դեպքում | 150                 | 100            |

5. Խառնուրդներ և միջին թորամասեր օգտագործող գազատուրբինների դեպքում (այդ թվում՝ համակցված ցիկլով գազատուրբիններ (այդ թվում՝ համակցված ցիկլով գազատուրբիններ (<ՑԳ)) ազոտի օքսիդի արտանետումների թույլատրելի



սահմանային նորմը կազմում է 50 մգ/նխմ, իսկ CO արտանետումների թույլատրելի սահմանային նորմը՝ 100 մգ/նխմ

Սույն կետով սահմանված սահմանային նորմաները չեն կիրառվում արտակարգ դեպքերի համար օգտագործվող այն գազատուրբինների նկատմամբ, որոնք տարեկան 500 ժամից ավելի քիչ են շահագործվում: Նման կայանների տնտեսավարող սուբյեկտները գրանցում են օգտագործված աշխատանքային ժամերը:

6. Գազով շահագործվող այրման կայանների համար սահմանված ազոտի օքսիդի և CO-ի արտանետումների սահմանային թույլատրելի նորմերը (մգ/նխմ)

|   | Ազոտի օքսիդ | CO  |
|---|-------------|-----|
| Գազատուրբիններից և գազով շահագործվող կայաններից բացի՝ այլ այրման կայաններ | 100         | 100 |
| Գազատուրբիններ (այդ թվում՝ համակցված ցիկլով գազատուրբիններ (ՀՅԳ))         | 50(1)       | 100 |
| Գազով շահագործվող կայաններ  | 75          | 100 |

**Ծանոթագրություն**

Բազային բեռի ISO պայմաններով որոշված՝ ավելի քան 35 տոկոս 0ԳԳ ունեցող մեկ ցիկլով գազատուրբինների դեպքում սահմանային թույլատրելի նորման կազմում է 50\*η/35, որտեղ «η»-ն գազատուրբինի 0ԳԳ-ն է՝ տոկոսային արտահայտությամբ (և բազային բեռի ISO պայմաններով):

Գազատուրբինների (այդ թվում՝ համակցված ցիկլով գազատուրբինների (ՀՅԳ)) դեպքում սույն կետով սահմանված ազոտի օքսիդի և CO-ի արտանետումների սահմանային թույլատրելի նորմաները կիրառվում են միայն 70 տոկոսից ավելի բեռնվածության դեպքում:

Սույն կետով սահմանված սահմանային նորմաները չեն կիրառվում արտակարգ դեպքերի համար օգտագործվող այն գազատուրբինների և գազով շահագործվող կայանների նկատմամբ, որոնք տարեկան 500 ժամից քիչ են շահագործվում: Նման կայանների տնտեսավարող սուբյեկտները գրանցում են օգտագործված աշխատանքային ժամերը:

7. Գազատուրբիններից և գազով շահագործվող կայաններից բացի՝ պինդ կամ հեղուկ վառելիքով շահագործվող այրման կայանների համար նախատեսված փոշու արտանետումների թույլատրելի սահմանային նորմաները (մգ/նխմ)

|  |        |  |
|--|--------|--|
| Ընդհանուր նոմինալ ջերմային հզորություն (ՄՎտ) |        |  |
|  | 50-300 | 20                                     |
|  | >300   | 10<br>20 կենսազանգվածի և տորֆի դեպքում |

8. Գազատուրբիններից և գազով շահագործվող կայաններից բացի՝ գազային վառելիք օգտագործող այրման կայանների համար նախատեսված փոշու արտանետումների թույլատրելի սահմանային նորմաները (մգ/նխմ)

|  |    |
|--|----|
| Ընդհանուր  | 5  |
| Դոմնային գազեր   | 10 |
| Սև մետալուրգիայից ստացվող գազերի, որոնք կարող են օգտագործվել այլ նպատակներով | 30 |

### ՄԱՍ 3

#### **Արտանետումների դիպանցում**

1. 100 ՄՎտ կամ ավելի նոմինալ ջերմային հզորությամբ յուրաքանչյուր այրման կայանից արտանետվող գազերում առկա ծծմբի դիօքսիդի, ազոտի օքսիդների և փոշու կոնցենտրացիաները պետք է ենթարկվեն մշտական չափումների:

100 ՄՎտ կամ ավելի նոմինալ ջերմային հզորությամբ յուրաքանչյուր այրման կայանից արտանետվող գազերում առկա CO-ի կոնցենտրացիան պետք է ենթարկվի մշտական չափումների:

2. Իրավասու մարմինը կարող է չպահանջել անցկացնել 1-ին կետում նշված մշտական չափումները հետևյալ դեպքերում.

ա) 10000 շահագործման ժամից պակաս տևողություն ունեցող այրման կայանների դեպքում,

բ) բնական գազով շահագործվող այրման կայաններից արտանետվող ծծմբի դիօքսիդի և փոշու դեպքում,

գ) ծծմբի հայտնի պարունակությամբ նավթ վառող այրման կայաններից արտանետվող ծծմբի դիօքսիդի դեպքում, եթե չկա արտանետվող գազի ծծմբազերծման սարքավորում,

դ) կենսազանգված վառող այրման կայաններից արտանետվող ծծմբի դիօքսիդի դեպքում, եթե տնտեսավարող սուբյեկտը/օպերատորը կարող է ապացուցել, որ ծծմբի դիօքսիդի արտանետումները ոչ մի պարագայում չեն կարող արտանետումների թույլատրելի սահմանային նորմայից բարձր լինել:

3. Եթե մշտական չափումներ չեն պահանջվում, ծծմբի դիօքսիդի, ազոտի օքսիդի, փոշու և, գազով շահագործվող կայանների դեպքում, CO-ի չափումները պահանջվում են առնվազն յուրաքանչյուր 6 ամիսը մեկ:

4. Ածուխ կամ լիգնիտ վառող այրման կայանների դեպքում ընդհանուր սնդիկի արտանետումները չափվում են առնվազն տարին մեկ անգամ:

5. Որպես այլընտրանքային տարբերակ՝ 3-րդ կետում նշված ծծմբի դիօքսիդի և ազոտի օքսիդի չափումներին՝ կարող են կիրառվել իրավասու մարմնի կողմից ստուգված և հաստատված այլ ընթացակարգեր՝ ծծմբի դիօքսիդի և ազոտի օքսիդի արտանետումների նորմաները որոշելու համար: Նման ընթացակարգերը պետք է կիրառվեն ՍԵԿ ստանդարտների համաձայն կամ, եթե ՍԵԿ ստանդարտներն առկա չեն, ՍՄԿ ստանդարտների, ազգային կամ այլ միջազգային ստանդարտների համաձայն, որոնք ապահովում են համարժեք գիտական արժեք ներկայացնող տվյալների տրամադրումը:

6. Իրավասու մարմինը պետք է տեղեկացվի օգտագործվող վառելիքի կամ կայանի շահագործման ռեժիմի էական փոփոխությունների մասին: Իրավասու մարմինը պետք է որոշի, թե արդյոք սահմանված դիտանցման՝ 1-4-րդ կետերով սահմանված պահանջները դեռ համարժեք են, թե պահանջվում է դրանց համապատասխանեցում:

7. 1-ին կետի համաձայն իրականացված մշտական չափումներում պետք է ներառվեն արտանետվող գազերում թթվածնի բաղադրության, ջերմաստիճանի, ճնշման և ջրի գոլորշիների բաղադրության չափումները: Արտանետվող գազերում ջրի գոլորշիների բաղադրության մշտական չափումները պարտադիր չեն՝ պայմանով, որ նմուշառված արտանետվող գազը չորացվի՝ նախքան արտանետումների լաբորատոր հետազոտությունը:

8. Համապատասխան աղտոտող նյութերի նմուշառումը և լաբորատոր հետազոտությունն ու տեխնոլոգիացման ցուցանիշների չափումները, ինչպես նաև չափման ավտոմատացված համակարգերի որակի ապահովումն ու այդ համակարգերի չափաբերման էտալոնային չափման մեթոդները պետք է անցկացվեն ՍԵԿ ստանդարտներին համապատասխան: Եթե ՍԵԿ ստանդարտներն առկա չեն, ապա կիրառվում են ISO ստանդարտները, ազգային կամ միջազգային ստանդարտները, որոնցով պետք է ապահովվի գիտականորեն համարժեք կերպով ստացված տվյալների տրամադրումը:

Չափման ավտոմատացված համակարգերը պետք է ենթակա լինեն ստուգման առնվազն տարին մեկ անգամ՝ էտալոնային մեթոդներով անցկացվող զուգահեռ չափումների միջոցով:

Տնտեսավարող սուբյեկտը/օպերատորը պետք է տեղեկացնի իրավասու մարմինն չափման ավտոմատացված համակարգերի ստուգման արդյունքների մասին:

9. Արտանետումների սահմանային նորմաների համաձայն՝ մեկ չափված արդյունքի 95% վստահության միջակայքի արժեքը չպետք է գերազանցի արտանետումների սահմանային նորմաների հետևյալ տոկոսները.

|                |     |
|----------------|-----|
| Շմոլ գազ       | 10% |
| Ծծմբի երկօքսիդ | 20% |
| Ազոտի օքսիդներ | 20% |
| Փոշի           | 30% |

10. Ժամային և օրական կտրվածքով վալիդացված միջին նորմաները պետք է որոշվեն չափված թույլատրելի ժամային և օրական կտրվածքով մեծություններից՝ 9-րդ կետում նշված վստահության միջակայքի արժեքը հանելուց հետո:

Եթե օրվա ընթացքում ավելի քան երեք միջին-ժամային տվյալները իրականությանը չեն համապատասխանում չափման ավտոմատացված համակարգի խափանման կամ ընթացիկ վերանորոգման պատճառով, ապա այդ օրվա տվյալները համարվում են անվավեր: Եթե նման տեխնիկական պատճառներով տարվա ընթացքում ավելի քան 10 օր համարվում են անվավեր, իրավասու մարմինը պետք է տնտեսավարող սուբյեկտից պահանջի միջոցներ ձեռնարկել՝ չափման ավտոմատացված համակարգի հուսալիությունը բարելավելու համար:

11. Այն կայանների դեպքում, որոնք պետք է համապատասխանեն 31-րդ հոդվածում նշված ծծմբազերծման գործակցին, այրման կայանում վառվող/օգտագործվող վառելիքում ծծմբի պարունակությունը նույնպես պետք է պարբերաբար դիտանցման ենթարկվի: Իրավասու մարմինները պետք է տեղեկացվեն օգտագործվող վառելիքի էական փոփոխությունների մասին:

#### ՄԱՍ 4

### **Արդանետումների սահմանային նորմաների հետ համապատասխանության գնահատումը**

1. Մշտական չափումների դեպքում 1-ին և 2-րդ մասերով սահմանված արտանետումների թույլատրելի սահմանային նորմաների հետ

համապատասխանությունը համարվում է ապահովված, եթե օրացուցային տարում շահագործման ժամերի կտրվածքով գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ բավարարվել են հետևյալ պայմանները.

ա) ամսական կտրվածքով վալիդացված ոչ մի միջին արժեք չգերազանցի 1-ին և 2-րդ մասերով սահմանված արտանետումների թույլատրելի սահմանային նորմաները,

բ) օրական կտրվածքով վալիդացված ոչ մի միջին արժեք չգերազանցի 1-ին և 2-րդ մասերով սահմանված արտանետումների թույլատրելի սահմանային նորմաների 110 տոկոսը,

գ) ածխով շահագործվող և 15 ՄՎտ-ից ցածր նոմինալ ջերմային հզորությամբ այրման կայանների դեպքում օրական կտրվածքով վալիդացված ոչ մի միջին արժեք չգերազանցի 1-ին և 2-րդ մասերով սահմանված արտանետումների թույլատրելի սահմանային նորմաների 150 տոկոսը,

դ) ժամային կտրվածքով վալիդացված բոլոր միջին արժեքների 95 տոկոսը տարվա ընթացքում չգերազանցեն 1-ին և 2-րդ մասերով սահմանված արտանետումների թույլատրելի սահմանային նորմաների 200 տոկոսը:

Վալիդացված միջին արժեքները սահմանվում են 3-րդ մասի 10-րդ կետով սահմանված կարգով:

Արտանետումների միջին նորմաների հաշվարկման նպատակով 30(5) և (6) ու 37-րդ հոդվածներում նշված, ինչպես նաև գործարկման և պարապուրդի ժամանակահատվածների ընթացքում չափված նորմաները/արժեքները հաշվի չեն առնվում:

2. Երբ գնահատման համար մշտական չափումներ չեն պահանջվում, 1-ին և 2-րդ մասերով սահմանված արտանետումների թույլատրելի սահմանային նորմաների հետ համապատասխանությունը համարվում է ապահովված, եթե չափումների յուրաքանչյուր սերիայի կամ իրավասու մարմինների կողմից սահմանված նորմերի համաձայն մշակված և որոշված այլ ընթացակարգերի արդյունքները չեն գերազանցում արտանետումների թույլատրելի սահմանային նորմաները:

#### ՄԱՍ 5

### **Ծծմբագերծման նվազագույն գործակիցը**

1. 30(2) հոդվածում նշված այրման կայանների համար նախատեսված ծծմբագերծման նվազագույն գործակիցը

|  |  |              |
|--|--|--------------|
| Ընդհանուր նոմինալ ջերմային հզորություն (ՄՎտ) | Ծծմբագերծման նվազագույն գործակից   |              |
|  | Այն կայանների դեպքում, որոնց թույլտվություն է տրվել մինչև 2002 թվականի նոյեմբերի 27-ը, կամ | Այլ կայաններ |

|         |   |     |
|---------|---|-----|
|         | որոնց տնտեսավարող սուբյեկտները ներկայացրել են թույլտվության համար լրացված դիմում՝ նախքան նշված նույն ժամանակահատվածը, և որոնք գործարկվել են 2003 թվականի նոյեմբերի 27-ից ոչ ուշ |     |
| 50-100  | 80%   | 92% |
| 100-300 | 90%   | 92% |
| >300    | 96%(1)  | 96% |

**Ծանոթագրություն**

Այրվող թերթաքարերով շահագործվող այրման կայանների դեպքում ծծմբազերծման նվազագույն գործակիցը կազմում է 95 տոկոս:

2. 30(3) հոդվածում նշված այրման կայանների համար նախատեսված ծծմբազերծման նվազագույն գործակիցը

|  |                                  |
|--|----------------------------------|
| Ընդհանուր նոմինալ ջերմային հզորություն (ՄՎտ) | Ծծմբազերծման նվազագույն գործակից |
| 50-100                                       | 93%                              |
| 100-300                                      | 93%                              |
| >300   | 97%                              |

**ՄԱՍ 6**

***Ծծմբազերծման գործակիցի հետ համապատասխանությունը***

Սույն հավելվածի 5-րդ մասով սահմանված ծծմբազերծման նվազագույն գործակիցները պետք է կիրառվեն որպես ամսական կտրվածքով միջին սահմանային նորմա/արժեք:

**ՄԱՍ 7**

***Զտման գործարանի ներսում գտնվող բազմավառելիքային այրման կայանների համար նախատեսված արտանետումների թույլատրելի սահմանային միջին նորմաները***

Զտման գործարանի ներսում գտնվող բազմավառելիքային այրման կայանների համար նախատեսված ծծմբի դիօքսիդի արտանետումների թույլատրելի սահմանային միջին նորմաները (մգ/նխմ)՝ բացառությամբ գազատուրբինների և

գազով շահագործվող կայանների, որոնք սեփական օգտագործման համար առանձին կամ այլ վառելիքների հետ միասին օգտագործում են նավթամշակումից ստացված թորման և կերպափոխման մնացորդները.

ա) այն կայանների դեպքում, որոնց թույլտվություն է տրվել մինչև 2002 թվականի նոյեմբերի 27-ը կամ որոնց տնտեսավարող սուբյեկտները ներկայացրել են թույլտվության համար լրացված դիմում՝ նախքան նշված նույն ժամանակահատվածը, և որոնք գործարկվել են 2003 թվականի նոյեմբերի 27-ից ոչ ուշ՝ 1000 մգ/նխմ.

բ) այլ այրման կայանների համար՝ 600 մգ/նխմ.

Արտանետումների թույլատրելի այդ սահմանային նորմաները պետք է հաշվարկվեն 293 կելվին ջերմաստիճանի ու 101.3 կիլոպասկալ ճնշման ներքո և արտանետվող գազերում ջրի գոլորշիների բաղադրությունն ստուգելուց հետո ու ստանդարտացված O<sub>2</sub> պարունակությամբ՝ 6 տոկոս պինդ վառելիքի համար և 3 տոկոս՝ հեղուկ ու գազային վառելիքի համար:

-----

## ՀԱՎԵԼՎԱԾ VI

### Թափոնների այրման սարքերին և թափոնների այրման գործարաններին վերաբերող տեխնիկական դրույթներ

#### ՄԱՍ 1

##### Սահմանումները

Սույն հավելվածի իմաստով կիրառվում են հետևյալ սահմանումները.

ա) «թափոնների այրման գոյություն ունեցող սարք» նշանակում է թափոնների այրման հետևյալ սարքերից որևէ մեկը.

i) որը գործարկվել է և թույլտվություն ստացել մինչև 2002 թվականի դեկտեմբերի 28-ը՝ համաձայն Միության կիրառելի իրավունքի,

ii) որը լիցենզավորվել է կամ գրանցվել՝ թափոնների այրման համար և որին թույլտվություն է տրվել մինչև 2002 թվականի դեկտեմբերի 28-ը՝ համաձայն Միության կիրառելի իրավունքի՝ պայմանով, որ կայանը/սարքը գործարկվել է 2003 թվականի դեկտեմբերի 28-ից ոչ ուշ,

iii) որի համար, ըստ իրավասու մարմնի, նման թույլտվության ստացումը պարտադիր է մինչև 2002 թվականի դեկտեմբերի 28-ը՝ պայմանով, որ սարքի շահագործումը կմեկնարկվի/կգործարկվի 2004 թվականի դեկտեմբերի 28-ից ոչ ուշ.

բ) «թափոնների այրման նոր սարք» նշանակում է թափոնների այրման ցանկացած սարք, որը չի կարգավորվում (ա) կետով:

#### ՄԱՍ 2

##### Համարժեքության գործոններ՝ դիբենզոդիոքսինի և դիբենզոֆուրանի համար

Դիոքսինի և ֆուրանի կոնցենտրացիան որոշելու համար՝ մինչև գումարելը, հետևյալ դիբենզոդիոքսինի և դիբենզոֆուրանի զանգվածի կոնցենտրացիաները բազմապատկվում են հետևյալ համարժեքության գործոններով.

|  | Թունավոր նյութերի համարժեքության գործոններ |
|--|--|
| 2,3,7,8 — Քառաքլորադիբենզոդիոքսին (TCDD)     | 1  |
| 1,2,3,7,8 — Պենտաքլորադիբենզոդիոքսին (PeCDD) | 0.5  |



|   |       |
|---|-------|
| 1,2,3,4,7,8 —<br>Հեքսաքլորադիբենզոդիօքսին(HxCDD)    | 0.1   |
| 1,2,3,6,7,8 —<br>Հեքսաքլորադիբենզոդիօքսին(HxCDD)    | 0.1   |
| 1,2,3,7,8,9 —<br>Հեքսաքլորադիբենզոդիօքսին(HxCDD)    | 0.1   |
| 1,2,3,4,6,7,8 — Հեպտաքլորադիբենզոդիօքսին<br>(HpCDD) | 0.01  |
| Օկտաքլորադիբենզոդիօքսին(OCDD)                       | 0.001 |
| 2,3,7,8 — Քառաքլորադիբենզոֆուրան (TCDF)             | 0.1   |
| 2,3,4,7,8 — Պենտաքլորադիբենզոֆուրան<br>(PeCDF)      | 0.5   |
| 1,2,3,7,8 — Պենտաքլորադիբենզոֆուրան (PeCDF)         | 0.05  |
| 1,2,3,4,7,8 — Հեքսաքլորադիբենզոֆուրան<br>(HxCDF)    | 0.1   |
| 1,2,3,6,7,8 — Հեքսաքլորադիբենզոֆուրան<br>(HxCDF)    | 0.1   |
| 1,2,3,4,7,8 — Հեքսաքլորադիբենզոֆուրան               | 0.1   |
| 2,3,4,6,7,8 — Հեքսաքլորադիբենզոֆուրան<br>(HxCDF)    | 0.1   |
| 1,2,3,4,6,7,8 — Հեպտաքլորադիբենզոֆուրան<br>(HpCDF)  | 0.01  |
| 1,2,3,4,7,8,9 — Հեպտաքլորադիբենզոֆուրան<br>(HpCDF)  | 0.01  |
| Octachlorodibenzofuran (OCDF)                       | 0.001 |

### ՄԱՍ 3

#### **Դեպի մթնոլորտ արտանետումների թույլատրելի սահմանային նորմաները՝ թափոնների այրման սարքերի համար**

1. Արտանետումների թույլատրելի բոլոր սահմանային նորմաները պետք է հաշվարկվեն 293 կելվին ջերմաստիճանի և 101.3 կիլոպասկալ ճնշման տակ ու արտանետվող գազերում ջրի գոլորշիների բաղադրությունն ստուգելուց հետո:

Դրանց ստանդարտացվում են արտանետվող գազերում 11 տոկոս թթվածնի պարունակության պայմաններում նավթամթերքների թափոնների այրման դեպքում, ինչպես սահմանված է 2008/98/ԵՀ հրահանգի 3-րդ հոդվածի 3-րդ

կետով, երբ դրանք ստանդարտացվում են 3 տոկոս թթվածնի պարունակության պայմաններում և 6-րդ մասի 2.7 կետում նշված դեպքերում:

1.1. Օրական կտրվածքով արտանետումների թույլատրելի սահմանային միջին նորմաները հետևյալ աղտոտող նյութերի դեպքում (մգ/նխմ)

|   |     |
|---|-----|
| Փոշու ընդհանուր արտանետումներ   | 10  |
| Գազային և գոլորշիացող օրգանական նյութեր՝ արտահայտված ընդհանուր օրգանական ածխածնով   | 10  |
| Քլորաջրածին (HCl)   | 10  |
| Ֆտորաջրածին (HF)  | 1   |
| Ծծմբի երկօքսիդ (SO <sub>2</sub> )   | 50  |
| Ազոտի մոնօքսիդ (NO) և ազոտի երկօքսիդ (NO <sub>2</sub> )՝ որպես ազոտի երկօքսիդ՝ ժամում 6 տոննան գերազանցող արտադրողականությամբ՝ թափոնների այրման գոյություն ունեցող սարքերի կամ թափոնների այրման նոր սարքերի համար | 200 |
| Ազոտի մոնօքսիդ և ազոտի երկօքսիդ՝ որպես ազոտի երկօքսիդ՝ ժամում 6 կամ ավելի քիչ տոննա արտադրողականությամբ՝ թափոնների այրման գոյություն ունեցող սարքերի համար  | 400 |

1.2. Կեսժամյա կտրվածքով արտանետումների թույլատրելի սահմանային միջին նորմաները հետևյալ աղտոտող նյութերի համար (մգ/նխմ)

|   | (100 %) A | (97 %) B |
|---|-----------|----------|
| Փոշու ընդհանուր արտանետումներ   | 30        | 10       |
| Գազային և գոլորշիացող օրգանական նյութեր՝ արտահայտված ընդհանուր օրգանական ածխածնով   | 20        | 10       |
| Քլորաջրածին (HCl)   | 60        | 10       |
| Ֆտորաջրածին (HF)  | 4         | 2        |
| Ծծմբի երկօքսիդ (SO <sub>2</sub> )   | 200       | 50       |
| Ազոտի մոնօքսիդ և ազոտի երկօքսիդ՝ որպես ազոտի երկօքսիդ՝ ժամում 6 տոննան գերազանցող արտադրողականությամբ՝ թափոնների այրման գոյություն ունեցող սարքերի կամ թափոնների այրման նոր սարքերի համար | 400       | 200      |

1.3. Արտանետումների թույլատրելի սահմանային միջին նորմաները հետևյալ ծանր մետաղների համար՝ առնվազն 30 րոպե և առավելագույնը 8 ժամ տևողությամբ նմուշառման ժամանակահատվածի ընթացքում

|   |                 |
|---|-----------------|
| Կադմիում և դրա միացությունները՝ արտահայտված կադմիումով (Cd)     | Ընդհանուր. 0,05 |
| Թալիում և դրա միացությունները՝ արտահայտված թալիումով (Tl)       |                 |
| Սնդիկ և դրա միացությունները՝ արտահայտված սնդիկով (Hg)           | 0.05            |
| Ծարիր (անտիմոն) և դրա միացությունները՝ արտահայտված ծարիրով (Sb) | Ընդհանուր. 0,05 |
| Արսենիում և դրա միացությունները՝ արտահայտված արսենիումով (As)   |                 |
| Կապար և դրա միացությունները՝ արտահայտված կապարով (Pb)           |                 |
| Քրոմ և դրա միացությունները՝ արտահայտված քրոմով (Cr)             |                 |
| Կոբալտ և դրա միացությունները՝ արտահայտված կոբալտով (Co)         |                 |
| Պղինձ և դրա միացությունները՝ արտահայտված պղինձով (Cu)           |                 |
| Մանգան և դրա միացությունները՝ արտահայտված մանգանով (Mn)         |                 |
| Նիկել և դրա միացությունները՝ արտահայտված նիկելով (Ni)           |                 |
| Վանադիում և դրա միացությունները՝ արտահայտված վանադիումով (V)    |                 |

Նշված միջին նորմաները տարածվում են նաև համապատասխան ծանր մետաղների և դրանց միացությունների ֆազային կամ գոլորշիների տեսքով արտանետումների վրա:

1.4. Արտանետումների թույլատրելի սահմանային միջին նորման դիօքսինի և ֆուրանի համար առնվազն 6 րոպե և առավելագույնը 8 ժամ տևողությամբ նմուշառման ժամանակահատվածի ընթացքում: Արտանետումների թույլատրելի սահմանային նորման վերաբերում է 2-րդ մասի համաձայն հաշվարկված դիօքսինների և ֆուրանների ընդհանուր կոնցենտրացիային:

|                        |     |
|------------------------|-----|
| Դիօքսիններ և ֆուրաններ | 0,1 |
|------------------------|-----|

1.5. Արտանետվող գազերում շմոլ գազի արտանետումների թույլատրելի սահմանային նորմաները.

- ա) օրական կտրվածքով միջին նորմա՝ 50
- բ) կեսժամյա կտրվածքով միջին նորմա՝ 100
- գ) 10 րոպե կտրվածքով միջին նորմա՝ 150

Իրավասու մարմինը կարող է շեղումներ նախատեսել սույն կետով սահմանված արտանետումների թույլատրելի սահմանային նորմաներից պսևվրոհեղուկացված շերտային տեխնոլոգիա օգտագործող թափոնների այրման սարքերի համար, եթե շնոլ գազի արտանետումների թույլատրելի սահմանային նորման միջին ժամային կտրվածքով չի գերազանցում 100 մգ/նխմ-ն:

2. 46(6) և 47-րդ հոդվածներում նկարագրված հանգամանքներում կիրառելի արտանետումների սահմանային թույլատրելի նորմաները:

Թափոնների այրման սարքերից դեպի մթնոլորտ արտանետումներում փոշու ընդհանուր կոնցենտրացիան ոչ մի դեպքում չպետք է գերազանցի 150 մգ/նխմ-ն՝ միջին կեսժամյա կտրվածքով: Դեպի մթնոլորտ ընդհանուր օրգանական ածխածնի և շնոլ գազի՝ 1.2 և 1.5(բ) կետերով սահմանված արտանետումների սահմանային թույլատրելի նորմաների գերազանցումը չի թույլատրվում:

3. Անդամ պետությունները կարող են սահմանել սույն կետով նախատեսված բացառությունները կարգավորող կանոններ:

#### ՄԱՍ 4

#### **Վերականգնված թափոնների այրումից դեպի մթնոլորտ արտանետումների սահմանային թույլատրելի նորմաների որոշումը**

1. Հետևյալ բանաձևը (խառը կանոն) կիրառվում է, երբ կոնկրետ ընդհանուր արտանետումների սահմանային նորման (C) չի սահմանվել սույն կետում նշված աղյուսակով:

Յուրաքանչյուր աղտոտող նյութի համար արտանետումների սահմանային թույլատրելի նորման և թափոնների այրման հետևանքով արտանետվող գազերում առաջացած շնոլ գազը պետք է հաշվարկվեն հետևյալ կերպ.

$$V_{\text{waste}} \times C_{\text{waste}} + V_{\text{proc}} \times C_{\text{proc}} = C$$

Vթափոն. Թափոնների այրման հետևանքով առաջացող արտանետվող գազի ծավալը՝ որոշված միայն թույլտվության մեջ նշված ամենացածր ջերմատվությամբ և սույն Հրահանգով սահմանված պայմաններում ստանդարտացված թափոնների համար:

Եթե վտանգավոր թափոնների այրումից անջատվող ջերմությունը չի գերազանցում կայանի կողմից արտադրվող ջերմության 10 տոկոսը, Vթափոնը հաշվարկվում է այն թափոնների (պայմանական) քանակից, որոնց այրումից

անջատվող ջերմությունը հավասար է արտադրվող ջերմության 10 տոկոսին, եթե ընդհանուր անջատվող ջերմությունը ֆիքսված է:

Ըթափոն. 3–րդ մասով սահմանված թափոնների այրման սարքերից արտանետումների սահմանային թույլատրելի նորմաները

Vproc : Կայանում տեղի ունեցող գործընթացի, այդ թվում՝ կայանում սովորաբար օգտագործվող թույլատրված վառելիքների (բացի թափոններից) այրման հետևանքով առաջացող արտանետվող գազի ծավալը որոշվում է թթվածնի պարունակության հիման վրա, ըստ որի, ինչպես սահմանված է Միության կամ ազգային իրավունքով, արտանետումները պետք է ստանդարտացվեն: Նման կայանների մասով օրենսդրության բացակայության դեպքում պետք է օգտագործվի արտանետվող գազերում թթվածնի իրական պարունակությունը (առանց այն նոսրացնելու օդ ավելացնելով (որն անհրաժեշտ չէ տվյալ գործընթացի համար)):

Cproc : Ինչպես սահմանված է սույն մասով, կոնկրետ արդյունաբերական գործունեությունների համար նախատեսված արտանետումների սահմանային թույլատրելի նորմաները կամ, այդ նորմաների բացակայության դեպքում, այն կայանների արտանետումների սահմանային թույլատրելի նորմաները, որոնք համապատասխանում են սովորաբար թույլատրվող վառելիքներով շահագործվող (բացի թափոններից) կայանների մասով ազգային օրենքներին, կանոնակարգերին և վարչական ակտերին: Նշված չափումների բացակայության դեպքում կիրառվում են թույլտվության մեջ նշված արտանետումների սահմանային թույլատրելի նորմաները: Նշված թույլտվության նորմաների բացակայության դեպքում օգտագործվում են իրական կոնցենտրացիաները:

C Ինչպես սահմանված է սույն մասով, կոնկրետ արդյունաբերական գործունեությունների և աղտոտող նյութերի համար նախատեսված՝ թթվածնի պարունակության պայմաններում արտանետումների ընդհանուր սահմանային թույլատրելի նորմաները կամ, այդ նորմաների բացակայության դեպքում, սահմանային նորմաները փոխարինող արտանետումների ընդհանուր սահմանային թույլատրելի նորմաներ, ինչպես սահմանված է սույն Հրահանգի կոնկրետ հավելվածներով: Ստանդարտացման նպատակով թթվածնի պարունակությունը թթվածնի ընդհանուր պարունակությամբ փոխարինումը հաշվարկվում է թթվածնի պարունակության հիման վրա՝ հաշվի չառնելով մասնակի ծավալները:

Արտանետումների թույլատրելի բոլոր սահմանային նորմաները պետք է հաշվարկվեն 293 կելվին ջերմաստիճանի և 101.3 կիլոպասկալ ճնշման ներքո ու արտանետվող գազերում ջրի գոլորշիների բաղադրությունն ստուգելուց հետո

Անդամ պետությունները կարող են սահմանել սույն կետով նախատեսված բացառությունները կարգավորող կանոններ:

2. Հատուկ դրույթներ՝ կլինկերի թափոնների վերականգնման համար

2.1. 2.2 և 2.3 կետերով սահմանված արտանետումների սահմանային թույլատրելի նորմաները կիրառվում են որպես ընդհանուր փոշու, քլորաջրածնի, ֆտորաջրածնի, ազոտի օքսիդի, ծծմբի դիօքսիդի և ընդհանուր օրգանական ածխածնի (մշտական չափումների դեպքում) միջին նորմաներ՝ օրական կտրվածքով, որպես միջին նորմաներ՝ ծանր մետաղների համար առնվազն 30 րոպե և առավելագույնը 8 ժամ տևողությամբ նմուշառման ժամանակահատվածի ընթացքում ու որպես միջին նորմաներ՝ դիօքսիդների և ֆուրանների համար առնվազն 6 ժամ և առավելագույնը 8 ժամ տևողությամբ՝ նմուշառման ժամանակահատվածի ընթացքում:

Բոլոր նորմաները ստանդարտացվում են 10 տոկոս թթվածնի պարունակության պայմաններում:

Կեսժամյա կտրվածքով միջին նորմաներն անհրաժեշտ են միայն օրական կտրվածքով՝ միջին նորմաները հաշվարկելու համար:

2.2. C – արտանետումների ընդհանուր սահմանային թույլատրելի նորմաներ (մգ/նխմ՝ բացի դիօքսիդից ու ֆուրանից) հետևյալ աղտոտող նյութերի համար

| Աղտոտող նյութ                                | C      |
|--|--------|
| Ընդհանուր փոշի/փոշու ընդհանուր արտանետումներ | 30     |
| Քլորաջրածին                                  | 10     |
| Ֆտորաջրածին                                  | 1      |
| Ազոտի օքսիդ                                  | 500[1] |
| Cd + Tl                                      | 0.05   |
| Մնդիկ  | 0.05   |
| Sb + As + Pb + Cr + Co + Cu + Mn + Ni + V    | 0.5    |
| Դիօքսիդներ և ֆուրան (նգ/նխմ)                 | 0.1    |

([1] Մինչև 2016 թվականի հունվարի 1-ը իրավասու մարմինը կարող է շեղումներ նախատեսել Լեպոլ համակարգի վառարանների և պտտվող երկար վառարանների համար սահմանված ազոտի օքսիդի արտանետումների սահմանային թույլատրելի նորմաներից, եթե թույլտվությամբ սահմանված ազոտի օքսիդի ընդհանուր արտանետումների սահմանային թույլատրելի նորմաները չեն գերազանցում 800 մգ/նխմ-ն;

- 2.3. C – արտանետումների ընդհանուր սահմանային թույլատրելի նորմաներ (մգ/նխմ) ծծմբի դիօքսիդի և ընդհանուր օրգանական ածխածնի համար

| Աղտոտիչ                     | C  |
|-----------------------------|----|
| Ծծմբի դիօքսիդ               | 50 |
| Ընդհանուր օրգանական ածխածին | 10 |

Իրավասու մարմինը կարող է շեղվել սույն կետով սահմանված արտանետումների սահմանային թույլատրելի նորմաներից, եթե ընդհանուր օրգանական ածխածնի կամ ծծմբի դիօքսիդի արտանետումները չեն առաջացել թափոնների վերականգնման հետևանքով:

- 2.4. C.- արտանետումների ընդհանուր սահմանային թույլատրելի նորմաներ՝ շմոլ գազի համար

Իրավասու մարմինը կարող է շմոլ գազի համար սահմանել արտանետումների սահմանային թույլատրելի նորմաներ

3. Հատուկ դրույթներ՝ թափոններ վերականգնող այրման կայանների մասով

- 3.1. Cproc-ը՝ որպես օրական կտրվածքով միջին նորմա (մգ/նխմ) վավեր է մինչև 82(5) հոդվածով սահմանված ամսաթիվը

Այրման կայանների ընդհանուր նոմինալ ջերմային հզորությունը որոշելու համար կիրառվում են 29 –րդ հոդվածով սահմանված միավորման կանոնները: Կեսժամյա կտրվածքով միջին նորմաներն անհրաժեշտ են միայն միջին նորմաներն օրական կտրվածքով հաշվարկելու համար:

Cproc պինդ վառելիքների համար՝ բացի կենսազանգվածից (O2 պարունակությունը՝ 6 տոկոս).

| Աղտոտող նյութեր | < 50 ՄՎտ | 50-100 ՄՎտ | 100 – 300 ՄՎտ | > 300 ՄՎտ |
|-----------------|----------|------------|---------------|-----------|
| Ծծմբի դիօքսիդ   | –        | 850        | 200           | 200       |
| Ազոտի օքսիդ     | –        | 400        | 200           | 200       |
| Փոշի            | 50       | 50         | 30            | 30        |

Կենսազանգվածի Cproc (O2 պարունակությունը՝ 6 տոկոս).)

| Աղտոտող նյութեր | < 50 ՄՎտ | 50-100 ՄՎտ | 100 – 300 ՄՎտ | > 300 ՄՎտ |
|-----------------|----------|------------|---------------|-----------|
| Ծծմբի դիօքսիդ   | –        | 850        | 200           | 200       |
| Ազոտի օքսիդ     | –        | 350        | 300           | 200       |
| Փոշի            | 50       | 50         | 30            | 30        |

Կենսազանգվածի Cproc (O2 պարունակությունը՝ 3 տոկոս.)

| Աղտոտող նյութեր | < 50 ՄՎտ | 50-100 ՄՎտ | 100 – 300 ՄՎտ                              | > 300 ՄՎտ |
|-----------------|----------|------------|--|-----------|
| Ծծմբի դիօքսիդ   | –        | 850        | 400-200<br>(գծային նվազեցում՝ 100–300 ՄՎտ) | 200       |
| Ազոտի օքսիդ     | –        | 400        | 200  | 200       |
| Փոշի            | 50       | 50         | 30   | 30        |

3.2. Cproc–ը՝ որպես օրական կտրվածքով միջին նորմա (մգ/նխմ) վավեր է 82(6) հոդվածով սահմանված օրվանից

Այրման կայանների ընդհանուր նոմինալ ջերմային հզորությունը որոշելու համար կիրառվում են 29 –րդ հոդվածով սահմանված միավորման կանոնները: Կեսժամյա կտրվածքով միջին նորմաներն անհրաժեշտ են միայն միջին նորմաները օրական կտրվածքով հաշվարկելու համար:

3.2.1. Cproc 30(2) հոդվածում նշված այրման կայանների համար՝ բացի գազատուրբիններից և գազով շահագործվող կայաններից Cproc պինդ վառելիքների համար՝ բացի կենսազանգվածից (O2 պարունակությունը՝ 6 տոկոս).

| Աղտոտող նյութեր | < 50 ՄՎտ | 50-100 ՄՎտ                       | 100 – 300 ՄՎտ | > 300 ՄՎտ |
|-----------------|----------|----------------------------------|---------------|-----------|
| Ծծմբի դիօքսիդ   | –        | 400 տորֆի համար 300              | 200           | 200       |
| Ազոտի օքսիդ     | –        | 300 մանրացված լիզնիտի համար. 400 | 200           | 200       |
| Փոշի            | 50       | 30                               | 25            | 20        |



|  |  |  |             |  |
|--|--|--|-------------|--|
|  |  |  | տորֆի համար |  |
|--|--|--|-------------|--|

Կենսազանգվածի Cproc (O2 պարունակությունը՝ 6 տոկոս).

| Աղտոտող նյութեր | < 50 ՄՎտ | 50-100 ՄՎտ | 100 – 300 ՄՎտ | > 300 ՄՎտ |
|-----------------|----------|------------|---------------|-----------|
| Ծծմբի դիօքսիդ   | –        | 200        | 200           | 200       |
| Ազոտի օքսիդ     | –        | 300        | 250           | 200       |
| Փոշի            | 50       | 30         | 20            | 20        |

Կենսազանգվածի Cproc (O2 պարունակությունը՝ 3 տոկոս.)

| Աղտոտող նյութեր | < 50 ՄՎտ | 50-100 ՄՎտ | 100 – 300 ՄՎտ | > 300 ՄՎտ |
|-----------------|----------|------------|---------------|-----------|
| Ծծմբի դիօքսիդ   | –        | 350        | 250           | 200       |
| Ազոտի օքսիդ     | –        | 400        | 200           | 150       |
| Փոշի            | 50       | 30         | 25            | 20        |

3.2.2. Cproc 30(3) հոդվածում նշված այրման կայանների համար՝ բացի գազատուրբիններից և գազով շահագործվող կայաններից

Cproc պինդ վառելիքների համար՝ բացի կենսազանգվածից (O2 պարունակությունը՝ 6 տոկոս).

| Աղտոտող նյութեր | < 50 ՄՎտ | 50-100 ՄՎտ                    | 100 – 300 ՄՎտ  | > 300 ՄՎտ   |
|-----------------|----------|-------------------------------|--|---|
| Ծծմբի դիօքսիդ   | –        | 400<br>տորֆի<br>համար.<br>300 | 200<br>տորֆի համար. 300,<br>պսեվդոհեղուկացված<br>շերտի այրման<br>դեպքում 250 | 150<br>շրջանառվող կամ<br>ճնշման տակ գտնվող<br>պսեվդոհեղուկացված<br>շերտի կամ տորֆի<br>այրման դեպքում՝<br>բոլոր<br>պսեվդոհեղուկացված<br>շերտերի այրման<br>համար. 200 |
| Ազոտի օքսիդ     | –        | 300<br>տորֆի<br>համար         | 200  | 150<br>մանրացված լիգնիտի<br>այրման համար. 200   |

|      |    |    |    |                      |
|------|----|----|----|----------------------|
| Փոշի | 50 | 20 | 20 | 10<br>տորքի համար 20 |
|------|----|----|----|----------------------|

Կենսազանգվածի Cproc (O2 պարունակությունը՝ 6 տոկոս).

| Աղտոտող նյութեր | < 50 ՄՎտ | 50-100 ՄՎտ | 100 – 300 ՄՎտ | > 300 ՄՎտ |
|-----------------|----------|------------|---------------|-----------|
| Ծծմբի դիօքսիդ   | –        | 200        | 200           | 150       |
| Ազոտի օքսիդ     | –        | 250        | 200           | 150       |
| Փոշի            | 50       | 20         | 20            | 20        |

Կենսազանգվածի Cproc (O2 պարունակությունը՝ 3 տոկոս.)

| Աղտոտող նյութեր | < 50 ՄՎտ | 50-100 ՄՎտ | 100 – 300 ՄՎտ | > 300 ՄՎտ |
|-----------------|----------|------------|---------------|-----------|
| Ծծմբի դիօքսիդ   | –        | 350        | 200           | 150       |
| Ազոտի օքսիդ     | –        | 300        | 150           | 100       |
| Փոշի            | 50       | 20         | 20            | 10        |

- 3.3. C — արտանետումների ընդհանուր սահմանային թույլատրելի նորմաներ ծանր մետաղների համար՝ արտահայտված որպես միջին նորմաներ՝ առնվազն 30 բույս և առավելագույնը 8 ժամ տևողությամբ նմուշառման ժամանակահատվածի ընթացքում (O2 պարունակությունը՝ պինդ վառելիքներում 6 տոկոս և 3 տոկոս՝ հեղուկ վառելիքներում)

| Աղտոտող նյութեր                           | C    |
|---|------|
| Cd + Tl                                   | 0.05 |
| Hg (սնդիկ)                                | 0.05 |
| Sb + As + Pb + Cr + Co + Cu + Mn + Ni + V | 0.5  |

- 3.4. C — արտանետումների ընդհանուր սահմանային թույլատրելի նորմաներ դիօքսիդի և ֆուրանի համար՝ արտահայտված որպես միջին նորմաներ առնվազն 6 բույս և առավելագույնը 8 ժամ տևողությամբ նմուշառման ժամանակահատվածի ընթացքում (O2 պարունակությունը՝ 6 տոկոս՝ պինդ վառելիքներում և 3 տոկոս՝ հեղուկ վառելիքներում)

| Աղտոտող նյութ    | C    |
|------------------|------|
| Դիօքսիդ և ֆուրան | 0.01 |

4. Հատուկ դրույթներ թափոնների այրման գործարանների մասով, որոնք չեն կարգավորվում սույն մասի 2-րդ և 3-րդ կետերով

4.1. C — արտանետումների ընդհանուր թույլատրելի սահմանային նորման դիօքսինի և ֆուրանի համար առնվազն 6 րոպե և առավելագույնը 8 ժամ տևողությամբ՝ նմուշառման ժամանակահատվածի ընթացքում:

| Աղտոտող նյութ    | C    |
|------------------|------|
| Դիօքսին և ֆուրան | 0.01 |

4.2. C – արտանետումների ընդհանուր թույլատրելի սահմանային նորմաները ծանր մետաղների համար առնվազն 30 րոպե և առավելագույնը 8 ժամ տևողությամբ՝ նմուշառման ժամանակահատվածի ընթացքում

| Աղտոտող նյութեր | C    |
|-----------------|------|
| Cd + Tl         | 0.05 |
| Hg (սնդիկ)      | 0.05 |

#### ՄԱՍ 5

#### Արտանետումների թույլատրելի սահմանային նորմաներ արտանետվող գազերի մաքրումից կեղտաջրերի հեռացման դեպքում

| Աղտոտող նյութեր  | Արտանետումների թույլատրելի սահմանային նորմաներ չֆիլտրացված նմուշների համար (մգ/լ՝ բացի դիօքսինից և ֆուրանից) |        |
|--|--|--------|
|  | (95%)  | (100%) |
| 1. Ընդհանուր կախյալ նյութեր, ինչպես սահմանված է 91/271/ԵՏՀ հրահանգի I հավելվածում   (95 %)   (100 %) | 30   |        |
| 2.Սնդիկ և դրա միացությունները՝ արտահայտված սնդիկով (Hg)  | 0.03   |        |
| 3.Կադմիում և դրա միացությունները՝ արտահայտված կադմիումով (Cd)  | 0.05   |        |
| 4.Թալիում և դրա միացությունները՝ արտահայտված թալիումով (Tl)  | 0.05   |        |
| 5.Արսենիում և դրա միացությունները՝ արտահայտված արսենիումով (As)                                      | 0.15   |        |
| 6.Կապար և դրա միացությունները՝ արտահայտված կապարով (Pb)  | 0.2  |        |

|   |          |
|---|----------|
| 7.Քրոմ և դրա միացությունները՝ արտահայտված քրոմով (Cr)   | 0.5      |
| 8.Պղինձ և դրա միացությունները՝ արտահայտված պղնձով (Cu)  | 0.5      |
| 9.Նիկել և դրա միացությունները՝ արտահայտված նիկելով (Ni) | 0.5      |
| 10.Ցինկ և դրա միացությունները՝ արտահայտված ցինկով (Zn)  | 1.5      |
| 11. Դիօքսիդ և ֆուրան                                    | 0.3 նգ/1 |

## ՄԱՍ 6

### Արտանետումների դիտանցումը

1. Չափման տեխնոլոգիաները
  - 1.1. Մթնոլորտը և օդն աղտոտող նյութերի կոնցենտրացիայի որոշման համար չափումները պետք է անցկացվեն ներկայացուցչական կարգով:
  - 1.2. Բոլոր աղտոտող նյութերի, այդ թվում՝ դիօքսիդի և ֆուրանի նմուշառումն ու լաբորատոր հետազոտությունը, ինչպես նաև չափման ավտոմատացված համակարգերի որակի ապահովումն ու այդ համակարգերի չափաբերման էտալոնային չափման մեթոդները պետք է անցկացվեն ՍԵԿ ստանդարտներին համապատասխան: Եթե ՍԵԿ ստանդարտներն առկա չեն, ապա կիրառվում են ISO ստանդարտները, ազգային կամ միջազգային ստանդարտները, որոնցով պետք է ապահովվի գիտականորեն համարժեք կերպով ստացված տվյալների տրամադրումը: Չափման ավտոմատացված համակարգերը պետք է ենթարկվեն ստուգման առնվազն տարին մեկ անգամ՝ էտալոնային մեթոդներով անցկացվող զուգահեռ չափումների միջոցով:
  - 1.3. Արտանետումների սահմանային թույլատրելի նորմաների համաձայն՝ մեկ չափված արդյունքի 95% վստահության միջակայքի արժեքը չպետք է գերազանցի արտանետումների սահմանային թույլատրելի նորմաների հետևյալ տոկոսները.

|                               |     |
|-------------------------------|-----|
| Շմոլ գազ                      | 10% |
| Ծծմբի երկօքսիդ                | 20% |
| Ազոտի երկօքսիդ                | 20% |
| Փոշու ընդհանուր արտանետումներ | 30% |
| Ընդհանուր օրգանական ածխածին   | 30% |

|             |     |
|-------------|-----|
| Քլորաջրածին | 40% |
| Ֆտորաջրածին | 40% |

Դեպի մթնոլորտ և ջուր արտանետումների պարբերական չափումները պետք է անցկացվեն 1.1 և 1.2 կետերի համաձայն:

2 . Օդն աղտոտող նյութերին վերաբերող չափումները

2.1. Պետք է իրականացվեն օդն աղտոտող նյութերի հետևյալ չափումները.

ա) հետևյալ նյութերի մշտական չափումները. Ազոտի օքսիդ (եթե արտանետումների սահմանային թույլատրելի նորմաները սահմանվել են), շմոլ գազ, ընդհանուր փոշի, ընդհանուր օրգանական ածխածին, քլորաջրածին, ֆտորաջրածին, ծծմբի դիօքսիդ.

բ) հետևյալ տեխնոլոգիական պրոցեսի ցուցանիշների մշտական չափումները. ջերմաստիճանը (այրման խցիկի ներքին պատի կամ իրավասու մարմնի կողմից նշանակված այլ կետի մոտ), թթվածնի կոնցենտրացիան, ճնշումը, ջերմաստիճանը և արտանետվող գազերում ջրի գոլորշիների բաղադրությունը.

գ) ծանր մետաղների և դիօքսիդի ու ֆուրանի տարեկան առնվազն երկու չափում. այնուամենայնիվ, շահագործման առաջին 12 ամիսների ընթացքում չափում պետք է անցկացվի առնվազն յուրաքանչյուր 3 ամիսը մեկ:

2.2. Մաքրման կայաններում կեղտաջրերի վերամշակման տևողությունը, ինչպես նաև արտանետվող գազերում նվազագույն ջերմաստիճանը և թթվածնի բաղադրությունը պետք է համապատասխան կերպով ստուգվեն առնվազն մեկ անգամ այն ժամանակ, երբ թափոնների այրման սարքը և թափոնների այրման գործարանը սկսում է շահագործվել և շահագործվում է շահագործման ամենաանբարենպաստ պայմաններում:

2.3. Ֆտորաջրածնի մշտական չափումները կարելի է չանցկացնել, եթե անցկացվում են աղաթթվի (քլորաջրածնի) մշակման փուլեր, որոնցով ապահովվում է աղաթթվի (քլորաջրածնի) արտանետումների սահմանային թույլատրելի նորմաների պահպանումը: Քլորաջրածնի արտանետումներն այդ դեպքում ենթարկվում են 2.1(գ) կետով սահմանված պարբերական չափումների:

2.4. Ջրի գոլորշիների բաղադրության մշտական չափումները պարտադիր չեն, եթե նմուշառված արտանետվող գազը չորացվում է՝ նախքան արտանետումների լաբորատոր հետազոտությունը:

2.5. Իրավասու մարմինը կարող է չպահանջել թափոնների այրման սարքերում կամ թափոնների այրման կայաններում անցկացնել աղաթթվի,

քլորաջրածնի և ծծմբի դիօքսիդի մշտական և 2.1(գ) կետով սահմանված պարբերական չափումներ կամ ցանկացած այլ չափում, եթե օպերատորը կարող է ապացուցել, որ այդ աղտոտիչների արտանետումները ոչ մի հանգամանքներում չեն կարող գերազանցել արտանետումների սահմանված սահմանային թույլատրելի նորմաները:

Իրավասու մարմինը կարող է չպահանջել մեկ ժամում 6 տոննայից պակաս արտադրողականություն ունեցող թափոնների այրման սարքերում կամ կայաններում անցկացնել ազոտի օքսիդի մշտական և 2.1(գ) կետով սահմանված պարբերական չափումներ, եթե համապատասխան թափոնների որակին, օգտագործվող տեխնոլոգիաներին և արտանետումների դիտանցման արդյունքներին առնչվող տեղեկությունների հիման վրա օպերատորը կարող է ապացուցել, որ ազոտի օքսիդի արտանետումները ոչ մի դեպքում չեն կարող գերազանցել արտանետումների սահմանված սահմանային թույլատրելի նորմաները:

2.6. Իրավասու մարմինը կարող է պահանջել յուրաքանչյուր 2 տարին մեկ անցկացնել ծանր մետաղների չափում և յուրաքանչյուր տարի դիօքսինի ու ֆուրանի չափում հետևյալ դեպքերում.

ա) թափոնների այրման կամ վերականգնման հետևանքով առաջացող արտանետումները ոչ մի դեպքում չեն գերազանցում արտանետումների սահմանային թույլատրելի նորմաների 50 տոկոսը,

բ) այրվող կամ վերականգնվող թափոնը՝ կազմված միայն ոչ վտանգավոր թափոնի որոշակի սորտավորված այրվող մասնիկներից, որոնք հարմար չեն վերամշակման կամ որոշակի հատկանիշները ներկայացնելու համար, և որը հետագայում նշվում է (գ) կետում նշված գնահատման հիման վրա,

գ) համապատասխան թափոնների որակին և արտանետումների դիտանցման արդյունքներին առնչվող տեղեկությունների հիման վրա օպերատորը կարող է ապացուցել, որ ծանր մետաղների և դիօքսինի ու ֆուրանի արտանետումները ոչ մի դեպքում չեն կարող գերազանցել արտանետումների սահմանված սահմանային թույլատրելի նորմաները:

2.7. Չափումների արդյունքները պետք է ստանդարտացվեն 3-րդ մասում նշված թթվածնի ստանդարտ կոնցենտրացիայի պայմաններում կամ հաշվարկվեն 4 -րդ մասին համապատասխան՝ կիրառելով 7-րդ մասում նշված բանաձևը:

Եթե թափոնն այրվում է կամ վերականգնվում թթվածնով հարուստ միջավայրում, չափումների արդյունքները կարող են ստանդարտացվել թթվածնի այնպիսի պարունակության պայմաններում, որը սահմանվել է իրավասու մարմնի կողմից՝ արտացոլելով յուրաքանչյուր դեպքի հատուկ հանգամանքները:

Եթե վտանգավոր թափոններ մշակող թափոնների այրման սարքերում կամ կայաններում աղտոտող նյութերի արտանետումները նվազեցվում են

արտանետվող գազերի մշակման միջոցով, ապա առաջին ենթապարբերությամբ նախատեսված՝ թթվածնի պարունակության մասով ստանդարտացումը պետք է իրականացվի, միայն եթե թթվածնի պարունակությունը՝ չափված միևնույն ժամանակահատվածի ընթացքում, որում այն չափվել է նաև համապատասխան աղտոտող նյութի մեջ, գերազանցում է թթվածնի պարունակության համապատասխան ստանդարտը:

3. Ջուրն աղտոտող նյութերին վերաբերող չափումներ

3.1. Կեղտաջրերը մաքրելիս պետք է անցկացվեն հետևյալ չափումները.

ա) pH-ի, ջերմաստիճանի և հոսքի մշտական չափումներ,

բ) ընդհանուր կախյալ նյութերի՝ տեղում անցկացվող չափումները կամ 24-ժամյա ժամանակահատվածի ընթացքում հոսքի հետ համամասնորեն վերցվող ներկայացուցչական նմուշի չափում,

գ) առնվազն ամիսը մեկ անգամ Hg, Cd, Tl, As, Pb, Cr, Cu, Ni և Zn-ի հեռացման՝ հոսքի հետ համամասնորեն վերցվող ներկայացուցչական նմուշի չափում,

դ) առնվազն 6 ամիսը մեկ անգամ դիօքսինի և ֆուրանի չափումներ շահագործման առաջին 12 ամիսների ընթացքում չափում պետք է անցկացվի առնվազն յուրաքանչյուր 3 ամիսը մեկ:

3.2. Եթե արտանետվող գազերի մաքրումից առաջացող կեղտաջրերը տեղում մշակվում են այլ աղբյուրներից առաջացող կեղտաջրերի հետ, օպերատորը պետք է չափումներ անի.

ա) արտանետվող գազերի մաքրման գործընթացներից առաջացող կեղտաջրերի հոսքի վրա՝ մինչև այն ընդհանուր կեղտաջրերի մաքրման կայան մտցնելը,

բ) կեղտաջրերի այլ հոսքի կամ հոսքերի վրա՝ մինչև այն ընդհանուր կեղտաջրերի մաքրման կայան մտցնելը,

գ) մշակումից հետո կեղտաջրերի վերջնական հեռացման ժամանակ թափոնների այրման սարքից կամ թափոնների այրման կայանից:

## ՄԱՍ 7

### **Թթվածնի կոնցենտրացիայի ստանդարտ տոկոսի առկայության պայմաններում արտանետումների կոնցենտրացիան հաշվելու բանաձև**

E

=

21 – O

21 – O

× E

ES = թթվածնի կոնցենտրացիայի ստանդարտ տոկոսի առկայության պայմաններում արտանետումների հաշված կոնցենտրացիա

EM = արտանետումների չափված կոնցենտրացիա

OS = թթվածնի ստանդարտ կոնցենտրացիա

OM = թթվածնի չափված կոնցենտրացիա

## ՄԱՍ 8

### **Արտանետումների սահմանային նորմաների հետ համապատասխանության գնահատումը**

1. Դեպի մթնոլորտ արտանետումների սահմանային թույլատրելի նորմաները
  - 1.1. Դեպի մթնոլորտ արտանետումների սահմանային թույլատրելի նորմաները համարվում են պահպանված, եթե.
    - ա) օրական կտրվածքով ոչ մի միջին նորմա չգերազանցի 3-րդ մասի 1.1 կետով, 4-րդ մասով կամ 4-րդ մասի համաձայն հաշված արտանետումների սահմանային միջին նորմաները,
    - բ) կեսժամյա կտրվածքով ոչ մի միջին չգերազանցի 3-րդ մասի 1.2 կետի տակ նշված աղյուսակի Ա սյունակով սահմանված արտանետումների սահմանային թույլատրելի նորմաները կամ, անհրաժեշտության դեպքում, կեսժամյա կտրվածքով արտանետումների սահմանային թույլատրելի նորմաների 97 տոկոսը չգերազանցի 3-րդ մասի 1.2 կետի տակ նշված աղյուսակի Բ սյունակով սահմանված արտանետումների սահմանային թույլատրելի նորմաները,
    - գ) դիօքսիինի և ֆուրանի համար սահմանված ոչ մի միջին նորմա նմուշառման ժամանակահատվածի ընթացքում չգերազանցի 3-րդ մասի 1.3 և 1.4 կետերով ու 4-րդ մասով կամ 4-րդ մասի համաձայն հաշված արտանետումների սահմանային միջին նորմաները,
  - դ) շմոլ գազի (CO) համար.
    - i) թափոնների այրման կայանների դեպքում.
      - օրական կտրվածքով միջին նորմաների առնվազն 97 տոկոսը տարվա ընթացքում չգերազանցեն 3-րդ մասի 1.5(ա) կետով սահմանված արտանետումների սահմանային թույլատրելի նորմաները, և
      - 24-ժամյա ժամանակահատվածի ընթացքում 10 րոպե կտրվածքով բոլոր միջին նորմաների առնվազն 95 տոկոսը կամ նույն ժամանակահատվածի ընթացքում կեսժամյա կտրվածքով բոլոր միջին նորմաները չգերազանցեն 3-րդ մասի 1.5(բ) և (գ) կետերով սահմանված արտանետումների սահմանային թույլատրելի միջին նորմաները. թափոնների այրման այն կայանների դեպքում, որտեղ այրման հետևանքով առաջացած գազի ջերմաստիճանը բարձրանում է առնվազն 1100 °C առնվազն երկու վայրկյանում, անդամ պետությունները 10 րոպե



կտրվածքով միջին նորմաների նկատմամբ կարող են կիրառել 7-օրյա տևողությամբ գնահատման ժամանակահատված,

ii) թափոնների այրման սարքերի դեպքում. պահպանվում են 4-րդ մասի դրույթները:

1.2. Կեսժամյա կտրվածքով միջին նորմաները և 10 րոպե կտրվածքով միջին նորմաները պետք է սահմանվեն չափված արժեքներից շահագործման արդյունավետ ժամանակի ընթացքում (բացառությամբ գործարկման և պարապուրդի ժամանակահատվածների, եթե ոչ մի թափոն չի այրվում) 6-րդ մասի 1.3 կետով սահմանված վստահության միջակայքի արժեքը հանելուց հետո: Օրական կտրվածքով միջին նորմաները պետք է սահմանվեն այդ հաստատված միջին նորմաներից:

Թույլատրելի օրական միջին նորմաները հաշվարկելու համար մշտական չափման համակարգի անսարքությունների հետևանքով կամ դրանց վերացման նպատակով մեկ օրվա ընթացքում դիտարկումները չպետք է ընդմիջվեն ավելի, քան երեսուն րոպեանոց հինգ դադարներով: Մշտական չափման համակարգի անսարքությունների հետևանքով կամ դրանց վերացման նպատակով մեկ տարվա ընթացքում դիտարկումները չպետք է ընդհատվեն ավելի, քան օրական միջին տասը նորմաների հաշվարկման համար սահմանված ժամկետով:

1.3. Նմուշառման ժամանակահատվածի ընթացքում միջին նորմաները և ֆտորաջրածնի, աղաթթվի և ծծմբի դիօքսիդի պարբերաբար չափումների միջին նորմաները պետք է սահմանվեն 45(1)(ե), 48(3) հոդվածների և 6-րդ մասի 1-ին կետի պահանջների համաձայն:

2. Դեպի ջուր արտանետումների սահմանային թույլատրելի նորմաները

Դեպի ջուր արտանետումների սահմանային թույլատրելի նորմաները համարվում են պահպանված, եթե.

ա) ընդհանուր կախյալ նյութերի դեպքում՝ չափված արժեքների 95 և 100 տոկոսները չեն գերազանցում 5-րդ մասով սահմանված՝ համապատասխան արտանետումների սահմանային թույլատրելի նորմաները,

բ) ծանր մետաղների դեպքում՝ (Hg, Cd, Tl, As, Pb, Cr, Cu, Ni և Zn) տարեկան ոչ ավելի, քան մեկ չափում գերազանցի 5-րդ մասով սահմանված արտանետումների սահմանային թույլատրելի նորմաները, կամ եթե անդամ պետությունը տարեկան նախատեսում է ավելի քան 20 նմուշ, ապա այդ նմուշների 5 տոկոսից ոչ ավելին գերազանցում են 5-րդ մասով սահմանված արտանետումների սահմանային թույլատրելի նորմաները,

գ) դիօքսիդի և ֆուրանի դեպքում՝ չափման արդյունքները չեն գերազանցում 5-րդ մասով սահմանված արտանետումների սահմանային թույլատրելի նորմաները:

-----

## ՀԱՎԵԼՎԱԾ VII

### Օրգանական լուծիչներ օգտագործող կառուցվածքներին և գործունեություններին վերաբերող տեխնիկական դրույթներ

#### ՄԱՍ 1

#### Գործունեություն

1. Հետևյալ կետերից յուրաքանչյուրում գործունեությունը ներառում է սարքավորման, այլ ոչ թե արտադրանքների մաքրում, եթե այլ բան չի նախատեսվում:
2. Սոսնձի շերտ  
Ցանկացած գործունեություն, որի դեպքում մակերես է սոսնձվում՝ բացի տպագրական գործի հետ կապված սոսնձի շերտից և մակաշերտումից:
3. Երեսապատման աշխատանքներ  
Ցանկացած գործողություն, որի ընթացքում ծածկույթի չընդհատվող թաղանթի մեկ կամ մի քանի շերտ է դրվում.
  - ա) հետևյալ փոխադրամիջոցներից որևէ մեկի վրա.
    - i) ավտոմեքենաների և դրանց կցասայլերի, ինչպես նաև այդպիսի փոխադրամիջոցների համար նախատեսված համակարգերի, մասերի և առանձին տեխնիկական տարրերի հաստատման համար շրջանակ սահմանող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2007 թվականի սեպտեմբերի 25-ի 2007/46/ԵՀ հրահանգով [1] սահմանված՝ M1 կատեգորիային և N1 կատեգորիային պատկանող նոր ավտոմեքենաներ այնքանով, որքանով դրանք ներկվում են նույն օբյեկտում, որտեղ ներկվում են M1 կատեգորիային պատկանող փոխադրամիջոցները,
    - ii) 2007/46/ԵՀ հրահանգով սահմանված՝ որպես N2 և N3 կատեգորիաներին պատկանող բեռնատար ավտոմեքենաների խցիկներ, որոնք վարորդի կամ տեխնիկական սարքավորումների համար ծառայում են որպես օթևան,
    - iii) 2007/46/ԵՀ հրահանգով սահմանված՝ որպես N1, N2 և N3 կատեգորիաներին պատկանող ֆուրգոններ ու բեռնատարներ, սակայն ոչ բեռնատար ավտոմեքենաների խցիկներ,
    - iv) 2007/46/ԵՀ հրահանգով սահմանված՝ որպես M2 և M3 կատեգորիաներին պատկանող փոխադրամիջոցներ,
    - v) O1, O2, O3 և O4 կատեգորիաներով ու 2007/46/ԵՀ հրահանգով սահմանված կցասայլեր,
  - բ) մետաղյա և պլաստմասսայից մակերեսներ, այդ թվում՝ օդանավերի, նավերի, գնացքների մակերեսներ,

- գ) փայտյա մակերեսներ,
- դ) տեքստիլով, կտորով, ժապավենով և թղթով պատված մակերեսներ,
- ե) կաշի:

Երեսապատման աշխատանքները չեն ներառում ներկվող մակերեսների երեսապատում մետաղներով՝ էլեկտրաֆորեզ կամ քիմիական մեթոդներով: Եթե երեսապատման աշխատանքը ներառում է այնպիսի գործողություն, որի ընթացքում միևնույն առարկան ներկվում է ցանկացած մեթոդով, ապա ներկման այդ աշխատանքը համարվում է երեսապատման աշխատանքի մի մաս: Այդուհանդերձ, որպես առանձին գործունեություն իրականացվող, երեսապատման աշխատանքները ներառված չեն, սակայն կարող են կարգավորվել սույն Հրահանգի V գլխով, եթե ներկման աշխատանքը մտնում է դրա կարգավորման շրջանակի մեջ:

4. Գլանափաթեթային երեսապատում

Ցանկացած աշխատանք/գործողություն, որի ընթացքում տեղի է ունենում գլանափաթեթային պողպատի, չժանգոտվող պողպատի, պաշտպանիչ շերտով պատված պողպատի, պղնձի համաձուլվածքի կամ ալյումինե ժապավենի՝ թաղանթագոյացնող կամ լամինատե ծածկույթով պատման շարունակական/չընդհատվող գործընթացը:

5. Չոր մաքրում

Արդյունաբերական կամ առևտրային ցանկացած գործունեություն, որի իրականացման ընթացքում կայանքում օգտագործվում են ցնդող օրգանական միացություններ՝ հագուստների, ֆուրնիտուրայի և նմանատիպ սպառողական իրերի մաքրման համար՝ բացի տեքստիլ ու հագուստի արտադրությունում հետքերը ձեռքով հանելուց:

6. Կոշկեղենի արտադրություն

Կոշկեղենի կամ դրա մասերի արտադրություն:

7. Յուղելու խառնուրդների, լաքերի, թանաքների և սոսինձների արտադրություն

Վերոհիշյալ վերջնական և նույն վայրում արտադրվող միջանկյալ արտադրանքների արտադրություն՝ պիգմենտներ, խեժեր և հարակցանյութեր օրգանական լուծույթների կամ այլ նյութերի հետ խառնելու միջոցով, այդ թվում՝ մասնատման ու նախնական մասնատման

աշխատանքներ, մածուցիկության և երանգի համապատասխանեցում ու վերջնական արտադրանքն իր տարայի մեջ լցնելու գործողություններ:

8. Դեղագործական արտադրանքների արտադրություն

Դեղագործական արտադրանքների քիմիական սինթեզը, ֆերմենտացումը, լուծամզումն ու բաղադրության վերջնական որոշում և, միևնույն վայրում արտադրման դեպքում, միջանկյալ արտադրանքների արտադրություն:

9. Տպագրություն

Տեքստիլ և (կամ) պատկերների վերարտադրման ցանկացած գործողություն, որի ընթացքում պատկերի կրիչի օգտագործման միջոցով թանաքն անցնում է ցանկացած տեսակի մակերեսի վրա: Այն ներառում է լաքապատման, երեսապատման և մակաշերտման (լամինացման) մեթոդներ: Այդուհանդերձ, V գլխով կարգավորվում են միայն հետևյալ ենթապրոցեսները.

ա) անիլինաներկերով տպագրություն՝ տպագրական պրոցես՝ ռետինե կաղապարների կամ էլաստիկ լուսապոլիմերի օգտագործմամբ, որի դեպքում տպագրական հատվածը գտնվում է ոչ տպագրական հատվածի/մակերեսի վերևում,

